

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈՔԻ ՍԱՖԱՐՅԱՆ

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԳՈՒԹՅԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ատենախոսություն

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բաբկենի Բոստանջյան

ԵՐԵՎԱՆ-2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	3
---------------	---

ԳԼՈՒԽ 1. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության էությունը և դրա դասակարգման չափանիշները.....	9
1.2. Փոքր և միջին ձեռնարկատիրության դերը տնտեսության զարգացման գործում.....	20
1.3 Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության տնտեսական հիմքերը.....	36

ԳԼՈՒԽ 2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի վիճակը և զարգացման միտումները.....	46
2.2. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության հիմնական ուղղությունները և դրա արդյունավետության վրա ազդող գործոնները.....	59
2.3. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության միջազգային փորձը.....	68

ԳԼՈՒԽ 3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության բարելավման հիմնական մոտեցումները.....	82
3.2 Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության հարկային լծակների արդյունավետության բարձրացման ուղիները	99

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	111
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	122

ԱՌԱՋԱԲԱՆ

Շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման կարևոր բաղկացուցիչներից է հանդիսանում փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ), որի աջակցության ուղղությամբ պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը տնտեսական զարգացման ներկա փուլում հրամայական պահանջ է: Տվյալ խնդրի արդյունավետ լուծումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությանն ապահովել սոցիալ-տնտեսական կայուն զարգացում և անհրաժեշտ նախադրյալներ ձևավորել հասարակական բարեկեցության բարձրացման համար:

ՓՄՁ ոլորտը հանդիսանում է շուկայական տնտեսության առանցքային ինստիտուտներից, որն իրենից ներկայացնում է կարևորագույն ռազմավարական ռեսուրս և ի վիճակի է ինովացիոն զարգացման միջոցով ապահովել տնտեսության արդիականացում ու սոցիալ-տնտեսական զարգացում: ՓՄՁ ոլորտն իրենից ներկայացնում է հիմնականում տեղական շուկաներում գործող և անմիջականորեն ապրանքների ու ծառայությունների սպառողների հետ կապված սուբյեկտների բազմաճյուղ ցանց, որն իր փոքր չափերի, տեխնոլոգիական և կառավարչական ճկունության շնորհիվ կարողանում է ժամանակին արձագանքել շուկայական կոնյուկտուրայի փոփոխություններին: Նման կարևոր դերակատարությամբ հանդերձ, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտը դեռևս չի գտնվում ինստիտուցիոնալ զարգացման բավարար մակարդակում, ինչը ենթադրում է այդ ուղղությամբ համալիր քաղաքականության մշակում և հետևողական իրականացում:

Ժամանակակից ձեռնարկատիրությունը պետք է իրենից ներկայացնի տնտեսավարման մի այնպիսի ձև, որին բնութագրական կլինեն ինովացիոն կողմնորոշումը, տարբեր աղբյուրներից հավաքագրվող ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և առկա հնարավորությունների լիարժեք օգտագործումը: Այդ գործում առանձնահատուկ դեր ունի ՓՄՁ ոլորտը, որն իրեն բնորոշ առավելությունների շնորհիվ կարող է լավագույնս լուծել նման խնդիրը: Բնականաբար, դա ենթադրում է

տվյալ ոլորտի զարգացման և բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ միջավայրի և նախադրյալների ձևավորում, որում առանցքային մասնակցություն պետք է ունենա պետությունը:

ՓՄՁ ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծումը հանդիսանում է պետության կարևոր առաջնահերթություններից, ինչն, առաջին հերթին, ենթադրում է տվյալ ոլորտի պետական աջակցության արդյունավետ և գործուն համակարգի ստեղծում: Չնայած Հայաստանի Հանրապետությունում վերջինիս ֆորմալ գոյությանը, այդուհանդերձ, այն դեռևս չի կարողանում լիարժեք լուծել իր առջև դրված խնդիրները, ինչի մասին են վկայում հանրապետության ՓՄՁ ոլորտի վերջին տարիներին ցուցանիշները:

Արենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում ՓՄՁ զարգացման հետ կապված հիմնահարցերը ձեռք են բերել կարևոր նշանակություն մի շարք պատճառներով պայմանավորված: Առաջին, գնալով աճում է ՓՄՁ ոլորտի սոցիալ-տնտեսական ազդեցությունը հասարակական զարգացման և առաջընթացի վրա: Համաշխարհային փորձը վկայում է, որ այն կարող է արդյունավետ կերպով նպաստել բնակչության զբաղվածության ապահովմանը, սոցիալական խնդիրների լուծմանը, տնտեսության մենաշնորհացման դրսևորումների զսպմանը և մրցակցության խորացմանը, ինչը շուկայի զարգացման գրավական է հանդիսանում:

Երկրորդ, նման կարևորությամբ հանդերձ, ՓՄՁ ոլորտը դեռևս աչքի է ընկնում իր ցածր արդյունավետությամբ ինչի հետևանքով այն չի նպաստում տնտեսության ինովացիոն զարգացմանը և նոր տեխնոլոգիաների յուրացմանը: Այն որոշակի հաջողություններ արձանագրում է հիմնականում առևտրի և սպասարկման ոլորտներում, ինչը նշանակում է, որ ՓՄՁ առավելությունները և հնարավորությունները երկրում դեռևս լիարժեք չեն օգտագործվում:

Երրորդ, շարունակում է բարձր մնալ ՓՄՁ ոլորտի կախվածությունը պետական ներդրումներից այն դեպքում, երբ բանկերը, ֆինանսավարկային կազմակերպությունները հակվածություն չեն ցուցաբերում տվյալ ոլորտի ֆինանսավորման առումով: Շարունակում են գոյություն ունենալ մի շարք

ադմինիստրատիվ խոչընդոտներ ՓՄՁ ոլորտի սուբյեկտների ձևավորման և գործունեության առումով:

Չորրորդ, չնայած ՓՄՁ ոլորտի պետական աջակցության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին, այն դեռևս աչքի չի ընկնում արդյունավետության բարձր մակարդակով, ինչի մասին են վկայում ոլորտում վերջին տարիներին արձանագրվող ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի ձևավորման առանձնահատկությունների բացահայտմանը՝ դրա վրա ազդող բազմաբնույթ գործոնների գնահատմանը, դրանցով պայմանավորված հիմնահարցերի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները զգալիորեն նպաստեցին տվյալ բնագավառում առկա հարաբերությունների կանոնակարգման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մեթոդաբանական և մեթոդական հիմքերի ստեղծմանը՝ Այդուհանդերձ՝ ներկայումս խիստ արդիական են այդ ոլորտի պետական աջակցության արդյունավետության բարձրացման հետ կապված հիմնախնդիրների համակողմանի վերլուծությանը և դրանց վրա ազդող գործոնների գնահատմանն ուղղված հետազոտությունները: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը՝ ինչով էլ պայմանավորված են թեմայի ***հրապրապությունն ու արդիականությունը***:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը շուկայական տնտեսության պայմաններում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ՓՄՁ էությունը և տնտեսագիտական բովանդակությունը, վերլուծել դրա գործունեության տնտեսական հիմքերը և նախադրյալները, դիտարկել տվյալ ոլորտի տեղը և դերը ժամանակակից տնտեսության պայմաններում,
- ուսումնասիրել ՓՄՁ պետական աջակցության ինստիտուցիոնալ մեխանիզմները և դրանց գործունեության առանձնահատկությունները շուկայական տնտեսության պայմաններում,

- վերլուծել ՓՄՁ պետական աջակցության համակարգի գործունեության միջազգային փորձը և գնահատել դրա կիրառման հնարավորությունները հանրապետությունում,
- ուսումնասիրել հանրապետությունում ՓՄՁ պետական աջակցության համակարգի առանձնահատկությունները և բացահայտել դրա արդյունավետության բարձրացման ոլորտում առկա հիմնախնդիրները,
- մշակել ՓՄՁ պետական աջակցության համակարգի կատարելագործմանը և ՓՄՁ սուբյեկտների ռեսուրսային ապահովվածության մակարդակի բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության ՓՄՁ ոլորտն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ ՓՄՁ պետական աջակցության համակարգը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:

Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ՝ կայանում են հետևյալում.

- ձեռնարկատիրական գործունեության տեսական հիմքերի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են ՓՄՁ ոլորտի զարգացման մակրոտնտեսական և կազմակերպա-իրավական նախադրյալները, մշակվել են հանրապետությունում

ՓՄՁ զարգացման ռազմավարական և մարտավարական ուղղությունները առաջիկա տարիների համար,

- հանրապետությունում ՓՄՁ ոլորտի գործունեության համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են առկա բացթողումները և թերությունները, ներկայացվել են լուծումներ պետական աջակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ, առաջարկվել է ՓՄՁ պետական աջակցության համակարգի գործունեության գնահատման ցուցանիշների և չափորոշիչների համախումբ,
- ՓՄՁ պետական աջակցության կատարելագործման նպատակով ներկայացվել են առաջարկություններ ֆինանսավարկային գործիքների կիրառման արդյունավետության բարձրացման և ոլորտում գործող սուբյեկտների ռեսուրսային ապահովվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ,
- մշակվել են առաջարկություններ սոցիալական բիզնեսով զբաղվող ՓՄՁ սուբյեկտներին հարկային արտոնությունների տրամադրման վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվել է տվյալ ոլորտի նկատմամբ հարկային բարենպաստ քաղաքականության իրականացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագիր:

Ատենախոսությունում քննարկված հիմնախնդիրներից շատերը Հայաստանի Հանրապետությունում ամբողջական ու համակարգված ուսումնասիրման չեն ենթարկվել և չեն կրկնում այլոց կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունները՝ որով էլ պայմանավորված է ստացված արդյունքների գիտական նորույթը:

ՓՄՁ պետական աջակցության համակարգի զարգացման հիմնահարցերը դիտարկվել են ընդհանուր տնտեսական քաղաքականության համալիրում՝ որի արդյունքում մշակված մոտեցումների գործնական կիրառումը, մեր կարծիքով, կընձեռի լայն հնարավորություններ ՓՄՁ ոլորտի զարգացման համար: Առաջարկված մոտեցումները հիմնված են հանրապետության տնտեսության մեջ վերջին տարիներին ձևավորված իրավիճակի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտված միտումների գնահատման վրա: Դրանց գործնական կիրառումը, մեր կարծիքով, թույլ

կտա հանրապետությունում ձևավորել այնպիսի միջավայր, որն առավելագույնս կնպաստի ՓՄՁ սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացման հետ կապված խնդիրների լուծմանը:

Աշխատանքի գործնական նշանակությունը: ՓՄՁ պետական աջակցության համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման, ՓՄՁ ոլորտի զարգացման և այդ ուղղությամբ պետական քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանում և Եվրասիա միջազգային համալսարանում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են 7 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 129 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԳԼՈՒԽ 1. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության էությունը և դրա դասակարգման չափանիշները

Շուկայական տնտեսության շարժիչ ուժերից է հանդիսանում ձեռնարկատիրության ոլորտը, որի դերը անգնահատելի է սոցիալ-տնտեսական բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման գործում: Իր կարևորությամբ պայմանավորված, այն գրեթե միշտ գտնվել է տարբեր հետազոտողների և մասնագետների ուշադրության կենտրոնում: Դրանով հանդերձ, պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ ձեռնարկատիրության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի վերաբերյալ միասնական և համընդհանուր սահմանում գոյություն չունի: Վերջինիս վկայություն կարելի է համարել ձեռնարկատիրության վերաբերյալ տարբեր մասնագետների տեսակետները, որոնք, իրենց նմանությամբ հանդերձ, այնուամենայնիվ, միմյանցից որոշակիորեն տարբերվում են: Տվյալ կատեգորիայի վերաբերյալ առաջին սահմանումներն առաջ են եկել դեռևս 18-րդ դարում, երբ 1725 թվականին Ռ. Կանտիլյոնը ձեռնարկատիրոջը ներայացրեց որպես «ռիսկի պայմաններում գործող անձ»:¹ Համաձայն նրա տեսակետի, ձեռնարկատերն անորոշ և չֆիքսված եկամուտներ ունեցող անձն է, ով նախապես հայտնի գներով ձեռք է բերում ապրանքներ դեռևս ոչ հայտնի գներով վաճառելու նպատակով: Դրան հետևեց 1797 թվականին Կ. Բոդոյի այն մեկնաբանությունը, ըստ որի «ձեռնարկատերը պատասխանատվություն է կրում ձեռնարկատիրական գործունեության համար և պլանավորում, վերահսկում և կազմակերպում է այդ գործունեությունը և տիրապետում ձեռնարկությանը»:² Իսկ Ժ. Բ. Սեյի տեսակետի համաձայն, «ձեռնարկատերը ցածր արտադրողականություն և քիչ եկամուտներ ունեցող ոլորտներից տնտեսական ռեսուրսները տեղափոխում է առավել

¹ Лапуста М. Предпринимательство. М. Инфра-М. 2008г.стр. 16

²Лапуста М. Предпринимательство. М.Инфра-М. 2008г.стр. 17

բարձր արտադրողականություն և շահութաբերություն ունեցող ոլորտներ»:³ Ըստ էության, կարող ենք արձանագրել, որ տվյալ պատմական ժամանակահատվածում ձեռնարկատիրության վերաբերյալ մեկնաբանություններն իրենց բովանդակային խորությամբ բավականաչափ մակերեսային էին և անդրադառնում էին տվյալ տնտեսագիտական կատեգորիայի առանձին ասպեկտների: Տնտեսագիտական մտքի զարգացմանը զուգընթաց ավելի խորքային բնույթ կրեցին նաև ձեռնարկատիրության վերաբերյալ տեսական ուսումնասիրությունները: Արդեն 20-րդ դարում մի շարք տնտեսագիտական հոսանքերի կողմից փորձ կատարվեց ներկայացնել ձեռնարկատիրության տնտեսագիտական բովանդակությունը, ինչի արդյունքում տարբեր մասնագետների կողմից տրվեցին դրա վերաբերյալ որոշակի սահմանումներ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ տնտեսական զարգացման այս փուլում արդեն ձեռնարկատիրության վերաբերյալ մեկնաբանություններում հիմնականում գերակայում էր նորարարության և ռիսկի՝ որպես դրա հիմնական բնութագրիչների դիտարկումը: Մասնավորապես, 1926 թվականին Յ. Շումպետերը ձեռնարկատիրոջը բնութագրեց որպես «նորարար, որը մշակում է նոր տեխնոլոգիական լուծումներ և իրականացնում դրանք»:⁴ Ռ. Դրուկերը ձեռնարկատիրոջը ներկայացնում է որպես «յուրաքանչյուր հնարավորություն առավելագույն օգտակարությամբ օգտագործող անձ»:⁵ Ռ. Խիզրիչը ձեռնարկատիրությունը սահմանում է որպես «արժեքայնությամբ օժտված ինչ որ նոր բանի ստեղծման գործընթաց, իսկ ձեռնարկատիրոջը՝ որպես անձ, ով իր ժամանակը և ուժերը ծախսում է դրա վրա, իր վրա կրելով ամբողջ ֆինանսական, հոգեբանական և սոցիալական ռիսկը, դրա դիմաց ստանալով փող և բավարարվածություն»:⁶ Ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, ձեռնարկատիրության տնտեսական բովանդակության վերաբերյալ մեկնաբանությունները բավականաչափ լայն են և բազմաբովանդակ: Այս տեսանկյունից, կարծում ենք, որ «ձեռնարկատիրություն» և «ձեռնարկատեր» հասկացությունների էվոլյուցիան պետք է դիտարկել հասարակական և տնտեսական

³Лапуста М. Предпринимательство. Инфра-М. М. 2008г.стр. 18

⁴Лапуста М. Предпринимательство. Инфра-М. М.2008г.стр. 11

⁵ Предпринимательство. Под ред. В. Горфинкеля, Г. Поляка. Юнити-Дана. М. 2010г. стр. 14

⁶ Предпринимательство. Под ред. В. Горфинкеля, Г. Поляка. Юнити-Дана М. 2010г. стр. 14

զարգացման տվյալ փուլի, ինչպես նաև տնտեսագիտական մտքի զարգացման համատեքստում: Մեր կարծիքով, ձեռնարկատիրության տակ պետք է հասկանալ ինքնակազմակերպման և ինքնաիրացման ուղղությամբ անձնական, կազմակերպական և համակարգային բնույթի գործընթացներ ինչպես նոր ձեռնարկությունների ստեղծման, այնպես էլ գործողների զարգացման նպատակով: Այս առումով, ձեռնարկությունն իրենից ներկայացնում է ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, ներդրումային, տեղեկատվական և այլն) համալիր միավորում դրա հիմնադիրների և կազմակերպիչների հնարավորությունների առավելագույնս ընդլայնման նպատակով՝ նրանց պահանջմունքների բավարարման համար:

Ըստ էության, գրեթե նույն խնդիրն առկա է նաև փոքր և միջին ձեռնարկատիրության հետ կապված: Ինչպես գիտական գրականության, այնպես էլ իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս գոյություն չունի «փոքր և միջին ձեռնարկատիրություն» հասկացության միասնական սահմանում: Առանձին հեղինակներ հավասարություն են դնում փոքր ձեռնարկատիրության և փոքր բիզնեսի միջև՝ որպես շուկայական տնտեսության կարևոր սուբյեկտների: Ընդ որում, գրեթե բոլոր հեղինակների կողմից հատկապես ընդգծվում է ՓՄՁ առանձնահատուկ նշանակությունը տնտեսության զարգացման գործում: Մասնավորապես, Յու. Կոչևրինը, ուսումնասիրելով ԱՄՆ-ում փոքր բիզնեսի զարգացման հիմնախնդիրները, հատկապես ընդգծում է դրա կարևոր դերակատարությունը հետպատերազմյան փուլում:⁷ Վ. Գրիբովի կարծիքով, փոքր ձեռնարկատիրությունը կարելի է դիտարկել որպես տնտեսական վարքագծի հատուկ ստեղծագործական տեսակ, որին բնութագրական են ձեռնարկատիրական ոգին և նախաձեռնողական ստեղծագործական գործունեությունը և որը միաժամանակ կապված է սահմանափակ թվով մարդկանց որոշակի ռիսկի հետ:⁸ Հատկանշական է, որ Պ. Դրուկերը համարում է, որ ձեռնարկատերը սեփական, նոր մանր բիզնես բացող անձն է:⁹ Մի շարք հեղինակների կարծիքով, փոքր բիզնեսը մանր և միջին ձեռնարկությունների համախումբ է, որոնք սահմանափակված են որոշակի իրավական նորմերով և խոշոր

⁷ Кочеврин Ю. Малый бизнес в США. Мысль. М. 1965г. стр 7-9

⁸ Грибов В. Менеджмент в малом бизнесе. Финансы и статистика. М. 2002 г. стр. 5

⁹ Друкер П. Рынок: как выйти в лидеры. Практика и принципы. М. 1992г. стр. 31

ձեռնարկատիրական կառույցների, ինչպես նաև պետական սեկտորի հետ միասին կազմում են միասնական ամբողջություն:¹⁰ Առանձին հեղինակներ փոքր և միջին ձեռնարկությունները դիտարկում են որպես ձեռնարկատիրության առաջատար սուբյեկտներ՝ նրանց վերապահելով գլխավոր դեր: Մանավորապես, Ս. Սմիրնովի կարծիքով փոքր բիզնեսը բաղկացած է մանր սեփականատերերի բազմաքանակ բանակից, որոնք որոշակիորեն պայմանավորում են երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական ուղեգիծը:¹¹ Իհարկե, միանշանակ չի կարելի ընդունել այն տեսակետը, որ փոքր և միջին բիզնեսն է որոշում երկրի քաղաքական զարգացման ուղեգիծը, սակայն անհերքելի է այն փաստը, որ տվյալ սեկտորը հանդիսանում է միջին խավի ձևավորման հիմնական նախադրյալներից մեկը, որն էլ, իր հերթին, պետության քաղաքական կայունության գրավական է: Միաժամանակ, փոքր և միջին ձեռնարկությունները շուկայական տնտեսավարման պայմաններում հանդիսանում են հասարակության տնտեսական կյանքի կազմակերպման ինքնուրույն և առավել տարածված ձևերից և զգալիորեն նպաստում են համախառն ներքին արդյունքի աճի և բնակչության զբաղվածության ապահովմանը: Համաձայն Մ. Լապուստայի և Յու. Ստարոստինի տեսակետի, փոքր և միջին ձեռնարկատիրություն է համարվում այն գործունեությունը, որն իրականացվում է օրենսդրորեն սահմանված չափանիշներին բավարարող շուկայական տնտեսության սուբյեկտների կողմից:¹² Գերմանացի տնտեսագետ Վ. Լիբերնիկելի կարծիքով, ինչպես յուրաքանչյուր տնտեսավարման համակարգ հնարավոր չէ պատկերացնել առանց խոշոր ձեռնարկությունների, այնպես էլ շուկայական տնտեսությունը՝ առանց փոքր և միջին ձեռնարկությունների:¹³

Փոքր և միջին ձեռնարկատիրությունն իրենից ներկայացնում է գործունեության տեսակ, որն իրականացվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից օրենսդրության պահանջներին համապատասխան և ուղղված է շահույթի ստացմանը: Միևնույն

¹⁰ Малые предприятия: организация, экономика, учет, налоги. Под ред. В. Горфинкеля, В. Швандара. Юнити. М. 2001г. стр. 3

¹¹ Смирнов С. Малое предпринимательство: общественная поддержка и содействие развитию. М. 1999г. стр. 10

¹² Лапуста М., Старостин Ю. Малое предпринимательство. Учебное пособие. Инфра-М. М. 2002г. стр. 5

¹³ Либерникель В. Укрепление конкурентоспособности малых и средних предприятий на международных рынках. Проблемы теории и практики управления. 1997г. N 5.

ժամանակ, այն ձեռնարկատիրության մյուս սուբյեկտների համեմատությամբ հարաբերականորեն ինքնուրույն է, գործում է սեփական ռիսկի վրա և կրում է լիակատար գույքային պատասխանատվություն:

Ակնհայտորեն, ՓՄՁ ոլորտի ուսումնասիրության, դրանում առկա հիմնախնդիրների ամբողջական բացահայտման և լուծման համար, նախ և առաջ, անհրաժեշտ է հստակ մշակված չափորոշիչների միջոցով պարզել այն սուբյեկտներին, որոնք կարող են պատկանել տվյալ ոլորտին: Պետք է նշել, որ ՓՄՁ չափորոշիչների մշակումը խիստ կարևոր է, քանի որ վերջիններիս միջոցով են որոշվում տնտեսության տվյալ հատվածի և, համապատասխանաբար, նաև պետական աջակցություն ստացող սուբյեկտների շրջանակները: Խնդրի կարևորությունը մեծանում է նաև այն հանգամանքով պայմանավորված, որ առ այսօր ՓՄՁ ոլորտի սուբյեկտների դասակարգման միասնական չափորոշիչներ գոյություն չունեն: Դրա վկայություն կարելի է համարել «փոքր և միջին բիզնես», «փոքր ձեռնարկություն», «միկրոձեռնարկություն» հասկացությունների միաժամանակյա օգտագործումը գրեթե նույն իմաստով և բովանդակությամբ:¹⁴ Մինչդեռ, դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, ինչը պահանջում է դասակարգման հստակ չափորոշիչների մշակում և ամրագրում: Այս տեսանկյունից, միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՓՄՁ սուբյեկտների դասակարգման նպատակով, որպես կանոն, օգտագործվում են քանակական, որակական, ինչպես նաև դրանց կոմբինացիաներն արտացոլող չափորոշիչները: Ըստ էության, տարբեր երկրներում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման համար կիրառվում են տարբեր չափորոշիչներ, չնայած դրանց նմանություններին:¹⁵ Այդ տարբերությունները հիմնականում պայմանավորված են ազգային տնտեսությունների առանձնահատկություններով, զարգացման մակարդակով, աշխատանքի միջազգային բաժանման մեջ երկրի զբաղեցրած տեղով ու դերով և մի շարք այլ գործոններով: Պետք է նշել, որ քանակական չափորոշիչներն իրենց չափելիության պատճառով համարվում են առավել նախընտրելի և ավելի լայն

¹⁴Акимов О. Малый и средний бизнес: Эволюция понятий, рыночная среда, проблемы развития. Финансы и статистика. М. 2003г. стр. 19

¹⁵Блинов А., Шапкин И. Малое предпринимательство: теория и практика. Дашков и К. М. 2003г.стр. 59

տարածում ունեն: Միջազգային պրակտիկայում որպես այդպիսիք, կիրառվում են աշխատողների թվաքանակը, իրացման շրջանառությունը, ակտիվների հաշվեկշռային արժեքը և այլն: Որպես չափորոշիչներ տարբեր երկրներում օգտագործում են նաև կապիտալի մեծությունը և վաճառքի ծավալը (Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ճապոնիա), շուկայում ոչ մենաշնորհային դիրքը (ԱՄՆ), իրավական կարգավիճակը (Ֆրանսիա), սեփականության ձևը (Հունգարիա) և այլն:¹⁶ Պետք է նշել, որ աշխատողների թվաքանակի առումով տարբեր երկրներում գործող չափանիշները միմյանցից էականորեն չեն տարբերվում, մինչդեռ տարեկան շրջանառության ծավալով տարբերությունն ակնհայտ է:

Աղյուսակ 1¹⁷

ՓՄՁ դասակարգման չափանիշները

	Աշխատողների թվաքանակ			Տարեկան շրջանառություն		
	Միկրո	Փոքր	Միջին	Միկրո	Փոքր	Միջին
ԵՄ	<10	<50	<250	<2 մլն եվրո	<10 մլն եվրո	<50 մլն եվրո
ՀՀ	<10	<50	<250	<100 մլն դրամ	<500 մլն դրամ	<1500 մլն դրամ
ՌԴ	<15	<100	<250	<60 մլն ռուբլի	<400 մլն ռուբլի	<1000 մլն ռուբլի

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ում բերված տվյալները, ըստ աշխատողների թվաքանակի ՓՄՁ դասակարգման ՀՀ-ում գործող չափանիշներն էականորեն չեն տարբերվում Եվրամիությունում և Ռուսաստանի Դաշնությունում գործողներից: Մինչդեռ նույնը չենք կարող ասել որպես ՓՄՁ դասակարգման չափորոշիչ ընդունվող տարեկան շրջանառության ծավալների մասին: Մասնավորապես, ՀՀ-ում նշված ցուցանիշը գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար զիջում է ԵՄ-ում սահմանված ցուցանիշին համապատասխանաբար 11, 12 և 18 անգամ, իսկ ՌԴ-ում գործողին՝ 4,5 և 5 անգամ:

¹⁶ Колесников А., Колесникова Л. Малый и средний бизнес: эволюция понятий и проблема определения. Вопросы экономики, 1996. № 7.

¹⁷ Aannual report on european smes 2013/2014. Final Report. European Commission. p. 10. Развитие малого и среднего предпринимательства. Европейский опыт. МСП банк. Группа Внешэкономбанка. Аналитический центр. М. 2013г. Стр. 2. www.mspbank.ru. «Փոքր և միջին ձեռնարկատիրչության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք

Ինչ վերաբերում է որակական չափորոշիչներին, ապա դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- մեկ անձի մեջ սեփականատիրոջ և կառավարիչի գործառույթների համադրումը: Ձեռնարկության սեփականատերը սեփական ռիսկի հիման վրա կրում է լիակատար պատասխանատվություն ներդրվող կապիտալի և կայացվող որոշումների համար:
- Գործատուի և վարձու աշխատողի միջև հարաբերությունների անհատականացված բնույթը: Որպես կանոն, փոքր և միջին ձեռնարկությունների մասշտաբները և գործունեության թափանցիկությունը սեփականատիրոջը հնարավորություն են տալիս տիրապետել ձեռնարկությունում տեղի ունեցող բոլոր գործընթացներին, յուրաքանչյուր աշխատակցի հետ լինել անմիջական շփումների և հարաբերությունների մեջ, տեղեկացված լինել վերջիններիս հետաքրքրությունների և դժվարությունների մասին, ինչն աշխատանքի մոտիվացիայի բարձրացման համար լուրջ նախադրյալներ է ստեղծում:
- Ընտանեկան բիզնեսի վարումը, ինչի արդյունքում շատ դեպքերում մեկնարկային կապիտալը ձևավորվում է ընտանեկան բյուջեի հաշվին:
- Իրավական անկախությունը (սեփականության իրավունքին տիրապետում է մեկ անձ):
- Իրացման փոքր շուկան, որը հնարավորություն չի տալիս տնտեսավարող սուբյեկտին էական ազդեցություն ունենալ իրացվող ապրանքների գների և ծավալի վրա,
- անհատականացված կառավարումը և այլն:

Ընդհանուր առմամբ, մեր կարծիքով, ՓՄՁ չափորոշիչների սահմանումը, անկախ դրանց բազմազանությունից, պետք է հետապնդի և լուծի մեկ կարևոր խնդիր. բացահայտել այն հիմնական հատկանիշները, որոնք հատուկ են տվյալ սեկտորի տնտեսավարող սուբյեկտներին: Ըստ էության, հենց այդ հատկանիշների միջոցով է ՓՄՁ ոլորտը տարբերվում խոշոր բիզնեսից, ինչը մեկ անգամ ևս ընդգծում է տվյալ խնդրի կարևորությունը: Որպես այդպիսի հատկանիշներ կարելի է առանձնացնել հետևյալները: ՓՄՁ սուբյեկտների կողմից իրականացվող տնտեսական

գործունեությունն ունի ընդգծված նեղ մասնագիտացված բնույթ, արտադրական գործընթացում կիրառվող միջոցները և տեխնոլոգիական գործընթացների մասշտաբները զգալիորեն սահմանափակ են, իսկ իրացման համակարգն առանձնանում է իր պարզեցված բնույթով: ՓՄՁ սուբյեկտներում սեփականատերը հանդես է գալիս միաժամանակ նաև որպես կառավարիչ, ինչի արդյունքում նրա մոտ են կենտրոնանում գրեթե բոլոր կառավարչական գործառույթները: Կառավարման գործընթացի նման առանձնահատկությունների շնորհիվ նշված ոլորտի սուբյեկտներն էականորեն տարբերվում են խոշոր ձեռնարկություններից: Յուրահատուկ բնույթ ունեն նաև սեփականատիրոջ և վարձու աշխատողների փոխհարաբերությունները, որոնք հիմնականում կրում են ոչ ֆորմալ բնույթ: Դա դրականորեն է անդրադառնում աշխատանքային մթնոլորտի վրա և բարձրացնում է աշխատակիցների մոտիվացիան դրված նպատակներին հասնելու համար: Հաջորդ կարևոր հատկանիշը, որը հատուկ է ՓՄՁ սուբյեկտներին, դա փոքր կապիտալատարությունն է, պահանջվող ֆինանսական միջոցների փոքր ծավալը և կապիտալի բարձր շրջանառելիությունը: Միևնույն ժամանակ, սեփական գործունեությունը ծավալելով հիմնականում տեղական շուկաներում և հիմնվելով դրանցում առկա ռեսուրսների վրա, ՓՄՁ սուբյեկտները սեփական տնտեսական հարաբերությունները ձևավորում են մատակարարների և սպառողների նեղ շրջանակի հետ, ինչը ֆինանսական ռեսուրսների դժվարամատչելիության պայմաններում կարևոր միջոց է հանդիսանում գործընկերային վստահելի հարաբերությունների ձևավորման համար: Ըստ էության, ՓՄՁ դասակարգման համար կիրառվող չափորոշիչները պետք է հաշվի առնեն հենց այս հատկանիշները, որոնք բնութագրական են տվյալ ոլորտի սուբյեկտներին: Միաժամանակ, հենց այդ չափորոշիչների միջոցով է հնարավոր պարզել ՓՄՁ ոլորտի իրական պատկերը և դրան պատկանող սուբյեկտներին՝ ինչպես դրա զարգացման ուղղությամբ համապատասխան ծրագրերի, այնպես էլ պետական աջակցության քաղաքականության մշակման ու իրականացման համար: Այլ կերպ ասած, ՓՄՁ դասակարգման չափորոշիչներն ապահովում են տվյալ ոլորտի պետական աջակցության հասցեականությունը և նպատակայնությունը, որոնք սահմանափակ ռեսուրսների պայմաններում հանդիսանում են հիմնարար սկզբունքներ այդ

ուղղությամբ իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացման և սահմանված նպատակների ձեռք բերման համար:

Համաշխարհային զարգացման փորձը վկայում է, որ ՓՄՁ ոլորտն էական դերակատարում ունի շուկայական տնտեսության կայացման և զարգացման գործում:¹⁸ Այն հանդիսանում է բիզնեսի կազմակերպման և իրականացման առավել զանգվածային, դինամիկ և ճկուն ձև, որը կանխորոշում է պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման աստիճանը: Նպաստելով հասարակական բարեկեցության աճին, ստեղծելով տնտեսական հետաքրքրությունների և շահերի իրացման նախադրյալներ, անհատի բիզնես հակումների դրսևորման հնարավորություններ, փոքր և միջին ձեռնարկատիրությունը խթանում է միջին խավի ձևավորմանը և երկրում սոցիալական կայունության ապահովմանը: Այդ իսկ պատճառով, տվյալ ոլորտի զարգացումը յուրաքանչյուր պետության համար ունի ոչ միայն տնտեսական և սոցիալական, այլ նաև քաղաքական նշանակություն: Դրա զարգացումը կարևոր պայման է հանդիսանում սոցիալ-տնտեսական տարաբնույթ հիմնախնդիրների լուծման, ձեռնարկատիրության ոլորտ բնակչության զգալի հատվածի ներգավման և, դրանով իսկ, զբաղվածության մակարդակի բարձրացման, նորարարությունների ներդրման, ինչպես նաև նոր տիպի տնտեսական հարաբերությունների ձևավորման և խորացման համար:

Պետք է նշել, որ ՓՄՁ ոլորտն ունի մի շարք առավելություններ խոշոր բիզնեսի համեմատությամբ, որոնց արդյունավետ օգտագործումը հնարավորություն կտա ապահովել ընդհանուր տնտեսական զարգացում: Մասնավորապես, որպես այդպիսիք հատկապես կարելի է առանձնացնել ՓՄՁ սուբյեկտների կողմից տնտեսավարման պայմաններին արագ կերպով համարվելու ընդունակությունը, նրանց հարաբերական անկախությունը, որոշումների կայացման և կատարման գործընթացի ճկունությունը և օպերատիվությունը, ձեռնարկատիրական նախաձեռնությունների իրացման լայն հնարավորությունները, նախնական կապիտալի նկատմամբ ցածր պահանջմունքները, շուկայական միջավայրի փոփոխություններով պայմանավորված արտադրության վերակազմակերպման լայն հնարավորությունները և այլն: Բացի նշվածից, փոքր և

18Егоров А., Кузьмина Л., Юхименко И. Малое предпринимательство: институциональная эволюция в контексте мирового и российского опыта. Смоленск. 2005г.стр. 86

միջին ձեռնարկություններն ունեն մրցակցային մեծ առավելություններ, մեկ աշխատողի հաշվով ավելի քիչ ծախսային կարիքներ և հիմնականում օգտագործում են տեղական ռեսուրսները և աշխատուժը: Տվյալ ոլորտում գործող սուբյեկտների սեփականատերերն ավելի շատ են հակված խնայողությունների և ներդրումների, իսկ նրանց անձնական մոտիվացիան խիստ բարձր է հաջողությունների հասնելու գործում: ՓՄՁ ոլորտն ավելի լավ է տեղեկացված տեղական շուկաներում պահանջարկի և առաջարկի փոփոխություններին, ինչը վերջիններիս հնարավորություն է տալիս ռացիոնալ կերպով լուծել արտադրության և իրացման խնդիրները: Շատ հաճախ ՓՄՁ սուբյեկտների կողմից ապրանքները թողարկվում են կոնկրետ պատվիրատուների համար, ինչը զգալիորեն մեղմում է իրացման հետ կապված ռիսկերը: Արտաքին և ներքին միջավայրի փոփոխություններին արագ կերպով հարմարվելու և արձագանքելու հնարավորությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ առաջին, ՓՄՁ սուբյեկտներն ունեն առավել թույլ դիվերսիֆիկացված կազմակերպական կառուցվածք, երկրորդ, նման սուբյեկտների գործունեությունը թափանցիկ է ֆինանսական հաշվետվողականության և կառավարչական որոշումների հնարավոր ուղղորդումների տեսանկյունից, երրորդ, այս սուբյեկտներն ունեն սահմանափակ բիզնես գործընթացներ և չեն պահանջում գլոբալ փոփոխություններ զարգացման ռազմավարության շրջանակներում:

Առանձին հեղինակներ խոշոր բիզնեսի համեմատությամբ որպես փոքր և միջին ձեռնարկությունների առավելություն են նշում այն հանգամանքը, որ չնայած կապիտալի շուկայի նկատմամբ սահմանափակ մուտքին, նրանք կարողանում են ավելի մեծ շահույթ ապահովել:¹⁹ Հատկապես գերփոքր ձեռնարկությունների մասով շահութաբերության մեծ տարբերակվածություն գոյություն ունի ինչպես երկրի մասշտաբներից, այնպես էլ համապատասխան ճյուղից կախված: Դրանով հանդերձ, նշված սուբյեկտներն ավելի մեծ հակվածություն են ցուցաբերում ավելի մեծ շահութաբերություն ապահովող ճյուղերի նկատմամբ: Դա բացատրվում է ՓՄՁ սուբյեկտների ճկունության և պարբերաբար փոփոխվող շուկայական պահանջներին արագ կերպով հարմարվելու ընդունակություններով:

¹⁹ Хучек М., Ходыйски А. Инновационность малых предприятий. Вестник МГУ. Экономика, 1997г. N2

Իր առավելություններով հանդերձ, ՓՄՁ ոլորտը զերծ չէ նաև թերություններից: Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել ռիսկի բարձր մակարդակը և դրանով պայմանավորված շուկայում անկայուն վիճակը, խոշոր բիզնեսից մեծ կախվածությունը, սեփական բիզնեսի կառավարման թերությունները, ղեկավար անձնակազմի ցածր կոմպետենտությունը, արտաքին ֆինանսական միջոցների ներգրավման դժվարությունները և այլն: Ըստ էության, նշված թերություններն էականորեն անդրադառնում են տվյալ ոլորտի գործունեության վրա և, դրանով է պայմանավորված այդ ուղղությամբ համապատասխան, այդ թվում նաև պետական ծրագրերի մշակումն ու իրականացումը, որոնց հիմնական նպատակը պետք է հանդիսանա ՓՄՁ ոլորտին բնորոշ թերությունների բացասական ազդեցության չեզոքացումը:

Տնտեսական համակարգի զարգացման գործում ՓՄՁ կարևորությունը մեծապես պայմանավորված է նաև վերջինիս կողմից իրականացվող գործառույթներով: Տարբեր երկրներում փոքր և միջին ձեռնարկությունները, անկախ զարգացման աստիճանից և ազգային նկարագրից, ունեն որոշակի գործառույթային և կազմակերպատիրական առանձնահատկություններ, ինչի մասին են վկայում փոքր և միջին բիզնեսի սահմանման վերաբերյալ տարբեր պետությունների կողմից կիրառվող մոտեցումները:²⁰

ՓՄՁ ոլորտը, հանդիսանալով ժամանակակից շուկայական տնտեսության անբաժանելի մասը, էական դերակատարում ունի նաև տնտեսության բնականոն և արդյունավետ կենսագործունեության ապահովման, դրա հետագա զարգացման հիմնական ուղղությունների կանխորոշման և գիտատեխնիկական առաջընթացի արագացման գործում: Ըստ էության, շատ հաճախ այն հանդես է գալիս որպես խոշոր բիզնեսին օժանդակող՝ ապահովելով վերջինիս որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրությամբ և մատուցմամբ: Փոքր և միջին ձեռնարկություններն իրենց ավանդն ունեն նաև շուկան որակյալ և մատչելի գներով ապրանքներով ապահովելու, ինչպես նաև անհրաժեշտ ծառայությունները դրանց անմիջական սպառողներին մոտեցնելու գործում:

20Варакса Н. Трансформация систем налогообложения малого бизнеса в развитых странах. Управленческий учет.2005 г. № 1.

ՓՄՁ ոլորտի զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև սոցիալ-տնտեսական բարեփոխումների բովանդակությամբ, որի հիմնական նպատակը կայուն տնտեսական աճի, ներդրումների ներգրավման, շուկայական տնտեսավարման պահանջներին բավարարող ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորումն է: Տնտեսական բարեփոխումների անցած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ևս իրականացվեցին մի շարք քայլեր և միջոցառումներ ՓՄՁ ոլորտի կայացման և զարգացման ուղղությամբ: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամը ցույց տվեց, որ չնայած իրականացված տնտեսական բարեփոխումների արդյունքում ֆորմալ առումով ձևավորված է ՓՄՁ ոլորտը, սակայն դեռևս ստեղծված չեն դրա բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ: Դրանց բացակայությունն, ակնհայտորեն, նվազեցնում է տվյալ ոլորտի տնտեսական և սոցիալական արդյունավետությունը: Մինչդեռ, դրա զարգացումը չափազանց կարևոր նշանակություն կարող է ունենալ հանրապետությունում ներկայումս կուտակված սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում: Այս տեսանկյունից, նախ և առաջ, կարևորվում է տնտեսական զարգացման գործում ՓՄՁ ոլորտի դերի գնահատումը, ինչը հնարավորություն կտա պարզել հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ձևավորման, տնտեսության կայուն զարգացման, սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում ՓՄՁ ոլորտի մասնակցությունը: Վերջինիս ուսումնասիրությանն է նվիրված ատենախոսության հաջորդ բաժինը:

1.2. Փոքր և միջին ձեռնարկատիրության դերը տնտեսության զարգացման գործում

ՓՄՁ ոլորտը, ինչպես նշվեց աշխատանքի նախորդ բաժնում, հանդիսանում է շուկայական տնտեսական համակարգի կարևոր բաղադրիչներից, որը տնտեսությանը հաղորդում է ճկունություն, կենտրոնացնում է բնակչության ֆինանսական և արտադրական ռեսուրսները, ունի հակամենաշնորհային հզոր ներուժ, ապահովում է նոր և հեռանկարային արտադրությունների զարգացումը: Փոքր և միջին

ձեռնարկությունները մրցակցային պայքարի մեջ են գտնվում ինչպես միմյանց, այնպես էլ խոշոր ձեռնարկությունների հետ, ինչի արդյունքում ձևավորվում է տնտեսական հարաբերությունների մրցակցային տեսակը: Այն հանդիսանում է շուկայական մեխանիզմի հիմքը և էական ներգործություն ունի ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության վրա:

Մասնագիտական գրականության և վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ չափազանց մեծ է ՓՄՁ ոլորտի դերը երկրում առկա տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման գործում:²¹ Այս տեսանկյունից, բավականաչափ ուշագրավ է Ա. Շուլուսի կողմից կատարված մեկնաբանությունը տնտեսության տվյալ սեկտորի վերաբերյալ, ըստ որի փոքր և միջին ձեռնարկությունները կոչված են առանց զգալի կապիտալ ներդրումների, տեղական հումքի օգտագործմամբ, ընդլայնելու սպառողական ապրանքների և ծառայությունների արտադրությունը և դրանք մոտեցնելու սպառողներին:²² Իսկ Վ. Գրիբովի կարծիքով ՓՄՁ դերն արտահայտվում է աշխատատեղերի ստեղծման, նոր ապրանքների և ծառայությունների արտադրության, խոշոր բիզնեսի կարիքների բավարարման և մի շարք այլ խնդիրների լուծման մեջ: Փոքր և միջին բիզնեսն ապահովում է անհրաժեշտ ճկունություն, կոռպերացիոն արտադրության զարգացում, ինչն էլ պայմանավորում է տվյալ սեկտորի արդյունավետությունը:²³

ՓՄՁ ոլորտն օբյեկտիվորեն զարգանում է որպես ժամանակակից շուկայական տնտեսության հարաբերականորեն ինքնուրույն սեկտոր: Այն ունի կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն, քանի որ ապահովում է երկրի քաղաքական և տնտեսական կայունությունը, մեղմում է կառուցվածքային փոփոխությունների իրականացմամբ պայմանավորված անցանկալի հետևանքները, արագորեն հարմարվում է շուկայի կարիքներին և լայնորեն կիրառում է նորարարություններ և նոր

21Дятченко Л. Малое предпринимательство в странах СНГ. М. 2007г. стр. 122, Кузнецова З. Малое предпринимательство в странах с переходной экономикой: пути стимулирования. Проблемы теории и практики управления. 2007г. № 10, Лялин Е. и др. Развитие малого предпринимательства: отечественный и зарубежный опыт. Экономист. М. 2006г. стр. 93

22 Шулуc A. Становление системы поддержки малого предпринимательства в России. Российский экономический журнал. 1997г. N 5-6, 7

23 Грибов В. Менеджмент в малом бизнесе. Финансы и статистика. М. 2002г. стр. 5

տեխնոլոգիական լուծումներ: Մ. Լապուստան և Յու. Ստարոստինը ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսական կյանքում գնահատում են հետևյալ ցուցանիշներով.²⁴

- շուկայական տնտեսության սուբյեկտների ընդհանուր թվում փոքր և միջին ձեռնարկությունների և անհատ ձեռնարկատերերի թվաքանակը,
- երկրի համախառն ներքին արդյունքում ՓՄՁ ոլորտի բաժնեմասը,
- բյուջետային համակարգի տարբեր մակարդակների բյուջեների եկամուտների մեջ ՓՄՁ բաժնեմասը,
- տվյալ ոլորտում զբաղվածների թվաքանակը և գործազրկության կրճատման գործում ունեցած մասնակցությունը,
- փոքր և միջին ձեռնարկությունների կողմից սպառողական ապրանքների շուկաների հագեցման աստիճանը:

Աղյուսակ 2

ԵՄ-ում ՓՄՁ ոլորտի հիմնական ցուցանիշները 2012-2014 թվականներին²⁵

	Գերփոքր %	Փոքր %	Միջին %	ՓՄՁ %
Ձեռնարկությունների թվաքանակը				
2012	92.1	6.6	1.1	99.8
2013	92.4	6.4	1.0	99.8
2014	92.7	6.1	1.0	99.8
Զբաղվածների թվաքանակը				
2012	28.7	20.5	17.3	66.5
2013	29.1	20.6	17.2	66.9
2014	29.2	20.4	17.3	66.9
Համախառն ավելացված արժեքը				
2012	21.1	18.3	18.3	57.6
2013	21.6	18.2	18.3	58.1
2014	21.1	18.2	18.5	57.8

Ըստ էության, վերը նշված ցուցանիշների վերլուծության միջոցով հնարավոր է պարզել երկրի տնտեսական կյանքում ՓՄՁ ոլորտի զբաղեցրած տեղը: Անշուշտ, այն ունի բոլոր հնարավորություններն այդ ցուցանիշների գծով բարձր մակարդակ

²⁴ Лапушта М. , Старостин Ю. Малое предпринимательство. Учебное пособие. Инфра-М. М. 2002г.стр 11

²⁵ Annual report on european smes 2012/2013. Final Report.European Commission. P 10, Aannual report on european smes 2013/2014. Final Report. European Commission p. 15, Aannual report on european smes 2014/2015. European Commission p. 83

ապահովելու համար: Սակայն դրա ձեռքբերումն ուղղակիորեն պայմանավորված է ՓՄՁ ոլորտի գործունեության պայմաններով, ինստիտուցիոնալ և օրենսդրաիրավական նախադրյալներով, ինչպես նաև պետական աջակցության նպատակով կիրառվող գործիքներով և սահմանված մեխանիզմներով:

ՓՄՁ ոլորտի կարևորությունը երկրի տնտեսական կյանքում հատկապես արտահայտվում է տվյալ ոլորտի սուբյեկտների կողմից զբաղվածության ապահովման, ինչպես նաև համախառն ներքին արդյունքի ձևավորման մեջ ունեցած էական մասնակցությամբ: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, զարգացած և զարգացող երկրներում տվյալ ոլորտն ունի էական դերակատարում տնտեսական աճի ապահովման և զբաղվածության մակարդակի բարձրացման գործում: Ըստ էության, այդ մասին են վկայում աղյուսակ 2-ի տվյալները: Ինչպես նկատում ենք, 2012-2014 թվականներին ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշների գծով ԵՄ անդամ պետություններում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Այսպես, 2014 թվականի դրությամբ ՓՄՁ ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների թվաքանակը կազմել է բոլոր ձեռնարկությունների 99.8 տոկոսը, որոնք ապահովել են զբաղվածության և համախառն ավելացված արժեքի համապատասխանաբար 66.9 և 57.8 տոկոսը: Գերակշիռ մասը եղել են գերփոքր ձեռնարկությունները, որոնք կազմել են ընդհանուր թվաքանակի 92.7 տոկոսը: Փոքր և միջին ձեռնարկությունների թվաքանակը կազմել է ընդհանուր թվաքանակի համապատասխանաբար 6.1 տոկոսը և 1.0 տոկոսը: Փոքր ձեռնարկություններում զբաղվածների թվաքանակը կազմել է 20.4 տոկոս, որոնք ապահովել են համախառն ավելացված արժեքի 18.2 տոկոսը: Միջին ձեռնարկությունների դեպքում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 17.3 տոկոս և 18.5 տոկոս: Ինչպես նկատում ենք աղյուսակի տվյալներից, ԵՄ անդամ պետություններում ինչպես թվաքանակով, այնպես էլ զբաղվածության ապահովման և համախառն ավելացված արժեքի ստեղծման գործում ունեցած մասնակցությամբ առաջատար դիրք են զբաղեցնում գերփոքր ձեռնարկությունները: Ընդ որում, եթե թվաքանակի ցուցանիշով վերջիններս մի քանի անգամ գերազանցում են փոքր և միջին ձեռնարկություններին, ապա զբաղվածության ապահովման և ավելացված արժեքի ստեղծման առումով այդ տարբերությունն ավելի փոքր է: Միջին հաշվով, 2014

թվականին ՓՄՁ ոլորտը ԵՄ անդամ պետություններում ապահովել է 66.9 տոկոս զբաղվածություն և 57.8 տոկոսով նպաստել համախառն ավելացված արժեքի ձևավորմանը: Անշուշտ, նման բարձր ցուցանիշները վկայում են այդ երկրների տնտեսություններում ՓՄՁ ոլորտի զբաղեցրած կարևոր դերի և տեղի մասին, ինչը հետևանք է դրա զարգացման ուղղությամբ իրականացված պետական նպատակամետ քաղաքականության: Ընդհանուր առմամբ, 2014 թվականի դրությամբ ԵՄ անդամ պետություններում գրանցված են եղել 22.3 մլն փոքր և միջին ձեռնարկություններ, որոնցում զբաղվածների թվաքանակը կազմել է 88.9 մլն մարդ, իսկ համախառն ավելացված արժեք՝ 3.7 տրիլիոն եվրո:²⁶

Դիտարկելով վերջին տարիների զարգացումները, կարող ենք արձանագրել, որ բացարձակ արտահայտությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների թվաքանակը ԵՄ անդամ պետություններում 2012-2014 թվականներին ունեցել է հետևյալ պատկերը:

Աղյուսակ 3.²⁷

ԵՄ-ում գործող ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2012-2014 թվականներին
(հազար)

	Գերփոքր	Փոքր	Միջին
2012	18.783.5	1.349.7	222.6
2013	19.969.3	1.378.4	223.6
2014	20.710.3	1.373.4	224.8

Փաստորեն, ինչպես երևում է աղյուսակ 3-ից, 2012-2014 թվականներին գերփոքր և փոքր ձեռնարկությունների թվաքանակն աննշան կերպով աճել է, իսկ միջին ձեռնարկությունների թվաքանակը մնացել է գրեթե անփոփոխ: Ընդ որում, բացարձակ արտահայտությամբ 2014 թվականին գերփոքր և փոքր ձեռնարկությունների թվաքանակը կազմել է համապատասխանաբար 20.710 հազար և

²⁶ Annual report on european smes 2014/2015. European Commission p. 83

²⁷ Annual report on european smes 2012/2013. Final Report. European Commission. P 10, Annual report on european smes 2013/2014. Final Report. European Commission p. 15, Annual report on european smes 2014/2015. European Commission p. 83

1.373 հազար՝ 2012 թվականի 18.783 հազարի և 1.349 հազարի դիմաց՝ արձանագրելով 1.927 հազար և 24 հազար սուբյեկտի աճ: Նման միտումներն, ակնհայտորեն, վկայում են տնտեսության տվյալ հատվածի շարունակական զարգացման մասին:

Բացարձակ և տոկոսային արտահայտությամբ փոքր և միջին ձեռնարկությունների թվաքանակը 2012-2014 թվականներին ԵՄ անդամ պետություններում արձանագրել է հետևյալ դինամիկան:

Աղյուսակ 4

ԵՄ-ում ՓՄՁ ոլորտի հիմնական ցուցանիշները

2012-2014 թվականների տվյալներով²⁸


Ձեռնարկության չափերը	Ընդհանուր թվաքանակ ը հազար	Տեսակարար կշիռը ընդհանուր թվաքանա կում	Ընդհանուր թվաքանա կը հազար	Տեսակա րար կշիռը ընդհանու ր թվաքանա կում	Ընդհանուր թվաքանակ ը հազար	Տեսակա րար կշիռը ընդհանու ր թվաքանա կում
	2012		2013		2014	
ՓՄՁ (0-249)	20.355.8	99.8	21.571.4	99.8	22.308.5	99.8
Գերփոքր (0-9)	18.783.5	92.1	19.969.3	92.4	20.710.3	92.7
Փոքր (10-49)	1.349.7	6.6	1.378.4	6.4	1.373.4	6.1
Միջին (50-249)	222.6	1.1	223.6	1.0	224.8	1.0
Խոշոր (250-ից ավելի)	43.5	0.2	43.5	0.2	43.7	0.2
Ընդամենը	20.399.3	100	21.614.9	100	22.352.3	100

Ինչպես երևում է աղյուսակ 4-ում բերված տվյալներից, 2012-2014 թվականների տվյալներով Եվրամիության անդամ պետություններում ՓՄՁ ոլորտն առաջատար դիրքեր է զբաղեցնում: Մասնավորապես, տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակում 2014 թվականի տվյալներով վերջիններիս բաժին է ընկնում 99.8 տոկոս խոշոր բիզնեսի 0.2 տոկոսի դիմաց: Բացարձակ արտահայտությամբ Եվրամիության անդամ երկրներում գործում են 22.308.5 հազար փոքր և միջին ձեռնարկություններ, որոնց թվում հիմնական բաժինը ընկնում է գերփոքր ձեռնարկություններին՝

²⁸ Annual report on european smes 2012/2013. Final Report. European Commission. P 10, Annual report on european smes 2013/2014. Final Report. European Commission p. 15, Annual report on european smes 2014/2015. European Commission p. 83

20.710.3 հազար: Փոքր ձեռնարկություններն իրենց տեսակարար կշռով կազմում են ընդհանուրի 6.1 տոկոսը, իսկ միջին և խոշոր ձեռնարկությունները՝ համապատասխանաբար 0 տոկոս և 0.2 տոկոս: Փաստորեն, թվաքանակով ամենամեծը գերփոքր ձեռնարկություններն են, որոնք կազմում են բոլոր ձեռնարկությունների 92.7 տոկոսը:

Վերջին տարիներին փոքր և միջին ձեռնարկությունների թվաքանակի դինամիկան Եվրամիության անդամ երկրներում ունեցել է հետևյալ պատկերը:



Գծապատկեր 1. ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի աճի տեմպերը ԵՄ-ում 2009-2014 թվականներին (%)²⁹

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի առավելագույն անկումն արձանագրվել է 2010-2012 թվականներին մոտ 560 հազարով՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքներով: Ընդ որում, 2010-2011 թվականներին խոշոր ձեռնարկությունների թվաքանակը, ի տարբերություն փոքր և միջին ձեռնարկությունների, աճել է: Հետագայում, 2011-2012 թվականներին բոլոր ձեռնարկությունների մոտ գրանցվել են թվաքանակի կրճատում, ինչը 2013 թվականից սկսած վերածվել է աճի: Փաստորեն, կարելի է նկատել, որ 2013 թվականից արդեն հետճգնաժամային հետևանքները հաղթահարվել են և ինչպես խոշոր, այնպես էլ փոքր և միջին բիզնեսը արձանագրել են աճի գրեթե հավասար տեմպեր:

²⁹ Развитие малого и среднего предпринимательства. Европейский опыт. МСП банк.Группа Внешэкономбанка. Аналитический центр.М. 2013г. стр. 4

Հաջորդ կարևոր խնդիրը, որի լուծման գործում իր սեփական ծանրակշիռ մասնակցությունն ունի ՓՄՁ ոլորտը, ինչպես արդեն նշվեց, դա զբաղվածության ապահովումն է: Միջազգային պրակտիկայում վերջին տարիներին արձանագրված ցուցանիշները ևս մեկ անգամ հաստատում են նման տեսակետը:

Աղյուսակ 5

ԵՄ-ում ՓՄՁ ոլորտում զբաղվածների թվաքանակը


2012-2014 թվականների տվյալներով³⁰

Ճեռնարկության ն չափերը	զբաղվածների թվաքանակը հազար մարդ	%	զբաղվածների թվաքանակը հազար մարդ	%	զբաղվածների թվաքանակը հազար մարդ	%
	2012		2013		2014	
ՓՄՁ (0-249)	86.814	66.5	88.843	66.9	89.984	66.9
Գերփոքր (0-9)	37.994	28.7	38.629	29.1	39.274	29.2
Փոքր (10-49)	26.704	20.5	27.353	20.6	27.452	20.4
Միջին (50-249)	22.615	17.3	22.960	17.2	23.257	17.3
խոշոր (250-ից ավելի)	43.787	33.5	44.053	33.1	44.438	33.1
Ընդամենը	130.601	100	132.897	100	134.422	100

Փաստորեն, ԵՄ անդամ պետություններում միայն ՓՄՁ ոլորտը 2014 թվականի տվյալներով ապահովել է զբաղվածության 66.9 տոկոսը, որից գերակշիռ մասը բաժին է ընկնում գերփոքր ձեռնարկություններին: Ինչպես տոկոսային, այնպես էլ անվանական արտահայտությամբ ՓՄՁ ոլորտում աշխատողների թվաքանակը ավելի քան կրկնակի անգամ գերազանցում է խոշոր ձեռնարկություններում աշխատողների թվաքանակին: Մասնավորապես, 2014 թվականին ՓՄՁ ոլորտում զբաղվածների թվաքանակը կազմել է 89.984 հազար մարդ կամ ընդհանուր զբաղվածների 66.9 տոկոսը: Դրանց շարքում զբաղվածության ցուցանիշով առաջինը գերփոքր

³⁰ Annual report on european smes 2012/2013. Final Report. European Commission. P 10, Annual report on european smes 2013/2014. Final Report. European Commission p. 15, Annual report on european smes 2014/2015. European Commission p. 83

ձեռնարկություններն են, որոնք ապահովել են 29.2 տոկոս զբաղվածություն: Հատկանշական է, որ խոշոր բիզնեսն ապահովում է զբաղվածության ընդամենը 33.1 տոկոսը: Ձեռնարկատիրության ոլորտում վերջին տարիներին զբաղվածության աճի դինամիկան ունեցել է հետևյալ պատկերը:



Գծապատկեր 2. ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածության աճի տեմպերը ԵՄ-ում 2009-2014 թվականներին (%)³¹

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 2010-2013 թվականներին ինչպես խոշոր, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածության մակարդակն ունեցել է տատանողական բնույթ: Ընդ որում, 2011 և 2012 թվականներին ինչպես ՓՄՁ, այնպես էլ խոշոր բիզնեսի ոլորտում արձանագրվել է զբաղվածության մակարդակի անկում՝ հիմնականում պայմանավորված հետճգնաժամային փուլի առանձնահատկություններով: Սակայն 2013 թվականից սկսած գրանցվել են աճի միտումներ և 2014 թվականին գրեթե հավասարվել: Արդեն 2014 թվականին նախորդ տարվա համեմատությամբ երկու ոլորտներում զբաղվածության մակարդակի աճը կազմել է 1.7 տոկոս:

³¹ Развитие малого и среднего предпринимательства. Европейский опыт. МСП банк. Группа Внешэкономбанка. Аналитический центр. М. 2013г. стр. 6


ԵՄ-ում ՓՄՁ ոլորտի համախառն ավելացված արժեքը
2012-2014 թվականների տվյալներով³²

ձեռնարկության չափերը	Համախառն ավելացված արժեք մլն եվրո	%	Համախառն ավելացված արժեք մլն եվրո	%	Համախառն ավելացված արժեք մլն եվրո	%
	2012		2013		2014	
ՓՄՁ (0-249)	3.395	57.6	3.666	58.1	3.715	57.8
Գերփոքր (0-9)	1.242	21.1	1.362	21.6	1.358	21.1
Փոքր (10-49)	1.076	18.3	1.147	18.2	1.169	18.2
Միջին (50-249)	1.076	18.3	1.156	18.3	1.188	18.5
Խոշոր (250-ից ավելի)	2.495	42.4	2.643	41.9	2.710	42.2
Ընդամենը	5.891	100	6.310	100	6.425	100

ՓՄՁ ոլորտն իր կարևոր դերակատարումն ունի նաև համախառն ավելացված արժեքի ստեղծման գործում: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 6-ի տվյալները, 2014 թվականին ընդհանուր ավելացված արժեքի 58.1 տոկոսը բաժին է ընկել ՓՄՁ ոլորտին և կազմել 3.66 մլն եվրո:

Գերփոքր ձեռնարկությունների մասնաբաժինը 2014 թվականիբն կազմել է 21.1 տոկոս, իսկ փոքր և միջին ձեռնարկություններինը՝ համապատասխանաբար 18.2 տոկոս և 18.5 տոկոս: Վերջին տարիներին տվյալ ցուցանիշն արժանագրել է հետևյալ դինամիկան:

³²Annual report on european smes 2012/2013. Final Report.European Commission. P 10, Aannual report on european smes 2013/2014. Final Report. European Commission p. 15, Aannual report on european smes 2014/2015. European Commission p. 83



Գծապատկեր 3. Համախառն ավելացված արժեքի աճի տեմպերը ԵՄ անդամ պետություններում 2009-2014 թվականներին (%)³³

Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, համախառն ավելացված արժեքի աճի տեմպերի դինամիկան գրեթե նույնն է եղել ինչպես ՓՄՁ, այնպես էլ խոշոր ձեռնարկությունների համար և հետճգնաժամային փուլում, սկսած 2013 թվականից, արձանագրվել են դանդաղ աճի տեմպեր: Արդեն 2014 թվականին համախառն ավելացված արժեքի աճի տեմպերը ՓՄՁ սուբյեկտներում և խոշոր ձեռնարկություններում համապատասխանաբար կազմել են 1.74 և 3.1 տոկոս:

Բավականաչափ ուշագրավ է նաև ՓՄՁ ճյուղային կառուցվածքը ԵՄ անդամ պետություններում: Տվյալ ոլորտում գործող սուբյեկտների հիմնական մասը՝ 22 տոկոսն իր գործունեությունը իրականացնում է առևտրի, իսկ 21 տոկոսը՝ արդյունաբերության ոլորտում: Փաստորեն, ՓՄՁ սուբյեկտների միայն 43 տոկոսը տեղաբաշխված է առևտրի և արդյունաբերության ոլորտներում: Ավելի համեստ մասնակցություն է առկա տրանսպորտի և անշարժ գույքի ոլորտներում, որոնցում ՓՄՁ ներկայացվածությունը կազմում է 6 տոկոս:

³³ Развитие малого и среднего предпринимательства. Европейский опыт. МСП банк.Группа Внешэкономбанка. Аналитический центр.М. 2013г. стр. 8



Գծապատկեր 4. ՓՄՁ ճյուղային կառուցվածքը ԵՄ-ում 2012թվականին (%)³⁴

Բավականին ուշագրավ է նաև առանձին զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտի վիճակը բնութագրող ցուցանիշների վերլուծությունը:

Աղյուսակ 7.³⁵

Զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշները

2014 թվականի դրությամբ

Երկիր	ՓՄՁ բաժինը ՀՆԱ-ում	ՓՄՁ բաժինը գրադվածության մեջ	ՓՄՁ բաժինը ձեռնարկությունների ընդհանուր թվաքանակում
ԱՄՆ	52	54	97.6
Կանադա	43	47	99.8
Ճապոնիա	51.6	69.5	99.2
Գերմանիա	57	69.3	99.3
Ֆրանսիա	49.8	56.6	97.6
Իտալիա	55	71	99.2
Մեծ Բրիտանիա	52	56	99.1

³⁴Развитие малого и среднего предпринимательства. Европейский опыт. МСП банк.Группа Внешэкономбанка. Аналитический центр.М. 2013г. стр. 10

³⁵Исследование форм поддержки малого и среднего бизнеса в РФ и Томской области. Исследование рынка. 2014г. стр. 26

Ինչպես երևում է աղյուսակ 7-ի տվյալներից, զբաղվածության ապահովման առումով առաջատար դիրքեր է զբաղեցնում Իտալիան, որտեղ ՓՄՁ ոլորտն ապահովում է ընդհանուր զբաղվածության 71 տոկոսը: Հատկանշական է, որ եվրոպական զարգացած երկրներում նշված ցուցանիշն ավելի բարձր է, քան ԱՄՆ-ում և Կանադայում, որտեղ այն կազմում է համապատասխանաբար 54 և 47 տոկոս:

Համախառն ներքին արդյունքի մեջ ունեցած բաժնեմասով առաջատար դիրքեր են զբաղեցնում Գերմանիան և Իտալիան, որտեղ ՓՄՁ ոլորտն ապահովում է երկրի ՀՆԱ-ի համապատասխանաբար 57 տոկոս և 55 տոկոսը: ԱՄՆ-ում նշված ցուցանիշը կազմում է 52 տոկոս, իսկ Կանադայում և Ճապոնիայում համապատասխանաբար 43 և 51.6 տոկոս:

ՓՄՁ սուբեկտների թվաքանակի առումով զարգացած երկրներում պատկերը գրեթե նույնն է: Ամենաբարձր ցուցանիշն առկա է Կանադայում, որտեղ ՓՄՁ սուբեկտները կազմում են բոլոր ձեռնարկությունների 99.8 տոկոսը: Ամենացածր ցուցանիշը ԱՄՆ-ում և Ֆրանսիայում է՝ ընդամենը 97.6 տոկոս:

Պետք է նաև նկատի ունենալ, որ հատկապես փոքր ձեռնարկությունների առումով գրանցման և գործունեության իրականացման հետ կապված թվաքանակը շատ փոփոխական է: Մասնավորապես, վերլուծությունները ցույց են տալիս, որ Մեծ Բրիտանիայում նոր ստեղծված փոքր ձեռնարկություններից յուրաքանչյուր երրորդը իր գործունեությունը 3 տարի անց դադարեցնում է, իսկ գրանցումից 6 տարի հետո ընդամենը 35 տոկոսն է շարունակում իր գործունեությունը: Գերմանիայում յուրաքանչյուր տարի ստեղծվում են մոտ 40 հազար փոքր ձեռնարկություններ և միաժամանակ 20-25 հազարը դադարեցնում են իրենց գործունեությունը:³⁶ Իհարկե, փոքր և միջին ձեռնարկությունների «կյանքի տևողությունը» խիստ կարևոր է հատկապես նրանց ֆինանսավարկային աջակցության ցուցաբերման առումով: Պատահական չէ այն տեսակետի գոյությունը, որ փոքր և միջին ձեռնարկությունների «տարիքը» ոչ պակաս կարևոր է շահութաբերությունից:³⁷ Ձեռնարկության գործունեության ժամկետի 3 տարուց գերազանցումը համարվում է հուսալիության

³⁶Вдовенко А. Малый бизнес –символ, но не конкурент. 2009г. <http://tztver.ru/articles/detail/84>

³⁷ ЯстрибА. Кредитные риски малого и среднего бизнеса. Журнал «Банковское дело в Москве» 1999г. N 12.

գործոն, քանի որ տվյալ սուբյեկտն այդ ժամանակահատվածում արդեն իսկ ենթարկվել է ստուգումների, նախ և առաջ, հարկային մարմինների կողմից: Անգամ ԱՄՆ-ում փոքր ձեռնարկությունների ընդամենը 25 տոկոսն է հաղթահարում եռամյա ժամանակահատվածը:³⁸

Հարկ է նշել, որ ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում ՓՄՁ ոլորտի դերն ու նշանակությունը դրսևորվում է ոչ միայն քանակական, այլ նաև ֆունկցիոնալ նշանակության խնդիրների լուծմանն անմիջական մասնակցությամբ: Վերջիններիս շարքին կարելի է դասել տնտեսական կառուցվածքի փոփոխություններով պայմանավորված բացասական հետևանքների մեղմումը, մրցակցային միջավայրի զարգացումը, ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, մակրոտնտեսական գործընթացների կայունացումը, ինֆլացիոն ներուժի զարգացումը և այլն: Շատ դեպքերում ՓՄՁ ոլորտի սուբյեկտներն են զբաղվում այնպիսի ապրանքների և արտադրության մեջ օգտագործվող սարքավորումների արտադրությամբ, որը խոշոր բիզնեսի հետաքրքրությունների շրջանակից դուրս է: Այլ կերպ ասած, ՓՄՁ սուբյեկտները հանդես են գալիս յուրօրինակ օժանդակողի և խոշոր բիզնեսի հետ կոոպերացիոն հարաբերությունների մասնակիցներից մեկ դերում: Ավելին, ՓՄՁ սուբյեկտների կողմից մանր սերիական մասնագիտացված արտադրությունների կազմակերպումը և իրականացումը խոշոր բիզնեսի հետ համագործակցության յուրահատուկ դրսևորում է:

Հաջորդ կարևոր խնդիրը, որի լուծմանն իր յուրահատուկ մասնակցությունն է ունենում ՓՄՁ ոլորտը, դա մրցակցային միջավայրի զարգացումն է: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ նշված ոլորտին պատկանող յուրաքանչյուր սուբյեկտ առանձին վերցրած չի կարող դիմանալ խոշոր բիզնեսի հետ մրցակցությանը: Սակայն որպես տնտեսության առանձին սեկտոր ՓՄՁ ոլորտն ապահովում է շուկայում որոշակի մրցակցություն և հնարավորություն չի տալիս խոշոր բիզնեսին էական ներգործություն ունենալ ոչ շուկայական մեխանիզմների վրա հիմնված գնագոյացման և ապրանքների ու ծառայությունների բաշխման գործընթացի վրա: Միևնույն ժամանակ, նման մրցակցությունն, իր հերթին, խթանում է նորարարությունների ներդրմանը, նոր

³⁸Вдовенко А. Малый бизнес –символ, но не конкурент. 2009г. <http://tztver.ru/articles/detail/84>

գաղափարների և ձեռնարկատիրական հակումների իրացմանը, ինչպես նաև աշխատանքային, տեխնոլոգիական, կազմակերպական և այլ ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը:

ՓՄՁ ոլորտի դերը չափազանց մեծ է նաև սոցիալական խնդիրների լուծման գործում: Ըստ էության, ՓՄՁ ոլորտը հասարակական կյանքում ավելի շատ իրականացնում է սոցիալական, քան տնտեսական գործառույթ: Իհարկե, ինչպես արդեն նշվեց, այն կարևոր նշանակություն ունի մի շարք ցանկալի տնտեսական ցուցանիշների ապահովման գործում: Սակայն, դրանով հանդերձ, այն, նախ և առաջ նպաստում է հասարակական կյանքի կայունության ապահովմանը, այդ թվում նաև սոցիալական խնդիրների լուծմանը, ընտանեկան բիզնեսի զարգացմանը, ձեռնարկատիրական հակումների իրացմանը և երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը: Մեծ է ՓՄՁ ոլորտի ազդեցությունը նաև երկրի քաղաքական կյանքի կայունության վրա: Հանդիսանալով միջին խավի ձևավորման հիմնական հարթակ, փոքր և միջին բիզնեսը մեծ հակվածություն է ցուցաբերում ժողովրդավարական արժեքների, քաղաքական կայունության և տնտեսական ազատության հանդեպ:

Երկրի տնտեսական և հասարակական կյանքում ՓՄՁ ոլորտը ևս մեկ, մեր կարծիքով, չափազանց կարևոր գործառույթ է իրականացնում, որը դրսևորվում է տարածքային զարգացման գործընթացում ունեցած էական մասնակցության մեջ: Հայտնի է, որ տնտեսական և սոցիալական լարվածությունն առավել վառ է արտահայտվում երկրի թույլ զարգացած ենթակառուցվածքներ ունեցող տարածաշրջաններում, որոնք, հեռու գտնվելով առևտրաարդյունաբերական կենտրոններից, բազմաթիվ դժվարություններ ունեն տնտեսական կյանքի կազմակերպման հարցում: Այս առումով, նման տարածաշրջանների զարգացման գործում մեր դերակատարում կարող է ունենալ ՓՄՁ ոլորտը, որն օգտագործելով արտադրատնտեսական գործունեության կազմակերպման իրեն բնորոշ առավելությունները, հնարավորություն ունի էականորեն նպաստելու տարածքային զարգացմանը: Եվ պատահական չէ, որ ՓՄՁ ոլորտի գործունեությունն ունի ընդգծված տարածաշրջանային բնույթ և առևտրաարդյունաբերական կենտրոններից

հեռավորությունը ավելի շատ խթանիչ գործոն է հանդիսանում ՓՄՁ սուբյեկտների համար:

Իր ունեցած բազմաթիվ առավելություններով հանդերձ, ՓՄՁ ոլորտն ունի մեկ կարևոր առանձնահատկություն: Ինչպես վերը նշվեց, այն մեծապես պայմանավորում է երկրի տնտեսական և սոցիալական զարգացման ընթացքը և նպաստում է տնտեսական համակարգում գոյություն ունեցող մի շարք հիմնախնդիրների լուծմանը: Սակայն ռեսուրսային սահմանափակումներով պայմանավորված, փոքր և միջին ձեռնարկությունների գործունեությունը չափազանց անկայուն է: Փաստորեն, գոյություն ունի մի իրավիճակ, որի պայմաններում ՓՄՁ ոլորտը որոշակի ազդեցություն ունի շուկայական հարաբերությունների զարգացման վրա, իսկ մյուս կողմից՝ այդ հարաբերությունների արդյունքում ձևավորված տնտեսական միջավայրը սահմանափակում է ՓՄՁ սուբյեկտների գործունեությունը: Նման իրավիճակում ակնհայտ է դառնում պետական աջակցության անհրաժեշտությունը և կարևորությունը, որի հիմնական խնդիրը վերը նշված հակադրության հնարավորինս մեղմումն է:

Ամփոփելով, պետք է նշել, որ ՓՄՁ ոլորտն իր այնպիսի առավելություններով, ինչպիսիք են տնտեսական կոնյունկտուրայի փոփոխություններին արագ և ճկուն հարմարվելու ընդունակությունը, որոշումների ընդունման և իրականացման օպերատիվությունը, գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի համեմատաբար փոքր ծավալը, անհատի գաղափարների և ձեռնարկատիրական ձիրքի իրացման մեծ հնարավորությունները մեծապես նպաստում են տնտեսական համակարգում գոյություն ունեցող տարբեր հիմնախնդիրների լուծմանը: Մասնավորապես, բնակչության զբաղվածության և ՀՆԱ-ի աճի ապահովման գործում ՓՄՁ ոլորտի դերը անգնահատելի է: Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրության տվյալ տեսակի արդյունավետ գործունեության ապահովումը ենթադրում է համապատասխան միջավայրի ձևավորում, որին էլ պետք է ուղղված լինի այդ նպատակով իրականացվող պետական աջակցությունը: Վերը նշված հարցերի ուսումնասիրությանն է նվիրված ատենախոսության հաջորդ բաժինը:

1.3. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության տնտեսական հիմքերը

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական գործընթացներին պետության մասնակցությունը և անհրաժեշտության դեպքում հիմնավորված միջամտությունը կենսական անհրաժեշտություն են: Հայտնի է, որ տնտեսական բոլոր համակարգերում պետությունը միշտ էլ ունեցել է որոշակի մասնակցություն տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում: Խնդիրը պարզապես կայացել է դրա մասշտաբների և կիրառվող գործիքակազմի մեջ: Մասնավորապես, եթե շուկայական տնտեսության պայմաններում տնտեսության պետական կարգավորման մասշտաբները փոքր են, ապա նույնը չի կարելի ասել կենտրոնացված կառավարման համակարգերի մասին: Ըստ էության, տարբեր են նաև պետական կարգավորման նպատակները, գործիքները և ինտենսիվությունը: Տնտեսության պետական կարգավորման հիմնական նպատակն է տնտեսական և սոցիալական կայունության ապահովումը, տնտեսական համակարգի զարգացումը, շարունակաբար փոփոխվող պայմաններին դրա ադապտացումը և, վերջին հաշվով, շուկայի անկատարությունների բացասական հետևանքների մեղմումը կամ դրանց կանխարգելումը:

Շուկայական հարաբերությունների պայմաններում պետությունն իր առջև դրված խնդիրների լուծման և սահմանված նպատակների ձեռք բերման համար կիրառում է կարգավորման տարբեր մեթոդներ և գործիքներ՝ այդ թվում ֆինանսավարկային մեխանիզմներ և հարկաբյուջետային լծակներ: Ընդ որում, որպես կանոն, տնտեսական վերափոխումների և ճգնաժամային իրավիճակների պայմաններում պետության դերը մեծանում է, իսկ կայունության դեպքում՝ նվազում: Սակայն բոլոր դեպքերում պետության ներգործությունը տնտեսության և ձեռնարկատիրական գործունեության վրա միշտ գոյություն կունենա այն մասշտաբներով և ձևերով, որոնք հնարավորություն կտան բացառել ճգնաժամային երևույթները և շուկայական համակարգի բնականոն գործունեության խաթարումը:

Պետությունը զարգացման գրեթե բոլոր փուլերում այս կամ այն աստիճանով միջամտել է տնտեսական գործընթացներին՝ հատկապես կարևորելով այն ոլորտները և ճյուղերը, որոնք երկրի զարգացման տեսանկյունից ունեն ռազմավարական նշանակություն: Ըստ էության, ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը պետք է դիտարկել տնտեսության պետական կարգավորման համատեքստում, քանի որ բացառապես շուկայական օրենքների գործողության պայմաններում տվյալ ոլորտի զարգացման հնարավորությունները միանշանակ բացառվում են: Այս տեսանկյունից, ՓՄՁ ոլորտի պետական աջակցությանը հիմնավորված և արդարացված է, ինչի մասին է վկայում նաև միջազգային փորձը:³⁹ ՓՄՁ ոլորտի սուբյեկտները, հատկապես իրենց կայացման փուլում, բախվում են մի շարք դժվարությունների հետ, կապված նախնական կապիտալի ձևավորման, շրջանառության ծավալների ավելացման և ֆինանսավորման աղբյուրների ընդլայնման հետ: Բացի այդ, ՓՄՁ շատ սուբյեկտներ գործունեություն են իրականացնում ռիսկային ոլորտներում, առավել ցավազին են տանում շուկայական կոնյունկտուրայի փոփոխությունները, խիստ խոցելի են խոշոր քիզնեսի հետ մրցակցության պայմաններում: Այս ամենն, անշուշտ, պետության կողմից ՓՄՁ ոլորտի աջակցության անհրաժեշտություն են ստեղծում, որն, իր հերթին, հանդես է գալիս որպես պարտադիր պայման դրա բնականոն կենսագործունեության ապահովման համար: ՓՄՁ պետական աջակցությունն, ըստ էության, պետք է առաջին հերթին ուղղված լինի տվյալ ոլորտի սուբյեկտների կայացման, բնականոն գործունեության ապահովման և զարգացման համար բարենպաստ պայմանների ձևավորմանը: ՓՄՁ պետական աջակցության համակարգն իրենից ներկայացնում է որոշակի տարրերի համախումբ, որոնք կառավարման տարբեր մակարդակներում կարգավորիչ ներգործություն են իրականացնում՝ փոքր և միջին ձեռնարկությունների համար սոցիալ-տնտեսական բարենպաստ պայմանների ձևավորման նպատակով: Ըստ էության, պետական աջակցության համակարգում ընդգրկված են նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց հիմնական խնդիրը սոցիալ-տնտեսական, իրավական, կազմակերպական պայմանների և

³⁹Авилова А.,Голикова В. Государственная поддержка малого бизнеса на региональном уровне. Предпринимательство в России. N 3, 1997 г.,Тэпман Л. Малый бизнес: опыт зарубежных стран. Юнити-Дана. М. 2004г. стр. 29-32

խթանների ստեղծումն է տվյալ ոլորտի արդյունավետ և կայուն զարգացման համար: Հետևաբար, կարելի է պնդել, որ ՓՄՁ պետական աջակցությունը հանդիսանում է տնտեսության պետական կարգավորման կարևոր ուղղություններից:

Բնականաբար, սահմանված նպատակների ձեռք բերման և դրված խնդիրների լուծման համար ՓՄՁ պետական աջակցության համակարգը պետք է հիմնվի համապատասխան սկզբունքների վրա և բավարարի որոշակի պայմանների, որոնցից հատկապես կարելի է առանձնացնել տարբերակվածությունը և հասցեականությունը: Առաջինը նշանակում է, որ պետական աջակցությունը, նախ և առաջ, պետք է ցուցաբերվի տնտեսական զարգացման համար գերակա նշանակություն ունեցող ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտներին: Հասցեականությունը ենթադրում է, որ պետության կողմից տրամադրված աջակցությունից պետք է օգտվեն բացառապես ՓՄՁ սուբյեկտները: Դա, անշուշտ, պահանջում է ՓՄՁ սուբյեկտների դասակարգման այնպիսի չափորոշիչների մշակում և կիրառում, որոնք առավելագույնս հնարավորություն կտան բացահայտել տվյալ ոլորտի սուբյեկտներին և կբացառեն պետական աջակցությունից խոշոր ձեռնարկությունների օգտվելու հնարավորությունները:

ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համար կիրառվում են այնպիսի գործիքներ, ինչպիսիք են ֆինանսավարկային լծակները, հարկային արտոնությունները, ռեսուրսների մատչելիության բարձրացման ուղղությամբ մեխանիզմների ներդրումը, պետական նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը, կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգի պետական ֆինանսավորումը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը, տեղեկատվական աջակցությունը, արտաքին տնտեսական գործունեության կազմակերպման և իրականացման աջակցությունը և այլն: Բնականաբար, աջակցության նշված տեսակների նկատմամբ ՓՄՁ սուբյեկտների պահանջարկը տարբեր է՝ կախված ազգային տնտեսության առանձնահատկություններից և առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներից: Այս տեսանկյունից, պետական աջակցության տրամադրման ժամանակ շեշտադրումը պետք է կատարվի հատկապես այն ուղղությունների վրա,

որոնք առավելագույնս կապահովեն ՓՄՁ սուբյեկտների գործունեության առումով գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծումը:

Ընդհանուր առմամբ, շուկայական հարաբերությունների պայմաններում ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցությունն իրենից ներկայացնում է որոշակի սկզբունքների, ձևերի և մեխանիզմների ամբողջություն, որոնք դրսևորվում են նորմատիվ իրավական ապահովման, տնտեսական հարաբերությունների մասնակիցների գործունեության վերահսկողության և հավասար պայմանների ապահովման մեջ: Խոշոր հաշվով, ձեռնարկատիրության պետական կարգավորման էությունը կարելի է ներկայացնել երկու հիմնարար գործառույթների տեսքով, որոնցից առաջինը ենթադրում է ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների ստեղծման խթանում, իսկ երկրորդը՝ նրանց միջև մրցակցային միջավայրի ձևավորում: Ըստ էության, ձեռնարկատիրության պետական կարգավորումն իրականացվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի մեթոդների միջոցով: Առաջինն իրենց ներկայացնում է պետության կողմից ձեռնարկատիրության սուբյեկտներին ներկայացվող պարտադիր կատարման ենթակա պահանջների համախումբ: ՓՄՁ ուղղակի աջակցությունն իր մեջ ներառում է բյուջետային սուբսիդիաները, վարկային տոկոսադրույքի սուբսիդավորումը, բյուջետային և վարկային երաշխիքների և հարկային արտոնությունների տրամադրումը: Անուղղակի մեթոդները ենթադրում են տնտեսական հարաբերությունների մասնակիցների վրա ներգործություն նրանց գործունեության շրջանակների հստակեցման միջոցով, որի արդյունքում նրանց այս կամ այն վարքագիծը կարող է լինել ձեռնտու կամ ոչ: Անուղղակի աջակցության դրսևորումներ են հանդիսանում պետական պատվերների որոշակի մասի տեղաբաշխումը ՓՄՁ սուբյեկտներին, վենչուրային ֆինանսավորումը, ինչպես նաև այնպիսի ժամանակակից մեթոդների կիրառումը, ինչպիսիք են բիզնես ինկուբատորների, տեխնոպարկերի և զարգացման կենտրոնների ստեղծումը: Համեմատելով պետական աջակցության վերոհիշյալ մեթոդները, կարող ենք արձանագրել, որ առաջինները զգալիորեն սահմանափակում են տնտեսական ընտրության ազատությունն այն դեպքում, երբ երկրորդները տնտեսավարող սուբյեկտներին տալիս են ավելի մեծ ազատություն որոշումների կայացման

գործընթացում: Այլ հարց է, որ այդ ընտրությունը տեղի է ունենում պետության համար ցանկալի սցենարներով:

ՓՄՁ ոլորտի կայացումը և զարգացումն էականորեն պայմանավորված է տվյալ ոլորտի սուբյեկտների արտաքին միջավայրով: Վերջինս իր մեջ ընդգրկում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են ռեսուրսային շուկաները, շուկայական ինստիտուտները և կառույցները (պետական մարմինները, ֆինանսավարկային ինստիտուտները, հիմնադրամները և այլն), օրենսդրական դաշտը, մակրոտնտեսական միջավայրը, սոցիալ-քաղաքական գործընթացները և պետական աջակցության համակարգը: Չնայած վերոհիշյալ բոլոր տարրերի մասնակցությունը խիստ առարկայական ու մեծ է ՓՄՁ ոլորտի արդյունավետ գործունեության ապահովման հարցում, այնուհանդերձ, նշվածներից իր կարևորությամբ առանձնանում է հատկապես պետական աջակցության համակարգը, որն իրենից ներկայացնում է պետության կողմից տնտեսության տվյալ հատվածի զարգացման և գործունեության համար բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով իրականացվող միջոցառումների և գործողությունների համախումբ: Ընդհանուր առմամբ, արտաքին միջավայրը խիստ մեծ նշանակություն ունի ՓՄՁ ոլորտի զարգացման համար և, այս տեսանկյունից, պետական քաղաքականության հիմնական խնդիրը դրանում ընդգրկված տարրերի բացասական ազդեցության հնարավորինս մեղմումն ու չեզոքացումն է: Միևնույն ժամանակ, ՓՄՁ ոլորտի զարգացման խոչընդոտները, այս կամ այն կերպ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են վերը թվարկված տարրերի հետ: Հետևաբար, տվյալ ոլորտի զարգացումը կարող է տեղի ունենալ արտաքին միջավայրի բարելավման արդյունքում, ինչն էլ պետք է հանդիսանա այդ ուղղությամբ պետական քաղաքականության հիմնական նպատակ և խնդիր:

Անշուշտ, հասարակության և պետության տնտեսական կյանքում ՓՄՁ ոլորտի ունեցած կարևոր դերակատարումը պայմանավորում է այդ ոլորտի զարգացման անհրաժեշտությունը: Ինչպես ցույց է տալիս զարգացած երկրների փորձը, վերոհիշյալ խնդրի լուծումն առանց պետական աջակցության հնարավոր չէ, պայմանավորված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Մեկնարկային անհավասար պայմանները, ֆինանսատնտեսական սահմանափակ կարողությունները

հնարավորություն չեն տալիս այդ ոլորտին գործել խոշոր բիզնեսի կողքին և մրցակցել վերջինիս հետ: Եվ, այս առումով, ձեռնարկատիրության բոլոր սուբյեկտների նկատմամբ հավասար մոտեցման ցուցաբերումը կարող է բացասաբար անդրադառնալ փոքր և միջին բիզնեսի վրա՝ խոշոր բիզնեսի մրցակցությանը չդիմանալու պատճառով: Այդ իսկ պատճառով, փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցությունն, ըստ էության, այլընտրանք չունի:

ՓՄՁ զարգացումը արդյունավետ նախադրյալ է հանդիսանում բնակչության կենսամակարդակի շարունակական բարձրացման, զբաղվածության ապահովման, և վերջին հաշվով, տնտեսական համակարգի բնականոն գործունեության համար: Այն հնարավորություն է տալիս մեղմել տնտեսական ու սոցիալական դժվարությունները՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծելով տնտեսության զարգացման համար: Ակնհայտ է, որ տվյալ ոլորտի կայացման և զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը շուկայական տնտեսության պայմաններում պետության կարևոր գործառույթներից է հանդիսանում:

Պետք է հաշվի առնել, որ իր առանձնահատկություններով պայմանավորված ՓՄՁ ոլորտն առավել զգայուն է արտաքին միջավայրի փոփոխությունների նկատմամբ: Անգամ տնտեսության բնականոն գործունեության պայմաններում այն բավականաչափ խոցելի է: Այս տեսանկյունից, ՓՄՁ զարգացումը հնարավոր է ապահովել միայն պետության կողմից գործուն աջակցության ցուցաբերման պարագայում՝ այդ նպատակով համալիր միջոցառումներ իրականացնելու միջոցով: Հանդիսանալով տնտեսական համակարգի կարևոր օղակներից, հատկապես կայացման փուլում փոքր և միջին ձեռնարկությունները բախվում են մի շարք դժվարությունների հետ: Բացի այդ, նշված սուբյեկտների զգալի մասն իր գործունեությունն իրականացնում է առավել ռիսկային ոլորտներում, ինչը, իր հերթին, որոշակի դժվարություններ է ստեղծում: Նման պայմաններում, անշուշտ, պետական աջակցությունը դառնում է հրամայական պահանջ: Խոշոր հաշվով, ՓՄՁ պետական աջակցության համակարգն իրենից ներկայացնում է որոշակի տարրերի համախումբ, որոնք պետական և տեղական մակարդակներում կարգավորիչ ներգործություն են ունենում այդ ոլորտի կայացման և

զարգացման համար սոցիալ-տնտեսական, քաղաքական և իրավական բարենպաստ պայմանների ձևավորման նպատակով:

Փոքր և միջին բիզնեսի պետական աջակցության համակարգը հանդիսանում է տնտեսության պետական կարգավորման կարևոր ուղղություններից և ուղղված է առավելագույն ազդեցության ապահովմանը: Պետական աջակցության քաղաքականության իրականացումը, ակնհայտորեն, պահանջում է համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում, պետական ծրագրերի ընդունում և իրականացում, ինչպես նաև այնպիսի լծակների կիրառում, որոնք կապահովեն ֆինանսավարկային ռեսուրսների մատչելիության բարձրացում, պետական պատվերների իրականացման գործընթացին ՓՄՁ սուբյեկտների ներգրավում, փոխհատուցումների համակարգի ներդրում, ադմինիստրատիվ խոչընդոտների վերացում, գրանցման գործընթացի և ընթացակարգերի պարզեցում և այլն: ՓՄՁ պետական աջակցության համակարգի ընդհանուր տարրեր պետք է հանդիսանան ֆինանսավարկային լծակները, հարկային արտոնությունները, արտադրանքի իրացմանն օժանդակությունը, պետական ծրագրերի մշակումը և իրականացումը, ձեռնարկատիրական գործունեությունը կանոնակարգող օրենսդրաիրավական բազայի ձևավորումը և կատարելագործումը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը, արտաքին տնտեսական գործունեության կազմակերպման և իրականացման աջակցությունը և այլն:

ՓՄՁ պետական աջակցության քաղաքականության գերակա ուղղությունների շարքին են դասվում շուկայում փոքր և միջին ձեռնարկությունների հնարավորությունների ընդլայնումը, ֆինանսավարկային ռեսուրսների մատչելիության ապահովման միջոցով մենաշնորհային շուկաներ մուտքի անբարենպաստ պայմանների փոխհատուցումը, գրանցման և լիցենզավորման գործընթացներում ավելորդ ադմինիստրատիվ սահմանափակումների վերացումը և այլն: Այդ ուղղությամբ պետական ռազմավարությամբ պետք է սահմանվեն փոքր և միջին բիզնեսի աջակցության նպատակները և հիմնադրույթները, ինչպես նաև այդ քաղաքականության իրականացման մեխանիզմները և կազմակերպական կառուցվածքները:

Ըստ էության, ինչպես ցույց է տալիս զարգացած երկրների փորձը, փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության քաղաքականությունը պետք է ուղղված լինի համապատասխան մեխանիզմների ներդրմանը և օրենսդրական ապահովվածությանը, պետական և տեղական մակարդակներում աջակցության կոնկրետ միջոցառումների իրականացմանը, որոնց հիմնական նպատակը տվյալ ոլորտի զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը կլինի:⁴⁰

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ փոքր, միջին և խոշոր բիզնեսները յուրաքանչյուր երկրի տնտեսական կյանքում ունեն տարբեր դերակատարումներ և նրանցից յուրաքանչյուրն իր յուրովի մասնակցությունն ունի տնտեսական զարգացման գործում: Խոշոր բիզնեսը, որպես կանոն, պայմանավորում է պետության տնտեսական հզորությունը և հանդիսանում է վերջինիս ցուցիչ: Իր գործունեության յուրահատկություններով պայմանավորված, խոշոր բիզնեսը հակված է ինտեգրացիոն գործընթացների և միջազգային կառույցների հետ համագործակցության խորացմանը, ինչի արդյունքում շատ դեպքերում մասնակիորեն կորցնում է իր անկախությունը և առավել ցայտուն կերպով զգում իր առավել հզոր գործընկերների վարքագծի փոփոխությունը: Պատահական չէ, որ հիմնականում խոշոր կապիտալն է հանդիսանում տնտեսական էքսպանսիաների գործիք և ներքին շուկայում տնտեսական իրավիճակի վրա ներգործության կարևոր միջոց: Միջին բիզնեսն իր գործունեությունը հիմնականում իրականացնում է ներքին շուկայում և ապահովում է որոշակի մրցակցություն խոշոր բիզնեսի հետ: Ակնհայտ է, որ տնտեսության տվյալ հատվածի գործունեության հաջողությունը մեծապես պայմանավորված է ներքին տնտեսական կոնյուկտուրայով, ինչը ենթադրում է պետության կողմից համապատասխան միջավայրի ձևավորում՝ այդ թվում նաև հովանավորչական քաղաքականության իրականացման միջոցով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ, մի կողմից, փոքր և միջին բիզնեսը հանդես է գալիս որպես մրցակցության ապահովման կարևոր կողմ, իրականացնում է սոցիալական գործառույթ, նպաստում է ձեռնարկատիրական հակումների իրացմանը, իսկ մյուս կողմից, առանց համապատասխան պետական աջակցության այն հնարավորություն

⁴⁰Усачев Ю. Проблемы развития малого бизнеса в мировой экономике.Изд. Научная книга. М. 2009г. стр. 97

չունի կայանալու, զարգանալու և դիմագրավելու խոշոր բիզնեսի կողմից հնարավոր վտանգներին: Այլ կերպ ասած, չնայած խոշոր բիզնեսի դերը չափազանց մեծ է երկրի տնտեսական հզորությունների ձևավորման և զարգացման գործում, միևնույն ժամանակ, փոքր և միջին բիզնեսն էլ հանդես է գալիս որպես շուկայական տնտեսավարման հիմնական եղանակներից մեկը: Այստեղ պարզապես խնդիրը կայանում է նրանում, որ խոշոր բիզնեսի, մի կողմից, և փոքր ու միջին բիզնեսի, մյուս կողմից, միջև չստեղծվի արհեստական հակադրություն: Այլ կերպ ասած, տնտեսության տվյալ հատվածները պետք է գործեն ոչ թե միմյանց բացառման, այլ փոխլրացման սկզբունքով: Դա հիմնականում դրսևորվում է կոոպերացիոն համագործակցության խորացման, գործընկերային հարաբերությունների ձևավորման և այլ եղանակներով: Ըստ էության, նման գործելաոճը ձեռնտու է նաև հենց խոշոր բիզնեսին, որն իր արտադրական գործընթացի համար անհրաժեշտ առանձին ապրանքների արտադրությունը հանձնարարում է փոքր և միջին ձեռնարկություններին: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ փոքր և միջին բիզնեսի զարգացումը ունի որոշակի ճյուղային մասնագիտացում: Նշված ոլորտին պատկանող սուբյեկտներն իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսության այն ճյուղերում, որոնք չեն պահանջում և արտադրական մեծ հզորություններ, մեծ կապիտալատարություն, ունեն որոշակի տեխնոլոգիական առանձնահատկություններ, և այլն: Դրանք, որպես կանոն, խոշոր բիզնեսի գործունեության հիմնական ոլորտներն են հանդիսանում: Մասնավորապես, տնտեսության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են ավտոմոբիլաշինությունը, քիմիական և մետալուրգիական արդյունաբերությունը, դեղագործությունը խոշոր բիզնեսի հետարքրքրությունների դաշտում են գտնվում:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը յուրաքանչյուր երկրի համար ունի առանցքային նշանակություն: Ընդ որում, ձեռնարկատիրության սեկտորներից յուրաքանչյուրն իր ուրույն դերակատարումն ունի այդ գործում: ՓՄՁ ոլորտի աջակցության պետական քաղաքականությունը խիստ կախվածության մեջ է գտնվում երկրի ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակից և բյուջետային հնարավորություններից: Դրանով հանդերձ, անժխտելի է, որ տնտեսական վերափոխումների կուրս որդեգրած

ցանկացած պետության տնտեսական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը պետք է հանդիսանա ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համակարգի ներդրումը և զարգացումը: Նշված խնդիրը, հատկապես կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետության համար, քանի որ ՓՄՁ ոլորտն իր ներուժով ի վիճակի է էականորեն նպաստել տնտեսական և քաղաքական համակարգում առկա մի շարք հիմնախնդիրների լուծմանը: Կարող ենք պնդել, որ ՓՄՁ պետական աջակցությունը հանդիսանում է տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից, առանց որի, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, գրեթե բացառվում է տվյալ ոլորտի բնականոն գործունեությունը և զարգացումը: Հետևաբար, տնտեսության այդ ոլորտի զարգացումը ներկա փուլում դառնում է հրամայական պահանջ, ինչը ենթադրում է Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի հիմնախնդիրների բացահայտում, դրանց լուծմանն ուղղված մոտեցումների մշակում և պետական աջակցության գործուն և արդյունավետ համակարգի ձևավորում և շարունակական կատարելագործում:

ԳԼՈՒԽ 2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի վիճակը և զարգացման միտումները

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին իրականացված տնտեսական բարեփոխումների հիմնական նպատակը շուկայական տնտեսությանը բնորոշ հարաբերությունների, ինստիտուտների և կառավարման համակարգի ձևավորումն էր, որոնց դրսևորում հանդիսացան գների և արտաքին առևտրի ազատականացումը, պետական գույքի մասնավորեցումը, սեփականության բազմաձևության ու մրցակցության հավասար պայմանների ապահովումը, ֆինանսական շուկայի ինստիտուտների ձևավորումը և կայացումը, շուկայական տնտեսության պահանջներին բավարարող հարկաբյուջետային և դրամավարկային համակարգերի ձևավորումը և զարգացումը, պետական կառավարման համակարգի վերակառուցումը և կառավարման նոր մեթոդների ու ձևերի յուրացումը, սոցիալական պաշտպանության և երաշխիքների համակարգի ձևավորումը և այլն: Բնականաբար, շուկայական հարաբերությունների արմատավորման նպատակով իրականացվող քաղաքականության հիմնական գերակայություններից էր հանդիսանում նաև ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը, որն, ինչպես հայտնի է, շուկայական տնտեսության կարևոր բաղադրիչներից և շարժիչ ուժերից է հանդիսանում: Տնտեսական վերափոխումների անցած տարիներին նշված ուղղություններով իրականացվել են որոշակի քայլեր՝ օրենսդրական դաշտի ձևավորման և դրանց կիրառումն ապահովող մեխանիզմների ներդրման առումներով: Ձեռնարկատիրության ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական խնդիրներից էր նաև ՓՄՁ ոլորտի կայացումը և զարգացումը, ինչի նպատակով բարեփոխումների սկզբնական փուլում համապատասխան քայլեր իրականացվեցին

տվյալ ոլորտի օրենսդրահրավական և կազմակերպական հիմքերի ձևավորման համար:

Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական միջավայրի ուսումնասիրության համար հատկապես անհրաժեշտ է առանձնացնել ՓՄՁ սուբյեկտների արտաքին և ներքին միջավայրերը, որոնցում ձևավորվող գործոններն իրենց որոշակի ազդեցությունն են ունենում նման ձեռնարկությունների գործունեության վրա: Ներքին միջավայրն իրենից ներկայացնում է ֆունկցիոնալ տարրերի համախումբ, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է գործունեության իր օբյեկտով և հարաբերություններով: Մասնավորապես, դրանք կարելի է դասակարգել երեք հիմնական խմբերում.

- արտադրության գործընթացի փուլեր. մատակարարում, արտադրություն, իրացում,
- կառավարչական գործընթաց. պլանավորում, օպերատիվ կառավարում, վերահսկողություն, հաշվառում,
- կադրային ապահովվածություն, կառավարման ձև և բնույթ, ֆինանսներ, իրավական հարաբերություններ, սեփականության ձև:

Ինչ վերաբերում է ՓՄՁ սուբյեկտների արտաքին միջավայրին, ապա այն կարելի է սահմանել որպես գործոնների համալիր, որոնցից կախված է այդ ձեռնարկության գործունեությունն ընդհանրապես: Արտաքին միջավայրի տարրերը կարելի է դասակարգել վեց հիմնական խմբերում.

1. ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ,
2. պետական և ֆինանսական ինստիտուտներ, հիմնադրամներ, խոշոր ձեռնարկություններ և այլ ինստիտուտներ, որոնց հետ ձեռնարկատերը տնտեսական գործունեության իրականացմամբ պայմանավորված մտնում է փոխհարաբերությունների մեջ,
3. ձեռնարկատիրական գործունեությանը կարգավորող օրենսդրական դաշտ և իրավական մեխանիզմներ.
4. տնտեսական իրավիճակը պայմանավորող գործոններ և գործարար միջավայր,

5. երկրում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական և սոցիալական գործընթացներ, ազգային առանձնահատկություններ,

6. ՓՄՁ պետական աջակցության համակարգ:

ՓՄՁ ոլորտի արտաքին միջավայրի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն աչքի է ընկնում անորոշության բարձր աստիճանով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ սուբյեկտները հիմնականում գործում են տեղական շուկաներում, որոնցում տեղի ունեցող գործընթացների և զարգացումների կանխատեսելիության աստիճանը զգալիորեն ցածր է: Միևնույն ժամանակ, արտաքին միջավայրի այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենսդրական դաշտի փոփոխությունները, ֆինանսավարկային ինստիտուտների վարքագիծը, վարվող պետական քաղաքականությունը, անմիջական և առարկայական ազդեցություն են ունենում ՓՄՁ ոլորտի վրա: Դա, իր հերթին, հանգեցնում է ՓՄՁ ներքին միջավայրի փոփոխություններին, ստիպելով ձեռնարկատերերին մշակել համապատասխան լուծումներ բացասական դրսևորումներից խուսափելու նպատակով:

Կարելի է նշել, որ ցանկացած երկրում ՓՄՁ ոլորտն իր վրա կրում է արտաքին և ներքին միջավայրի տարրերի ազդեցությունը: Այս տեսանկյունից, իրականացվող պետական քաղաքականությունն, առաջին հերթին, պետք է ուղղված լինի դրանց բացասական ազդեցության մեղմմանը և հնարավորության դեպքում վերացմանը: Ըստ էության, զարգացող և, մասնավորապես, շուկայական հարաբերություններին անցման փուլում գտնվող երկրներում դրանց ազդեցությունն առավել ընդգրկուն է և անմիջական, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Արտաքին միջավայրի առաջին խմբում ընդգրկված տարրերի կտրվածքով կարելի է ասել, որ դրա ազդեցությունը ՓՄՁ ոլորտի վրա անմիջական է, քանի որ այդ սուբյեկտները սեփական տնտեսական գործունեության կազմակերպման առումով լուրջ դժվարություններ ունեն անհրաժեշտ ռեսուրսների ձեռք բերման ժամանակ: Վերջիններիս դժվարահասանելիությունը փոքր և միջին ձեռնարկություններին դնում է անհավասար պայմանների մեջ, նվազեցնում է նրանց մրցակցային հնարավորությունները և դրանով իսկ անդրադառնում նրանց կողմից թողարկվող

ապրանքների և մատուցվող ծառայությունների մրցունակության վրա: Դա հատկապես վերաբերում է ֆինանսական ռեսուրսներին, հումքին, արտադրության միջոցներին, անշարժ գույքին, որոնք առանցքային նշանակություն ունեն տնտեսական գործունեության կազմակերպման համար: Կադրային ռեսուրսների հետ կապված ևս գոյություն ունեն որոշակի խնդիրներ հատկապես որակավորման և ձեռնարկատիրական կուլտուրայի ցածր մակարդակով պայմանավորված:

Արտաքին միջավայրի վրա ազդող գործոնների երկրորդ խումբը կապված է ՓՄՁ սուբյեկտների և շուկայական ինստիտուտների փոխհարաբերությունների հետ: Այն դեպքերում, երբ պետությունը չի իրականացնում անհրաժեշտ հովանավորչական քաղաքականություն, ապա վերջիններս անհավասար մրցակցության մեջ են հայտնվում ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ձեռնարկությունների հետ: Միևնույն ժամանակ, ադմինիստրատիվ արգելքների և բյուրոկրատական քաշքշուկների առկայությունը խիստ բացասաբար են անդրադառնում ՓՄՁ ոլորտի գործունեության վրա: Խոշոր բիզնեսի հետ համագործակցության այնպիսի ժամանակակից ձևերի բացակայությունը, ինչպիսիք են ֆրանչայզինգը, վենչուրային ֆինանսավորումը և այլն, խիստ սահմանափակում են ՓՄՁ ոլորտի գործունեության հնարավորությունները: Իր բացասական անդրադարձն է ունենում նաև շուկայական ենթակառուցվածքների այն ինստիտուտների զարգացման ցածր մակարդակը, որոնց գործունեությունն ուղղակիորեն և անուղղակիորեն առնչվում է ՓՄՁ սուբյեկտների հետ: Դրանցից հատկապես կարելի է առանձնացնել տեխնոպարկերը, վենչուրային հիմնադրամները, ձեռնարկատիրության աջակցության գործակալությունները և այլն:

Գործոնների երրորդ խումբը, որը բացասաբար է անդրադառնում ՓՄՁ ոլորտի գործունեության վրա, օրենսդրական դաշտի անկատարությունն է: Խաղի կանոնների հաճախակի փոփոխությունը, որը, հատկապես դրսևորվում է հարկման պայմանների առումով, հնարավորություն չի տալիս ՓՄՁ սուբյեկտների իրականացնելու երկարաժամկետ պլանավորում տնտեսական գործունեության կազմակերպման առումով:

Հաջորդ խումբն իր մեջ ընդգրկում է տնտեսական բնույթի այնպիսի գործոններ, ինչպիսիք են վարկային բարձր տոկոսադրույքը, տնտեսական իրավիճակի

անորոշությունը և անկանխատեսելիությունը, ոչ շուկայական հարաբերությունների առկայությունը, փոխարժեքի հաճախակի տատանումները, գնաճի մակարդակը և այլն, որոնք մեծացնում են ՓՄՁ սուբյեկտների գործունեության առանց այն էլ բարձր ռիսկայնությունը:

Եվ վերջապես, գործոնների վերջին խումբը կապված է սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների և քաղաքական իրավիճակի հետ: Ստվերայինության բարձր մակարդակը, ներդրումային ցածր գրավչությունը բացասաբար են ազդում ՓՄՁ ոլորտի վրա, սահմանափակելով վերջինիս զարգացման հնարավորությունները:

Ակնհայտ է, որ ՓՄՁ ոլորտի արդյունավետ գործունեությունը ենթադրում է վերը նշված գործոնների համակողմանի գնահատում և դրանց բացասական ազդեցության կանխարգելում: Այս տեսանկյունից, ինչպես նշված խնդրի լուծումը, այնպես էլ ՓՄՁ ոլորտի կենսունակության բարձրացումը և զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը հնարավոր է միայն այդ ուղղությամբ համալիր և համակարգված պետական քաղաքականության մշակման և իրականացման դեպքում, որում իր առանցքային տեղն ունի տվյալ ոլորտի պետական աջակցության համակարգը: Ընդ որում, վերջինիս գործունեության արդյունավետությունը պահանջում է գործուն մեխանիզմների կիրառում, այլ ոչ թե հոչակագրային բնույթ կրող և դրվագային քայլերի իրականացում: ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համակարգը պետք է իրականացնի միջոցառումներ ինչպես ՓՄՁ արտաքին, այնպես էլ ներքին միջավայրերի բարելավման ուղղությամբ: Առաջինը պետք է ապահովի փոքր և միջին ձեռնարկությունների կենսագործունեության համար բարենպաստ պայմաններ, իսկ երկրորդը՝ նպաստի ռեսուրսային ապահովվածության հետ կապված խնդիրների լուծմանը:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի կայացման և զարգացման առումով կարևոր քայլ հանդիսացավ 2000 թվականի դեկտեմբերի 5-ին «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով սահմանվեցին ՓՄՁ սուբյեկտների որոշման չափորոշիչները և այդ ոլորտի պետական աջակցության հիմնական ուղղությունները:⁴¹ Հարկ է նշել, որ ի սկզբանե օրենքով

⁴¹ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք

սահմանված էր ՓՄՁ սուբյեկտների դասակարգման ընդամենը մեկ չափորոշիչ՝ աշխատողների թվաքանակը: 2011 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում վերը նշված չափորոշիչները, աշխատողների թվաքանակից բացի, լրացվեցին նաև իրացման հասույթով և ակտիվների հաշվեկշռային արժեքով: «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են այն չափորոշիչները, ըստ որոնց ձեռնարկատիրությամբ զբաղվող սուբյեկտները դասվում են ՓՄՁ ոլորտին: Մասնավորապես, դրանք հետևյալներն են:

Աղյուսակ 8⁴²

ՓՄՁ դասակարգման չափորոշիչները ՀՀ –ում


ՓՄՁ սուբյեկտներ	Աշխատողների թվաքանակ	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթ կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեք
Գերփոքր ձեռնարկություններ	մինչև 10	մինչև 100 մլն դրամ
Փոքր ձեռնարկություններ	մինչև 50	մինչև 500 մլն դրամ
Միջին ձեռնարկություններ	մինչև 250	մինչև 1500 մլն և 1000մլն դրամ

Հարկ է նկատել, որ ինչպես և շատ երկրներում, Հայաստանի Հանրապետությունում ևս ՓՄՁ ոլորտին դասվելու հիմնական չափորոշիչներից է հանդիսանում աշխատողների թվաքանակը: Միաժամանակ, բաշի նշված չափորոշիչից, ձեռնարկատիրության զբաղվող սուբյեկտները պետք բավարարեն նաև օրենքով սահմանված հասույթի կամ ակտիվների հաշվեկշռային արժեքի չափորոշիչներին ՓՄՁ սուբյեկտ հանդիսանալու համար: Գերփոքր կազմակերպությունների համար այն կազմում է տարեկան մինչև 100 մլն դրամ, իսկ փոքր և միջին կազմակերպությունների համար՝ համապատասխանաբար մինչև 500 մլն և 1500 ու 1000 մլն դրամ: Հատկանշական է, որ իրացման շրջանառության գծով չափորոշիչը մոտ 10 անգամ զիջում է ԵՄ անդամ պետություններում գործող չափորոշիչին (տես աղյուսակ 1): Այլ

⁴² «Փոքր և միջին ձեռնարկատիրչության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք

կերպ ասած, եթե Հայաստանի Հանրապետությունում միջին օրեկան 580 ԱՄՆ դոլար իրացման շրջանառություն ունեցող սուբյեկտն է համարվում գերփոքր ձեռնարկություն, ապա ԵՄ անդամ պետություններում դա կազմում է մոտ 6000 ԱՄՆ դոլար: Նշված հանգամանքը, փաստորեն, սահմանափակում է գերփոքր կազմակերպություն համարվելու հնարավորությունները և տարբեր երկրների հետ համեմատական վերլուծություններ իրականացնելու համար անհրաժեշտ համադրելիությունը չի ապահովում:

Ըստ էության, երկրում ՓՄՁ ոլորտի վիճակի և պետական աջակցության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշներից մեկն է հանդիսանում նման գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թվաքանակը: Հայաստանի Հանրապետությունում այն 2004-2015 թվականներին ունեցել է հետևյալ դինամիկան:



Գծապատկեր 5 ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2004-2015 թվականներին⁴³

Ինչպես նկատում ենք գծապատկեր 1-ի տվյալներից, նշված ժամանակահատվածում ՓՄՁ սուբյեկտների թվաքանակն ունեցել է հիմնականում տատանողական բնույթ: Ամենախոշոր անկումն արձանագրվել է 2010 թվականին, երբ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել է

⁴³ Գծապատկերը կազմվել է «Հաշվետվություն փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2009թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004-2005թթ.» «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.» «Ռազմավարություն փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների» Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հրապարակումների և <http://www.mineconomy.am> կայքի տվյալների հիման վրա, 2013 թվականի վերաբերյալ վիճակագրական տվյալները բացակայում են:

73296-ով կամ մոտ կրկնակի անգամ: Ակնհայտ է, որ դա հիմնականում պայմանավորված է եղել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներով: Այստեղից հետևում է, որ հանրապետությունում դրա հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները և կիրառված գործիքները բավարար չեն եղել ՓՄՁ ոլորտում ճգնաժամի բացասական հետևանքների մեղմման համար: Ընդ որում, պետք է նշել, որ 2014 թվականի դրությամբ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը դեռևս էականորեն զիջել է նախաճգնաժամային ժամանակահատվածում արձանագրած ցուցանիշին: Իհարկե, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ՓՄՁ սուբյեկտների առանձնահատկություններից է նրանց «կյանքի տևողությունը» և դա համընդհանուր երևույթ է հանդիսանում թե զարգացած, և թե զարգացող տնտեսությունների համար: Սակայն, անգամ այդ հանգամանքը հաշվի առնելով, միանշանակ կարելի է պնդել, որ ՓՄՁ ոլորտը հանրապետությունում դեռևս չի հաղթահարել ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները, ինչը հիմնականում պայմանավորված է պետական աջակցության համակարգի գործունեության ցածր արդյունավետությամբ:

Աղյուսակ 9⁴⁴

ՓՄՁ սուբյեկտների քանակի բաշխումն ըստ չափի
2010-2015 թվականներին


Ձեռնարկության չափը	2010	2011	2012	2014	2015
Գերփոքր	54819	63953	69096	68117	69939
Փոքր	3603	3824	3928	5109	4905
Միջին	845	905	901	1139	1112

Հայաստանի Հանրապետությունում 2010-2015 թվականներին ՓՄՁ սուբյեկտների կազմում գերակշիռ մաս են կազմել գերփոքր ձեռնարկությունները: Աղյուսակ 9-ի տվյալներից երևում է, որ Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների կազմում հիմնական մաս կազմում են

⁴⁴ Աղյուսակը կազմվել է «Հաշվետվություն փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.», «Ռազմավարություն փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների» Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հրապարակումների <http://www.mineconomy.am> կայքի տվյալների հիման վրա, 2013 թվականի վերաբերյալ վիճակագրական տվյալները բացակայում են:

գերփոքր ձեռնարկությունները, որոնց տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում 2015 թվականին կազմել է 92 տոկոս:

Ինչպես արդեն նշվեց աշխատանքի նախորդ բաժիններում, երկրում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում ՓՄՁ ոլորտի մասնակցության կարևոր ուղղություններից մեկն է հանդիսանում զբաղվածության ապահովումը: Ինչպես ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի դեպքում, այս ցուցանիշի գծով նույնպես ճգնաժամային փուլում արձանագրվել է կտրուկ անկում:




Գծապատկեր 6. ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռն ընդհանուր զբաղվածների թվում 2004-2015 թվականներին⁴⁵

Մասնավորապես, 2010 թվականին ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռն ընդհանուր զբաղվածների թվում կազմել է 21,8 տոկոս 2009 թվականին արձանագրված 42,2 տոկոսի դիմաց, այսինքն՝ գրանցվել է գրեթե կրկնակի անկում (տես գծապատկեր 6): Եվ չնայած 2010-2012 թվականներին արձանագրված աճին, ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռն ընդհանուր զբաղվածների թվում դեռևս զիջում է նախաճգնաժամային ցուցանիշը: Հատկանշական է այն հանգամանքը, որ այդ ցուցանիշի գծով 2004-2009 թվականներին գրանցվել է շարունակական աճ: Ընդ որում, 2004-2015 թվականներին հանրապետությունում այդ

⁴⁵ Գծապատկերը կազմվել է «Հաշվետվություն փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2009թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004-2005թթ.» «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.» «Ռազմավարություն փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների» Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հրապարակումների և <http://www.mineconomy.am> կայքի տվյալների հիման վրա 2013 թվականի վերաբերյալ վիճակագրական տվյալները բացակայում են:

ցուցանիշի գծով արձանագրված ամենաբարձր մակարդակն անգամ գրեթե կրկնակի զիջում է զարգացած պետություններում գրանցված ցուցանիշին (տես աղյուսակ 7): Չնայած այն հանգամանքին, որ զարգացած երկրներում ՓՄՁ սուբյեկտ հանդիսանալու համար գործող չափորոշիչներն ավելի մեղմ են (մասնավորապես իրացման շրջանառության գծով), հետևաբար նաև նման սուբյեկտ հանդիսանալու հնարավորությունները մեծ են, այդուհանդերձ, զբաղվածության ապահովման առումով հանրապետությունում ՓՄՁ ոլորտի ունեցած դերակատարումը խիստ համեստ է: Ակնհայտ է, որ հանրապետությունում գրանցված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի և դրանցում զբաղվածության ցուցանիշները միմյանց հետ կապված են, և այս տեսանկյունից, ոլորտի հանդեպ իրականացվող պետական քաղաքականության ցածր արդյունավետությունը ևս անդրադառնում է վերջինիս վրա: Այլ կերպ ասած, հանրապետությունում ՓՄՁ ոլորտը մասնակիորեն է իրականացնում իր հիմնական գործառույթներից մեկը՝ զբաղվածության ապահովումը, որը մի կողմից, վկայում է դրա զարգացման ցածր աստիճանի և առկա բազմաբնույթ հիմնախնդիրների, իսկ մյուս կողմից՝ վարվող պետական քաղաքականության և ցուցաբերվող աջակցության ցածր արդյունավետության մասին:

Ըստ էության, այն հիմնական ցուցանիշը, որը հնարավորություն է տալիս գնահատել երկրի տնտեսական կյանքում ՓՄՁ ոլորտի ունեցած դերը, դա վերջինիս մասնակցությունն է ՀՆԱ-ի ձևավորման գործընթացին: Այս ցուցանիշի գծով ևս հանրապետությունում գոյություն ունի նույն օրինաչափությունը, ինչպես և նախորդ երկուսի դեպքում:



Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված այդ ցուցանիշը 2010 թվականին արձանագրել է կտրուկ անկում՝ 2009 թվականի 42.5 տոկոսից նվազելով մինչև 27.2 տոկոս: Ընդ որում, 2010-2012 թվականներին ՀՆԱ-ում ՓՄՁ ոլորտի մասնաբաժինն ունեցել է տատանողական բնույթ, նախ նվազելով 1.3, իսկ այնուհետև աճելով 1.2 տոկոսային կետով: Այս ցուցանիշի գծով ևս հանրապետությունում վիճակը հեռու է ցանկալի մակարդակից, ինչն ակնհայտորեն երևում է տարբեր երկրների հետ համեմատական վերլուծություն իրականացնելու արդյունքում (տես աղյուսակ 7): Այլ խոսքով, հանրապետությունում ՓՄՁ ոլորտը դեռևս ծանրակշիռ մասնակցություն չունի համախառն ներքին արդյունքի ձևավորման գործում:

Եվ վերջապես, ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսական կյանքում գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել ոլորտի մասնակցությունը հարկային եկամուտների ձևավորման գործում:

Աղյուսակ 10

ՓՄՁ սուբյեկտների կողմից վճարված հարկերը 2004-2015 թվականներին⁴⁷


Տարեթիվ	Ընդհանուր գումարը (մլրդ դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտների կառուցվածքում (%)
---------	----------------------------------	---

⁴⁶ Գծապատկերը կազմվել է «Հաշվետվություն փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2009թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004-2005թթ.» «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.» Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հրապարակումների տվյալների հիման վրա. 2013-2015 թվականների պաշտոնական տվյալները բացակայում են

⁴⁷ Աղյուսակը կազմվել է «Հաշվետվություն փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2009թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004-2005թթ.» «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.», «Ռազմավարություն փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների» Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հրապարակումների և <http://www.mineconomy.am> կայքի տվյալների հիման վրա 2013 թվականի վերաբերյալ վիճակագրական տվյալները բացակայում են:

2004	75.6	28.3
2005	89.7	27.9
2006	106.7	27.7
2007	127.4	25.2
2008	174.2	28
2009	139.6	26.8
2010	197.8	27
2011	211.0	29.7
2012	234.8	26.6
2014	237.7	22.3
2015	275.5	25.8

Ինչպես երևում է աղյուսակ 10-ի տվյալներից, 2004-2015 թվականներին ՓՄՁ ոլորտի կողմից վճարված հարկերն անվանական արտահայտությամբ աճել են մոտ 3 անգամ՝ 75.6 մլրդ դրամից հասնելով 275.5 մլրդ դրամի: Մինչդեռ, դրանց տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում նշված ժամանակահատվածում նվազել է՝ 2004 թվականին արձանագրված 28.3 տոկոսից հասնելով 2015 թվականին 25.8 տոկոսի: 2004-2015 թվականներին ՓՄՁ ոլորտի կողմից վճարված հարկերի տեսակարար կշիռն ընդհանուր հարկային եկամուտների կառուցվածքում կազմել է միջին հաշվով 27 տոկոս: Ընդ որում, 2004-2015 թվականներին ՓՄՁ ոլորտի կողմից վճարված հարկերն անվանական արտահայտությամբ շարունակաբար աճել են՝ բացառությամբ 2009 թվականի, երբ նախորդ տարվա համեմատությամբ գրանցվել է 58 մլրդ դրամի կամ 20 տոկոսի չափով անկում: Հատկաշնական է այն հանգամանքը, որ դիտարկվող ժամանակահատվածում ՓՄՁ ոլորտի կողմից վճարված հարկերի տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում դրսևորել է թույլ, սակայն ընդգծված տատանողական բնույթ: Առավել մեծ անկում նշված ցուցանիշի գծով գրանցվել է 2007 և 2014 թվականներին: Ի դեպ, ուշագրավ է այն, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին անկումն ավելի մեղմ է եղել, ինչը մեծապես պայմանավորված է նաև ընդհանուր հարկային մուտքերի կրճատմամբ: Միաժամանակ, ՓՄՁ ոլորտի կողմից վճարված հարկերի բաժինը բավականաչափ համեստ է, ինչով պայմանավորված կարելի է ասել, որ տվյալ ոլորտը հանրապետությունում լիարժեք տնտեսական գործառույթ չի իրականացնում:



Գծապատկեր 8 ՓՄՁ ոլորտի կողմից վճարված հարկերի դինամիկան 2004-2015թվականներին (տոկոսային արտահայտությամբ)⁴⁸

Ամփոփելով վերջին տարիներին հանրապետության ՓՄՁ ոլորտում արձանագրված զարգացումները, կարող ենք նշել հետևյալը: Չնայած շուկայական հարաբերությունների արմատավորման նպատակով իրականացված տնտեսական բարեփոխումներին, որոնք ուղղված էին նաև ձեռնարկատիրության զարգացմանը և գործարար միջավայրի բարելավմանը, ՓՄՁ ոլորտը դեռևս չի իրականացնում իր հիմնական գործառույթը և բավականաչափ համեստ դերակատարում ունի երկրի տնտեսական ու սոցիալական կյանքում: Հաշվի առնելով երկրի զարգացման գործում տվյալ ոլորտի ներուժային մեծ հնարավորությունները, կարելի է փաստել, որ մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, այն առարկայական կերպով չի նպաստում երկրի տնտեսության զարգացմանը և հասարակական բարեկեցության բարձրացմանը: Այս տեսանկյունից, նման վիճակը նաև հետևանք է ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համակարգի գործունեության ցածր արդյունավետության, ինչի պատճառով տնտեսավարող սուբյեկտները մեծ դժվարություններ ունեն տնտեսական գործունեության կազմակերպման և իրականացման առումով: Այս ամենը պահանջում է հանրապետությունում գործող ՓՄՁ պետական աջակցության համակարգի գործունեության համակողմանի գնահատում և

⁴⁸ Գծապատկերը կազմվել է «Հաշվետվություն փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2009թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004-2005թթ.» «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.», «Ռազմավարություն փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների» Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հրապարակումների և <http://www.mineconomy.am> կայքի տվյալների հիման վրա
2013 թվականի վերաբերյալ վիճակագրական տվյալները բացակայում են:

դրա արդյունավետության վրա ազդող գործոնների բացահայտում, ինչին էլ նվիրված է աշխատանքի հաջորդ բաժինը:

2.2. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության հիմնական ուղղությունները և դրա արդյունավետության վրա ազդող գործոնները

Հայաստանում ՓՄՁ պետական աջակցությունն իրականացվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն»-ի միջոցով, որը հանդիսանում է ոլորտի պետական աջակցության համակարգի կազմակերպման հիմնական օղակը:⁴⁹ Վերջինիս գործունեությունը, խոշոր հաշվով, ուղղված է բիզնեսի կազմակերպման և իրականացման հետ կապված հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև պետության և գործարար շրջանակների միջև արդյունավետ երկխոսության ապահովմանը: Կենտրոնի գործունեությունն իրականացվում է ՀՀ ամբողջ տարածքում մարզային մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ցանցի միջոցով: Գործունեության առանցքային ուղղություններից են հանդիսանում ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերումը, մասնավորապես, հետևյալ ուղղություններով:

Աղյուսակ 11⁵⁰

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի կողմից ցուցաբերվող աջակցության հիմնական ուղղությունները

Տեխնիկական և աջակցություն	Ֆինանսական աջակցություն
1. Հայաստանում գործարարությամբ զբաղվելու հետ կապված ցանկացած տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում 2. Տեղական արտադրության խթանում և ապրանքանիշերի ձևավորում 3. Արտադրանքի արտահանմանն աջակցություն 4. Իրացման խթանում 5. Սկսնակ գործարարներին աջակցություն 6. Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի իրականացմանն աջակցություն	▪ Վարկային երաշխավորությունների տրամադրում ▪ Սեփական կապիտալի ֆինանսավորում ▪ Սկսնակներին վարկային երաշխավորությունների տրամադրում ▪ Վարկային տոկոսադրույքի մասնակի ֆինանսավորում

⁴⁹ <http://smednc.am> Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի պաշտոնական ինտերնետային էջ

⁵⁰ <http://smednc.am/am/> Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի պաշտոնական ինտերնետային էջ

ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը մրցութային կարգով՝ համաֆինանսավորմամբ, համապատասխան սուբյեկտներին մատուցում է ծառայություններ ընտրված մասնագիտացված կազմակերպությունների միջոցով:

Աղյուսակ 12⁵¹

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի կողմից ցուցաբերվող աջակցության հիմնական ուղղությունները

Տարիներ	Պետական բյուջեից ՓՄՁ աջակցության նպատակով հատկացված գումարը մլն դրամ	ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը
2004	234	93874
2005	300	99805
2006	350	79758
2007	400	82121
2008	450	130332
2009	573.5	132923
2010	150	59267
2011	150	68682
2012	150	73295
2013	150.8	-
2014	151.9	74365
2015	152.3	75956

«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով կատարվել են համապատասխան բյուջետային հատկացումներ տվյալ ոլորտի աջակցության նպատակով: Մասնավորապես, 2002-2008 թվականներին պետական աջակցության համար պետական բյուջեից ուղղվել է շուրջ 1.6 միլիարդ ՀՀ դրամ և ավելի քան 20 հազար սկսնակ և գործող ՓՄՁ-ներ ստացել են աջակցություն:⁵² Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 12-ի տվյալները, վերջին հինգ տարիներին ՓՄՁ աջակցության նպատակով

⁵¹ Աղյուսակը կազմվել է «Հաշվետվություն փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2015թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2009թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ.», «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004-2005թթ.» «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.» Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հրապարակումների և 2004-2014 թվականների պետական բյուջեների տվյալների հիման վրա

⁵² <http://smednc.am/am> Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի պաշտոնական ինտերնետային էջ

կատարված բյուջետային հատկացումները նախորդ տարիների համեմատությամբ զգալիորեն կրճատվել են: Մասնավորապես, եթե 2004-2009 թվականներին այդ ցուցանիշը շարունակաբար աճել է՝ 234 մլն դրամից հասնելով 573.5 մլն դրամի, ապա 2010 թվականին կրճատվել է մոտ 4 անգամ, հասնելով 150 մլն դրամի՝ հետագա տարիներին գրեթե մնալով անփոփոխ տվյալ գումարի սահմաններում: Ինչ վերաբերում է ՓՄՁ պետական աջակցության ֆինանսավորման ծավալով պայմանավորված սուբյեկտների թվաքանակի փոփոխությանը, ապա կարելի է նկատել, որ այստեղ ընդհանուր օրինաչափություն գոյություն չունի: Այլ կերպ ասած որոշակի կախվածություն չկա պետական ֆինանսավորման ծավալների և ձեռնարկությունների թվաքանակի փոփոխության միջև: Ընդ որում, հատկանշական է այն հանգամանքով, որ վերջին տարիներին պետական բյուջեից ՓՄՁ ոլորտին ցուցաբերվող ֆինանսական աջակցության չափը գրեթե չի փոխվել, ինչից ենթադրվում է, որ այն պլանավորվել է ոչ թե առկա խնդիրներից և դրանց լուծման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներից ելնելով, այլ բյուջետային հնարավորություններից:

2011-2015 թթ. փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի կողմից իրականացված աջակցության ծրագրերն ունեցել են հետևյալ ուղղվածությունը և թվաքանակը:

Աղյուսակ 13⁵³

2011-2015 թվականներին փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի կողմից աջակցություն ստացած սուբյեկտների թվաքանակն ըստ ծրագրերի

Տրամադրված աջակցության ուղղություն	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	3588	7398	15647	13064	11857
Ուսուցողական աջակցություն	-	515	521	500	407
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	95	209	462	536	403
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին	28	150	243	235	176

⁵³ Հաշվետվություն «Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2013-2015 թվականների ընթացքում կատարված աշխատանքների վերաբրյալ:

վարկային երաշխավորությունների տրամադրում					
ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	69	191	243	154	259
Արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցություն	-	44	127	-	-
Տեղական տնտեսական զարգացման ծրագրում ընդգրկված համայնքների քանակ	-	5	19	46	35
Համայնքային նշանակության ենթակառուցվածքային ծրագրերի քանակ	-	5	4	-	10
Իրացված գյուղտեխնիկայի քանակ	-	-	230	181	26
Ընդամենը	3780	8507	17243	14688	13194

ՓՄՁ զարգացման կենտրոնի կողմից աջակցություն ստացած սուբյեկտների ընդհանուր թվաքանակը 2011-2015 թվականներին զգալիորեն աճել է՝ 3780-ից հասնելով 13194: Սակայն պետք է նկատի ունենալ, որ աջակցություն ստացած սուբյեկտները կազմել են բոլոր գրանցվածների խիստ փոքր տոկոսը և ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը չի օգտվում պետական աջակցությունից:

2015 թվականին Կենտրոնի կողմից ֆինանսական աջակցություն են ստացել 169 սկսնակ գործարար, իսկ ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 683.5 մլն դրամ:

Աղյուսակ 14⁵⁴

Տրամադրված երաշխավորություններն ըստ տարիների
(մլն դրամ)

	2007թ. .	2008 թ.	2009թ. .	2010թ. .	2011թ. .	2012թ.	2013թ. .	2014	2015
Երաշխավորություն	30.2	44.8	109.4	53.5	37.4	268.4	798.1	800.1	701.7
Վարկ	25.3	37.4	91.5	44.8	31.2	262.6	789.4	792	683.5
Քանակ	35	41	65	30	17	120	224	225	169

⁵⁴ Հաշվետվություն «Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբրյալ: Էջ 16

Ինչպես երևում է աղյուսակ 14-ի տվյալներից, հատկապես 2012 և 2013 թվականներին ինչպես տրամադրված երաշխավորությունների, այնպես էլ վարկերի գծով տեղի է ունեցել շեշտակի աճ: Ընդհանուր առմամբ, 2007 թվականի համեմատությամբ դրանք 2013 թվականին համապատասխանաբար աճել են 26 և 31 անգամ: Ստացված վարկերի գումարը 2015 թվականին կազմել է 683,5 մլն դրամ, իսկ կենտրոնի երաշխավորությունը՝ 701,7 մլն դրամ: Պետական աջակցություն ստացել են 169 ՓՄՁ սուբյեկտներ, որոնցից 38-ը՝ Երևան քաղաքում (տես աղյուսակ 15):

Աղյուսակ 15⁵⁵

Աջակցություն ստացած սկսնակ ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի 2015 թվականին

Մարզ	Քանակ	Վարկի գումար	Երաշխավորություն
Երևան	38	165,918,800	169,743,874
Գեղարքունիք	23	92,990,000	95,276,032
Արագածոտն	10	26,477,500	27,277,575
Արմավիր	9	39,826,200	40,876,759
Լոռի	7	25,270,000	26,006,007
Սյունիք	12	47,968,000	49,341,882
Կոտայք	4	19,000,000	19,541,514
Շիրակ	15	57,320,000	58,967,560
Վայոց Ձոր	16	68,189,285	70,132,731
Տավուշ	29	115,685,000	118,909,825
Արարատ	6	24,897,000	25,612,921
Ընդամենը	169	683,541,785	701,686,

2015 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը կազմել է 14 տոկոս:⁵⁶ Ակնհայտ է, որ արտոնյալության առումով տրամադրված վարկերի պայմաններն այնքան էլ ցանկալի մակարդակի վրա չեն: Հաշվի առնելով հանրապետությունում ձևավորվածը սոցիալ-տնտեսական իրավիճակը, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտների կողմից ֆինանսական ռեսուրսների նկատմամբ բարձր պահանջարկը, կարելի է ասել, որ դրա բավարարման ուղղությամբ

⁵⁵ Հաշվետվություն «Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբրյալ: էջ 17

⁵⁶ Հաշվետվություն «Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբրյալ: էջ 16

ձեռնարկվող քայլերը դեռևս հնարավորություն չեն տալիս լուծել նշված հիմնախնդիրը: Առավել ևս, եթե հաշվի ենք առնում այդ միջոցներից օգտվող սուբյեկտների սահմանափակ քանակը և նրանց փոքր տեսակարար կշիռը ընդհանուրի կազմում:

Պետք է նշել, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի գործունեության պայմանների բարելավման առումով կատարվել են որոշակի միջոցառումներ: Մասնավորապես, շրջանառության հարկի ներդրմամբ և դրան հաջորդող որոշակի քայլերի իրականացմամբ ոլորտի զգալի սուբյեկտների հնարավորություն տրվեց գործել առավել մեղմ հարկման ռեժիմում:⁵⁷ Իհարկե, առկա հիմնախնդիրները դեռևս հնարավորություն չեն տալիս գոնե հարկման պայմանների առումով ապահովել ոլորտի կայուն զարգացում և թերևս, ՓՄՁ հարկման ռեժիմի բարելավումը տնտեսական զարգացման ներկա փուլում հանդիսանում է ՀՀ-ում այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականության հիմնական գերակայություններից: Բացի այդ, 2014 թվականի հոկտեմբերի 1-ից հանրապետությունում ներդրվեց ընտանեկան ձեռնարկատիրության համար նախատեսված հարկման նոր ռեժիմ, համաձայն որի բացառապես ընտանիքի անդամների կողմից իրականացվող և գործունեության բոլոր տեսակների մասով տարեկան մինչև 18 մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող ձեռնարկատիրական գործունեությունն ազատվեց հարկերից:⁵⁸ Ըստ էության, դրանով ՓՄՁ մի շարք սուբյեկտներ հնարավորություն ստացան օգտվել վերոհիշյալ հարկային արտոնությունից:

Բիզնես միջավայրի բարելավման նպատակով որոշակի քայլեր իրականացվեցին նաև ադմինիստրատիվ բնույթի խոչընդոտների վերացման ուղղությամբ: Մասնավորապես, էական բարեփոխումների իրականացվեցին ձեռնարկատիրությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց գրանցման և հաշվառման ոլորտներում, որոնց հիմնական արդյունք հանդիսացավ այդ գործընթացների որոշակի պարզեցումը և ժամանակատարության էական կրճատումը: Բացի այդ, կարևոր քայլեր իրականացվեցին նաև հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների կրճատման, ինչպես նաև ստուգումների գործընթացի պարզեցման ուղղությամբ, որը նույնպես ՓՄՁ ոլորտում գործունեություն պայմանների

⁵⁷ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք

⁵⁸ «Հարկերի մասին» ՀՀ օրենք

բարելավմանն ուղղված քայլ էր: Հանրապետությունում ՓՄՁ ոլորտում նոր սուբյեկտների ստեղծման գործընթացը խթանելու նպատակով իրականացվում է սկսնակ բիզնեսի աջակցության ծրագրեր բիզնես գործընթացների ուսուցման, խորհրդատվական ծառայությունների մատուցման և տեղեկատվական ապահովվածության բարձրացման նպատակով:

Չնայած ՓՄՁ ոլորտի զարգացման գործում ֆինանսական ապահովվածության կարևորությանը, այդուհանդերձ, ՀՀ-ում ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը ոլորտի սուբյեկտների համար դեռևս շարունակում է մնալ որպես զարգացման լուրջ հիմնախնդիր: Վերջինս նպաստում է նաև առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի բարձր տոկոսադրույքը՝ 18-24 տոկոս:⁵⁹ Նման իրավիճակում կարևոր նշանակություն է ստանում միկրոֆինանսավորումը, որն, ըստ էության, հիմնականում նախատեսված է ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական կարիքների բավարարման համար: Չունենալով բանկերի և վարկային այլ կազմակերպությունների ծառայություններից օգտվելու հնարավորություններ, միկրոֆինանսավորման միջոցով ՓՄՁ սուբյեկտները կարողանում են ապահովել սեփական տնտեսական գործունեության համար որոշակի ֆինանսական միջոցներ: Միկրոֆինանսավորման հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս սկսել տնտեսական գործունեություն առանց նախնական կապիտալի և վարկային պատմության առկայության: Թերևս, դրա կարևորությունն անգնահատելի է հատկապես հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում, քանի որ ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը վարկային միջոցներ ձեռք բերելու գործուն հնարավորություններից զրկված է նախ և առաջ, գրավի առարկայի բացակայության պատճառով: Մինչդեռ, այն ՀՀ բանկային համակարգում վարկային միջոցների տրամադրման հիմնական պահանջներից մեկն է հանդիսանում:

Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի ուղղակի վարկավորման և ֆինանսավորման նպատակով գործում է «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը, որի ստեղծվել է ՀՀ

⁵⁹ www.cba.am Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային էջ

կառավարության որոշմամբ 1.150.000.000 դրամ կանոնադրական կապիտալով:⁶⁰ Այն իր գործունեությունն իրականացնում է հետևյալ հիմնական ուղղություններով. վարկավորում, կապիտալի ֆինանսավորում, երաշխիքների և լիզինգի տրամադրում: Կազմակերպության կողմից տրամադրվում են մինչև 50 մլն և ավելի ՀՀ դրամիչափով վարկեր՝ 12-15 տոկոս անվանական տոկոսադրույքով:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած արձանագրված որոշակի դրական տեղաշարժին, այդուհանդերձ, ոլորտի դերը դեռևս շարունակում մնալ փոքր տնտեսական զարգացման գործում: Պետության կողմից հատկացվող ոչ բավարար ուշադրությունը ՓՄՁ ոլորտի աջակցության և զարգացման խնդիրներին հնարավորություն չի տալիս ապահովել բարձր տնտեսական արդյունավետություն այն դեպքում, երբ տվյալ ոլորտն ի վիճակի է առանց մեկնարկային խոշորածավալ ֆինանսական ռեսուրսների նպաստել տնտեսության զարգացմանը և սոցիալ-տնտեսական բազմաբնույթ հիմնախնդիրների լուծմանը: Հանրապետությունում դեռևս շարունակում են գոյություն ունենալ մի շարք հիմնախնդիրներ, որոնք էականորեն սահմանափակում են ՓՄՁ ոլորտի զարգացումը: Մասնավորապես, որպես այդպիսիք կարելի է առանձնացնել.

- ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի անկատարությունը,
- ֆինանսավարկային և ռեսուրսային ապահովվածության գործուն մեխանիզմների բացակայությունը,
- հարկման ռեժիմի անարդյունավետությունը,
- անբարեխիղճ մրցակցության դրսևորումները,
- ՓՄՁ պետական աջակցության համակարգի գործունեության ցածր արդյունավետությունը,
- տեղեկատվական ապահովվածության համակարգի թերզարգացվածությունը,
- ՓՄՁ ոլորտում կադրային ապահովվածության և մասնագետների պատրաստման հիմնախնդիրները և այլն:

⁶⁰ <http://smeinvest.am> «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության պաշտոնական ինտերնետային էջ

Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի զարգացման առումով հատկապես լուրջ խոչընդոտ է հանդիսանում ֆինանսական ռեսուրսների դժվարամատչելիությունը և վարկային միջոցների անբավարարությունը: Ընդհանրապես, վարկավորման ոլորտում գոյություն ունեցող խնդիրները վերաբերում են ոչ միայն ֆինանսական միջոցների ձեռքբերմանը, այլ նաև դրանց սպասարկման և վերադարձման հետ կապված հարցերին: Բանկային վարկավորման ընդհանուր ծավալում ՓՄՁ բաժինը կազմում է ընդամենը 5-10 տոկոս, 70 տոկոս կազմում են դրամով տրամադրված վարկերը, իսկ միջին վարկի գումարը կազմում է 8.5 մլն դրամ 18.5 տարեկան տոկոսադրույքով: Մնացած մասը կազմում են ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերը՝ միջին 130000 դոլար չափով և 14.5 տարեկան տոկոսադրույքով:⁶¹ Ընդհանրապես, հանրապետությունում ՓՄՁ ոլորտի վարկավորման ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրներից մեկը իրացվելի ակտիվների բացակայությունն է: Նշված ինչպես նաև մի շարք այլ գործոններ մեծացնում են ՓՄՁ ոլորտի վարկավորման ռիսկայնությունը՝ հանգեցնելով համապատասխան սուբյեկտների գործունեության հնարավորությունների սահմանափակմանը: Գրավի առարկայի բացակայությունը, վարկային ոչ հուսալի պատմությունը շատ սուբյեկտների զրկում են փոխառու միջոցներ ձեռք բերելու հնարավորությունից: Իրավիճակն ավելի է բարդանում նաև հարկման պայմանների հետ կապված, որը շատ դեպքերում չհիմնավորված և չարդարացված ծանր հարկային բեռ է սահմանում ՓՄՁ ոլորտի համար այն դեպքում, երբ հարկման բարենպաստ պայմանների ապահովումը հռչակված է որպես տվյալ ոլորտի պետական աջակցության կարևոր ուղղություն: Գործունեության տարբեր տեսակների գծով տարբերակված ռեժիմների բացակայությունը և մի շարք այլ հիմնախնդիրներ նպաստում են ՓՄՁ սուբյեկտների կողմից ստվերային գործունեության ծավալների ընդլայնմանը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ՓՄՁ ոլորտը, բացի նշված հիմնախնդիրներից, իր վրա կրում է նաև այն գործոնների բացասական ազդեցությունը, որոնք բնութագրական են ընդհանուր ձեռնարկատիրության ոլորտին: Մասնավորապես, ներդրումային միջավայրի բարձր ռիսկայնությունը, բյուրոկրատական քաշքշուկները, վերահսկողական կառույցների բազմազանությունը և

⁶¹ www.cba.am Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային էջ

նրանց վերապահված գործառույթների կրկնությունները, մրցակցային միջավայրի զարգացման ցածր մակարդակը և տնտեսության մենաշնորհացման խորացող միտումները իրենց հերթին լուրջ բարդություններ են ստեղծում ՓՄՁ ոլորտի զարգացման համար:

Մեր կարծիքով, ՀՀ-ում ներկայումս ձեռնարկատիրական միջավայրի բարելավման ուղղությամբ հատկապես պետք է կարևորել.

- ՓՄՁ աջակցության գործիքները,
- իրավական պաշտպանվածությունը (ձեռնարկատերերի կողմից սեփական իրավունքների և շահերի դատական պաշտպանության հնարավորությունները),
- անվտանգությունը (պետական մարմիններից և պաշտոնյաներից ոչ օրինական գործողություններից և ոտնձգություններից պաշտպանվածությունը),
- ֆինանսավորման մատչելիությունը (ֆինանսավորման տարբեր աղբյուրների առկայությունը, դրանց հասանելիությունը և ֆինանսական միջոցների ձեռքբերման հնարավորությունները),
- մրցակցային միջավայրը (խոշոր բիզնեսի հետ փոխհարաբերությունները, ռեսուրսների և ապրանքների շուկաների մուտքի հնարավորությունների),
- գույքային ռեսուրսների հասանելիությունը:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ հանրապետությունում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության քաղաքականությունը դեռևս աչքի չի ընկնում իր բարձր արդյունավետությամբ: Պետության կողմից աջակցություն ստացող սուբյեկտների թվաքանակը խիստ սահմանափակ է, իսկ կիրառվող գործիքները դեռևս չեն հանգեցնում գլխավոր նպատակի ձեռք բերմանը՝ այն է, ՓՄՁ ոլորտի կայուն զարգացմանը: Բնականաբար, նման իրավիճակը պահանջում է պետական աջակցության քաղաքականության ուղղությունների և ձևերի վերաիմաստավորում և որակապես նոր մոտեցումների կիրառում՝ հաշվի առնելով ՓՄՁ պետական աջակցության ոլորտում կուտակված առաջադեմ միջազգային փորձը և ՀՀ սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները: Նշված հարցերի ուսումնասիրությանն է նվիրված ատենախոսության հաջորդ բաժինը:

2.3. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության

միջազգային փորձը

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի զարգացումն, անշուշտ ենթադրում է պետության կողմից այդ նպատակով որոշակի քայլերի ձեռնարկում և իրականացում: Ինչպես արդեն նշվեց աշխատանքի նախորդ բաժիններում, տվյալ ոլորտի խոցելիությունը, խոշոր բիզնեսի հետ մեկնարկային անհավասար պայմանները և մի շարք այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը դարձնում են անհրաժեշտ և հիմնավորված: Ըստ էության, այդ մասին է վկայում նաև միջազգային փորձը, որը, մեր կարծիքով, արժանի է համակողմանի ուսումնասիրության:

Ընդհանուր առմամբ, գոյություն ունի ձեռնարկատիրության զարգացման երկու հիմնական մոդել՝ անգլոամերիկյան և եվրոկոնտինենտալ: Առաջինին բնորոշ է ֆոնդային շուկայի հանդեպ կողմնորոշումը, իսկ երկրորդի դեպքում որպես ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հանդես գալիս բանկերի և ֆինանսավարկային այլ կազմակերպությունների վարկերը: Անգլոսաքսոնական մոդելի պայմաններում որոշիչ դեր է խաղում կարճաժամկետ ֆինանսավորումը, իսկ երկրորդին բնութագրական է երկարաժամկետ փոխառությունների ձեռք բերումը: Չափորոշիչների ևս մեկ խումբ, որը հնարավորություն է տալիս առանձնացնել ձեռնարկատիրության զարգացան վերը նշված երկու մոդելները, կապված է սոցիալական ասպեկտի հետ: Անգլոամերիկյան մոդելը հիմնվում է, նախ և առաջ, ազատ ընտրության սկզբունքի վրա՝ գերակայությունը տալով բիզնեսի շահերին: Եվրոկոնտինենտալ մոդելը կարևորում է սոցիալական փոխգործակցության և համաձայնության ձեռք բերումը: Եվրոկոնտինենտալ մոդելը հիմնականում տարածված է Գերմանիայում, Իտալիայում և Ավստրիայում, որոնցում ձեռնարկատիրական գործունեությունը հիմնված է ֆինանսաբանկային ինստիտուտների հետ ռազմավարական գործընկերության վրա: Նույն խմբին կարելի դասել նաև

Ֆրանսիային և Նորվեգիային, որտեղ ռազմավարական ֆինանսական գործընկերների դերը լրացնում են պետական մասնակցության միավորումները:⁶²

Անգլոսաքսոնական մոդելին կողմնորոշված պետություններին են դասվում Մեծ Բրիտանիան, Նիդեռլանդները և Շվեյցարիան, որոնցում տնտեսական գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուրը ֆոնդային բորսաներն են, իսկ ֆինանսաբանկային գործընկերներին փոխարինում են բաժնետերերը: Անցած դարի 90-ական թվականներից այս մոդելին անցման հակվածություն են ցուցաբերում նաև Բելգիան և սկանդինավյան պետությունները:⁶³

Ձեռնարկատիրության զարգացման վերոհիշյալ երկու մոդելների առանձնահատկություններով և տարբերություններով հանդերձ, ՓՄՁ ոլորտի աջակցության անհրաժեշտությունը կասկած չի հարուցում և նման ծրագրեր իրականացվում են գրեթե բոլոր երկրներում: Մասնավորապես, Կանադայում խորհրդատվական ծառայությունները հիմնականում մատուցվում են ոչ կառավարական կազմակերպությունների կողմից, իսկ պետությունը զբաղվում է համապատասխան քաղաքականության մշակմամբ և իրականացմամբ: Գերմանիայում և Իտալիայում գործում է ՓՄՁ սուբյեկտների համար խորհրդատվական ընկերությունների հզոր ցանց: Ճապոնիայում ՓՄՁ ոլորտի առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ դրա սուբյեկտները հիմնականում հանդես են գալիս որպես խոշոր կորպորացիաների ենթակապալառու կազմակերպություններ: Ընդ որում, հատկանշական է, որ նշված կորպորացիաների սնանկացման դեպքում ՓՄՁ սուբյեկտները չեն տուժում, քանի որ երկրում գործում են նման դեպքերից ապահովագրության ֆոնդեր, իսկ նրանց կողմից կատարված վճարումներն ազատվում են հարկումից: Միաժամանակ, Ճապոնիայում ՓՄՁ պետական աջակցությունն իրականացվում է բոլոր փուլերում՝ ձեռնարկության գրանցումից մինչև զարգացում, ինչի համար կիրառվում են տարբեր տնտեսական խթաններ՝ արտոնյալ վարկեր, հարկային արտոնություններ, տեխնիկական և

⁶²Бусыгин А. Предпринимательство. Основной курс: Учебник для вузов. Инфра-М. М. 1997г. стр. 49

⁶³Бусыгин А. Предпринимательство. Основной курс: Учебник для вузов. Инфра-М. М. 1997г. стр. 50

խորհրդատվական օգնություն, տեղեկատվական համակարգչային սպասարկում, կադրերի պատրաստում և այլն:Այդ նպատակով երկրում գործում են պետական և մասնավոր, առևտրային և ոչ առևտրային տարբեր կազմակերպություններ, այդ թվում նաև մասնագիտացված կենտրոններ: ԱՄՆ-ում ավելի շատ զարգացած է ինովացիոն գործընթացի մեջ ՓՄՁ ներգրավման համակարգը աջակցության տարբեր գործիքների կիրառմամբ:⁶⁴

Պետք է նշել, որ զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացումն ընթանում է խիստ արագացված տեմպերով՝ առաջին հերթին պայմանավորված պետական աջակցության համակարգի գործունեության բարձր արդյունավետությամբ: Ցուցաբերվող բազմակողմ աջակցությունը, նպատակային ծրագրերի իրականացումը, արտոնությունների լայն շրջանակի տրամադրումը նպաստում են այդ երկրների տնտեսական կյանքում ՓՄՁ ոլորտի դերի բարձրացմանը:

Աղյուսակ 16⁶⁵

Զարգացած երկրներում ՓՄՁ պետական աջակցության ուղղությունները և հիմնական ցուցանիշները(2013 թ.)

Երկիր/ցուցանիշ	ԱՄՆ	Կանադա	Ճապոնիա	Ֆերմանիա	Ֆրանսիա	Իտալիա	Մեծ Բրիտանիա
ՓՄՁ ոլորտի ֆինանսական աջակցության ծավալները (մլրդ ԱՄՆ դոլար)							
Ենթակառուցվածքների աջակցություն	0,8	0,45	1,64	1,8	1,5	5,05	1,37
Վարկեր	21,6	22,8	39,9	61,9	9,2	15,2	6,3
Երաշխիքներ	1,67	3,36	-	-	4,7	-	6,3
ՓՄՁ ոլորտի համար ծառայությունների ենթակառուցվածքներ							

⁶⁴Исследование форм поддержки малого и среднего бизнеса в РФ и Томской области. Исследование рынка. 2014г. стр. 8-26

⁶⁵Дорожная карта развития малого и среднего предпринимательства Республики Татарстан на период 2014-2016 годы. Казань. 2013г.стр. 14

Երկիր/ցուցանիշ	ԱՄՆ	Կանադա	Ճապոնիա	Պերմանիա	Ֆրանսիա	Իտալիա	Մեծ Բրիտանիա
Ֆինանսավարկային ծառայություններ	Գործում են բանկերի, ֆոնդերի, ներդրումային և ապահովագրական ընկերությունների համապետական ցանցեր						
ՓՄՁ զարգացման կենտրոններ	1100	521	313	374	600	1200	450
Բիզնես ինկուբատորներ	330	186	11	182	216	26	471
Արտահանման խթանման կենտրոններ	20	15	ցանց	ցանց	26	123	60

Որպես կանոն, ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունն իրականացվում է երկու հիմնական ուղղություններով: Առաջինն իրենից ներկայացնում է ադմինիստրատիվ-գերատեսչական աջակցությունը, որն արտահայտվում է ուղղակի ֆինանսավորման, դոտացիաների, դրամաշնորհների, սուբսիդիաների, հարկային և ներդրումային արտոնությունների տրամադրմամբ: Երկրորդը ծրագրանպատակային աջակցությունն է, որի դեպքում պետությունը հանդես է գալիս որպես ՓՄՁ սուբյեկտների կողմից արտադրվող ապրանքների և ծառայությունների պատվիրատու: Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ առավել արդյունավետ է հանդիսանում պետական աջակցության այս երկու ձևերի արդյունավետ համադրումը: Ընդ որում, պետությունն այդ երկու ուղղությունները կյանքի է կոչում համապատասխան մեխանիզմների՝ օրենսդրական բազայի, մասնագիտացված կառույցների և պետական ծրագրերի միջոցով:

ՓՄՁ ոլորտի խթանման առավել տարածված գործիքներից մեկն է հանդիսանում ֆինանսական աջակցությունը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ, տվյալ ոլորտի օբյեկտների դժվարությունները հիմնականում հետևանք են ֆինանսական միջոցների բացակայության: Պատահական չէ, որ զարգացած և զարգացող երկրներում ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը, նախ և առաջ, դրսևորվում է

համապատասխան ֆինանսական միջոցների արդյունավետ կիրառմամբ, որոնք իրենց բազմազանությամբ հանդերձ, ունեն որոշակի նմանություններ: Մասնավորապես, այդ մասին է վկայում աղյուսակ 17-ում ներկայացված համեմատական վերլուծությունը:

Ինչպես նկատում ենք, գրեթե բոլոր երկրներում ՓՄՁ ոլորտի համար ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովման նպատակով տրամադրվում են վարկային երաշխիքներ: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ ոլորտի սուբյեկտները հանդիսանում են ռիսկային, առևտրային բանկերի կողմից չեն դիտարկվում որպես հուսալի վարկառուներ, ինչի հետանքով էլ վարկային միջոցների ձեռքբերումը նրանց համար չափազանց դժվար է: Այլ կերպ ասած, վարկային երաշխիքների տրամադրմամբ պետությունը փորձում է մեղմել առկա ռիսկերը և մեծացնել ֆինանսական միջոցների մատչելիությունը ՓՄՁ սուբյեկտների համար: Ընդ որում, այդ նպատակով իրականացվում են տարբեր երաշխիքային ծրագրեր, արտոնյալ պայմաններով տրամադրվում են նպատակային վարկեր և այլն:

Աղյուսակ 17⁶⁶

ՓՄՁ պետական աջակցության ուղղությունները ֆինանսավորման հասանելիության բարձրացման նպատակով

ՓՄՁ պետական աջակցության ուղղությունները	Երկիր
ՓՄՁ ոլորտի սուբյեկտների համար վարկային երաշխիքների տրամադրում	Կանադա, Չիլի, Դանիա, Ֆինլանդիա, Հունգարիա, Իտալիա, Կորեա, Նիդեռլանդներ, Սլովենիա, Սլովակիա, Իսպանիա, Շվեյցարիա, Թայլանդ, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ
Աղյուսակ 17-ի շարունակություն	
Սկսնակ բիզնեսի համար երաշխիքների հատուկ պայմանների տրամադրում	Կանադա, Դանիա, Նիդեռլանդներ
Արտահանման գործարքների համար պետական երաշխիքների տրամադրում	Կանադա, Դանիա, Ֆինլանդիա, Նիդեռլանդներ, Նոր Զելանդիա, Շվեդիա, Շվեյցարիա, Իսպանիա, Մեծ Բրիտանիա
Պետական համաֆինանսավորում, այդ թվում նաև ներդրումային հիմնադրամների միջոցով	Շվեյցարիա, Դանիա, Իռլանդիա
ՓՄՁ ոլորտի ուղղակի ֆինանսավորում	Կանադա, Չիլի, Հունգարիա, Կորեա, Սերբիա, Սլովենիա, Իսպանիա
Վարկային տոկոսադրույքի սուբսիդավորում	Հունգարիա, Պորտուգալիա, Ռուսաստան, Իսպանիա, Թուրքիա, Մեծ Բրիտանիա
Հարկային արտոնությունների տրամադրում	Ֆրանսիա, Իռլանդիա, Իտալիա, Նոր Զելանդիա, Իսպանիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան

⁶⁶Дорожная карта развития малого и среднего предпринимательства Республики Татарстан на период 2014-2016 годы. Казань. 2013г.стр. 14

ՓՄՁ ոլորտի վարկավորման համար մասնագիտացված բանկերի ստեղծում, այդ թվում նաև բացասական տոկոսադրույքով վարկավորում	Իռլանդիա, Դանիա
Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպությունների վարկավորում	Մեծ Բրիտանիա

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ՓՄՁ ոլորտի համար գործում են վարկային ցածր տոկոսադրույքներ՝ արտոնյալ պայմաններով: Մասնավորապես, Կանադայում տրամադրվում են մինչև 10 տարի ժամկետով մինչև 250 հազար դոլար գումարի չափով վարկեր 2-3 տոկոս տարեկան տոկոսադրույքով, Կորեայում մինչ 8 տարի ժամկետով և բանկային տոկոսադրույքից 2.5-3 տոկոս ցածր տոկոսադրույքով վարկային միջոցներ, իսկ Ճապոնիայում վարկային տոկոսադրույքը կազմում է 2-4 տոկոս:⁶⁷

Արևմտյան Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի զարգացած շուկայական տնտեսությունն ունեցող երկրների, ինչպես նաև Ճապոնիայի փորձը վկայում է այն մասին, որ ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունն առավել արդյունավետ է այն դեպքերում, երբ առկա են հետևյալ պայմանները:

- պետական աջակցության հստակ սահմանված նպատակներ,
- ՓՄՁ ոլորտի զարգացման պետական ռազմավարություն,
- սահմանված նպատակների իրականացման համար անհրաժեշտ իրավասություններով օժտված և բավարար ռեսուրսների տիրապետող պետական կառույց:

Պետք է նշել, որ յուրաքանչյուր պետություն մշակում է ՓՄՁ ոլորտի զարգացման սեփական երկարաժամկետ ռազմավարությունը, այդ նպատակով ընդունելով համապատասխան իրավական, կազմակերպական և այլ միջոցներ՝ ուղղված տնտեսության այդ հատվածի բազմակողմանի աջակցությանը: Միևնույն ժամանակ, գործում են նաև ՓՄՁ ոլորտի պետական աջակցության նպատակով ստեղծված հատուկ պետական կառույցներ՝ համապատասխան իրավասություններով և լիազորություններով:

⁶⁷Дорожная карта развития малого и среднего предпринимательства Республики Татарстан на период 2014-2016 годы. Казань. 2013г.стр. 15

ՓՄՁ պետական աջակցության ռազմավարական ուղղությունները զարգացած երկրներում

	ԱՄՆ	Ճապոնիա	Մեծ Բրիտանիա	Գերմանիա
ՓՄՁ պետական աջակցության նպատակը	Փոքր ձեռնարկություններին բազմակողմանի աջակցության ցուցաբերում, ձեռնարկատիրության ազատության և արդար մրցակցության ապահովում, մասնավոր նախաձեռնությունների խթանում և անհատի պոտենցիալ հնարավորությունների բացահայտում	ՓՄՁ սուբյեկտների կայունության և մրցունակության բարձրացում, ռեսուրսների հասանելիության ապահովում, ինովացիոն գործունեության և նոր ձեռնարկությունների ստեղծման խթանում, ձեռնարկատիրական միջավայրի բարելավում,	Պետական աջակցության քաղաքականությունն ուղղված է ՓՄՁ ոլորտի՝ որպես երկրի սոցիալ-տնտեսական բարեկեցության բարձրացման և համաշխարհային շուկայում տնտեսության մրցունակության բարձրացման կարևոր միջոցի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը	Պետական քաղաքականությունն ուղղված է ՓՄՁ ոլորտի մրցունակության բարձրացմանը և դրա հետագա զարգացմանը
Աղյուսակ 18-ի շարունակություն				

⁶⁸Бондаренко В., Иоффе А., Нагих В.Основные характеристики систем государственно-общественной поддержки и развития малого и среднего предпринимательства зарубежных стран. Круглый стол «Инфраструктура поддержки и развития малого и среднего предпринимательства» М.: 10 - 11 марта 2004г.

http://www.allmedia.ru/content/document_r_E34E9BA8-7E35-49A1-A8F2-9D12A91E6D33.html

ՓՄՁ զարգացման համար պարասխանատու և համապատասխան քաղաքականություն իրականացնող պետական կառույց	Երկրի Նախագահի և Կոնգրեսի ենթակայությամբ գործող փոքր բիզնեսի ադմինիստրացիա	Էկոնոմիկայի, առևտրի և արդյունաբերության նախարարություն: Վերջինիս կազմում գործում են ՓՄՁ ոլորտի քաղաքականության խորհուրդը և ՓՄՁ գործակալությունը, որոնք կոորդինացնում են ՓՄՁ աջակցության բոլոր պետական կառույցների աշխատանքները	Առևտրի և արդյունաբերության նախարարությանն առընթեր Փոքր բիզնեսի աջակցության գործակալություն, որը մշակում է ՓՄՁ զարգացման ռազմավարությունը, համագործակցում է իշխանության տարբեր մակարդակների և մարմինների հետ, կոորդինացնում է պետական և հասարակական կառույցների գործունեությունը ՓՄՁ աջակցության ոլորտում	Էկոնոմիկայի և աշխատանքի նախարարությունը կոորդինացնում է բոլոր պետական և հասարակական կազմակերպությունների գործունեությունը ՓՄՁ աջակցության քաղաքականության իրականացման ոլորտում
Զարգացման պետական ռազմավարությունը	Փոքր բիզնեսի զարգացման պետական ռազմավարությունը սահմանված է «Փոքր բիզնեսի մասին» օրենքով հետևյալ ուղղություններով . - արտահանման հնարավորությունների ավելացում, մրցակցային հնարավորությունների մեծացում,	-ինովացիոն գործունեության աջակցության ուժեղացում, -ՓՄՁ ոլորտի տնտեսական անվտանգության համակարգի զարգացում, -ՓՄՁ ոլորտում աշխատանքի և սոցիալական ապահովության պայմանների բարելավում,	-գործարար հարաբերություններում ձեռնարկատիրական կուլտուրայի բարձրացում, - նոր ձեռնարկությունների ստեղծման խթանում, - գործողների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,	- միջին խավի ձևավորման և ընդլայնման համար պայմանների ստեղծում, - ձեռնարկատիրության ոլորտում երիտասարդության ներգրավում, - ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար կադրերի պատրաստում և վերապատրաստում,

Աղյուսակ 18-ի շարունակություն				
Ձարգացման պետական ռազմավարությունը	- սարքավորումների ձեռքբերման, տեխնոլոգիական արդիականացման, նոր մրցունակ ապրանքների և ծառայությունների արտադրության համար երկարաժամկետ վարկային ռեսուրսների մատչելիության ապահովում, - Փոքր բիզնեսի զարգացման տարբեր ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական ապահովվածության մակարդակի բարձրացում, - բոլոր առևտրային բանակցություններում փոքր բիզնեսի շահերի և հետաքրքրությունների պաշտպանություն	-աշխատանքային ռեսուրսների շարժունակության ապահովում, -ֆինանսական ռեսուրսների և բաժնետիրական կապիտալի նկատմամբ մատչելիության ապահովում, -ՓՄՁ աջակցության կառույցների փոխհամագործակցության մակարդակի բարձրացում	- ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովում, -սոցիալապես խոցելի խմբերի համար և թույլ զարգացած տարածաշրջաններում ձեռնարկատիրության զարգացում, - պետական ծրագրերում ՓՄՁ սուբյեկտների ներգրավում, - ՓՄՁ զարգացմանը նպաստող պետական քաղաքականության մշակում և իրականացում, - ՓՄՁ ոլորտի հետազոտությունների իրականացում և իրավիճակի գնահատում	- ֆինանսական օգնության և տեխնիկական աջակցության ցուցաբերում, - բյուրոկրատական արգելքների կրճատում, - նոր տեխնոլոգիաների և ռեսուրսների մատչելիության ապահովում, - ՓՄՁ ոլորտի ինովացիոն հնարավորությունների խթանում

Հարկ է նկատել, որ բոլոր կազմակերպական կառույցների գործառույթները գրեթե միանման են, իսկ տարբերությունները հիմնականում կայանում են գործունեության շրջանակների, ենթակայության հիերարխիայի և այլ գերատեսչությունների հետ փոխհամագործակցության առանձնահատկությունների մեջ: Ձարգացած երկրներում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համակարգերի

վերլուծությունը ցույց է տալիս, որ կազմակերպական կառույցի ձևավորման առումով առավել հաջողված է ԱՄՆ փորձը՝ ի դեմս 1953 թվականին ստեղծված Փոքր բիզնեսի ադմինիստրացիայի: Հատկանշական է, որ այդ փորձը որոշակիորեն իր կիրառությունն է գտել նաև Մեծ Բրիտանիայում, Ճապոնիայում, ԵՄ անդամ պետություններում և մի շարք զարգացող երկրներում: Հիշյալ կառույցի գործունեության շրջանակները բավականաչափ լայն են և իրենց մեջ ընդգրկում են այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են փոքր բիզնեսի զարգացման երկարաժամկետ ռազմավարության մշակումն ու իրականացումը, ներդրումների ներգրավումը, վարկային երաշխիքների տրամադրումը, ձեռնարկատիրական միջավայրի բարելավումը, ֆինանսական օգնության ցուցաբերումը և այլն: Պետք է նշել, որ փոքր բիզնեսի աջակցության նպատակով ԱՄՆ-ում գործող կառույցն ամենամեծն է աշխարհում, ունի 108 ներկայացուցչություն տարբեր նահանգներում և քաղաքներում, որոնցում աշխատողների թվաքանակը գերազանցում է 4200-ը:⁶⁹ Միևնույն ժամանակ, ոչ միայն ԱՄՆ-ում, այլ նաև Ճապոնիայում, Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում արդյունավետ կերպով օգտագործում են ՓՄՁ ոլորտի հնարավորությունները պետական և մունիցիպալ պատվերների իրականացման ժամանակ: Այդ երկրներում սահմանված են իրավական հստակ նորմեր և գործում են համապատասխան պետական կառույցներ, որոնք զբաղվում են ՓՄՁ ոլորտում մրցութային հիմունքներով պետական պատվերների տեղաբաշխմամբ: Բացի այդ, համապատասխան մեխանիզմների միջոցով ապահովվում է խոշոր ձեռնարկությունների կողմից սեփական պատվերների որոշակի մասի իրականացումը ՓՄՁ սուբյեկտների կողմից: Այդ նպատակով գործում է փոքր և միջին ձեռնարկությունների սերտիֆիկացման պահանջ, որոնք ձեռքբերող սուբյեկտները համարվում են վստահելի և հուսալի գործընկերներ պետական պատվերների իրականացման համար:

Որոշակիորեն ուշագրավ է նաև զարգացող երկրներում իրականացվող ՓՄՁ ոլորտի պետական աջակցության քաղաքականությունը: Մասնավորապես, Հարավային Կորեայի հանրապետությունում կառավարության կողմից իրականացվող քաղաքականության հիմնական նպատակն է «Միջազգային մրցունակության

⁶⁹Small Business Sourcebook.The 8-ht Edition.Kathleen E. Maki (Ed.) GaleResearchInc. 1995.Vol. MI

բարձրացման հաշվին ՓՄՁ ոլորտի ուժեղացումը և բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը»:⁷⁰ Չիլիում վերջին տարիներին հրաժարվեցին տնտեսական զարգացման գործակալության միջոցով ձեռնարկությունների ուղղակի վարկավորումից և այն փոխարինվեց «երկրորդ հարկի» սխեմայով:⁷¹ Այս դեպքում երկարաժամկետ ռեսուրսները փոխանցվում են մասնավոր ֆինանսական համակարգին՝ առավելապես ՓՄՁ ոլորտում տեղաբաշխելու համար: Ընտրելով բիզնեսի զարգացման ինովացիոն ուղին, Չիլիի կառավարությունը գտնում է, որ ռիսկային կապիտալի զարգացումը պետք է դառնա այդ ուղղությամբ քաղաքականության հիմնական նպատակներից: Այդ նպատակով ստեղծված են համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովել նախնական և ռիսկային կապիտալի զարգացումը:

Ինչ վերաբերում է շուկայական տնտեսության ուղին բռնած պետություններին, ապա դրանցում ևս վերջին տարիներին իրականացվում են ՓՄՁ ոլորտի պետական աջակցության տարբեր ծրագրեր, ինչով պայմանավորված այդ պետություններին կարելի է միավորել երեք հիմնական խմբերի մեջ:⁷²

1. Կենտրոնական և արևելյան Եվրոպայի ձեռնարկատիրության զարգացման բարձր մակարդակ ունեցող պետություններ, ներառյալ Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա, Չեխիա, Էստոնիա և Սլովենիա: Այս երկրներում գործում են ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենքներ, սահմանված են հստակ նպատակներ և մշակված են դրանց ձեռքբերման համար պետական քաղաքականության միջոցներ:
2. ՓՄՁ ոլորտի զարգացման միջին մակարդակ ունեցող պետություններ, մասնավորապես, Բուլղարիա, Ղրղզստան, Լատվիա, Լիտվա, Ռումինիա և Խորվաթիա, որոնցում ՓՄՁ զարգացումը համարվում է տնտեսական վերափոխումների կարևոր ուղղություն: Սակայն շատ դեպքերում դրանցում

⁷⁰Сунь Янг Хё. Инновационные меры в области малого и среднего бизнеса в Корее. <http://intech-tr.ru/>

⁷¹Жорж Оливares Инструменты инвестиционной и технологической поддержки предпринимателей, работающих в Чили. <http://intech-tr.ru/>

⁷²Сабо А. Особенности развития предпринимательства и малых и средних предприятий в странах с переходной экономикой. М., 1999г. стр. 2

գործող օրենսդրական բազան ունի տնտեսավարման նոր պայմաններին ադապտացման, կամ էլ լուրջ վերափոխումների կարիք: Ընդ որում, բարեփոխումների անհրաժեշտությունը վերաբերում է ոչ միայն օրենսդրական դաշտին, այլ նաև ՓՄՁ ոլորտի աջակցության ենթակառուցվածքներին:

3. Թույլ զարգացած ՓՄՁ սեկտոր ունեցող պետություններ, որոնց հիմնական բնութագրիչ հատկանիշը այդ ոլորտի ձևավորման դանդաղ տեմպերն են: Վերջինիս հիմնական պատճառը երկրի տնտեսական զարգացման մեջ տվյալ ՓՄՁ դերի և տեղի թերագնահատումն է, ինչը դրսևորվում է տվյալ ոլորտի զարգացմանն ուղղված արդյունավետ գործիքների և մեխանիզմների բացակայության մեջ: Այս երկրներում ՓՄՁ պետական աջակցության ինստիտուցիոնալ կառույցները գործում են ցածր արդյունավետությամբ, իսկ գործող օրենսդրական բազան ունի իրավակիրառական լուրջ խնդիրներ: Բացի նշվածներից, վատ են գործում պետական աջակցության ֆինանսական մեխանիզմները, իսկ բյուրոկրատական արգելքները ձեռնարկատիրական գործունեության համար ստեղծում են լուրջ դժվարություններ: Ըստ էության, այս երկրների շարքին կարելի է դասել ԱՊՀ բոլոր պետություններին:

Զարգացած և զարգացող, ինչպես նաև անցումային տնտեսությամբ երկրներում ՓՄՁ ոլորտի աջակցության փորձը ցույց է տալիս, որ բոլոր դեպքերում պետությունն այս կամ այն կերպ մասնակցություն է ունենում այդ գործընթացին: Միևնույն ժամանակ, ՓՄՁ պետական աջակցության միջազգային փորձը հնարավորություն է տալիս առանձնացնել մի քանի ուղղություններ, որոնք իրենց արտահայտությունն են գտնում այդ նպատակով իրականացվող պետական քաղաքականության մեջ.

- ՓՄՁ ոլորտի գործունեության նորմատիվ-իրավական բազայի ստեղծում և շարունակական կատարելագործում,
- ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական ռեսուրսների և անշարժ գույքի մատչելիության ապահովում,
- ՓՄՁ ոլորտի զարգացման պահանջներին համապատասխանող բիզնես միջավայրի ձևավորում:

Եթե առաջին ուղղությունը հանդիսանում է ստանդարտ բոլոր պետությունների համար և դասվում է առաջին սերնդի բարեփոխումների շարքին, ապա երկրորդ և երրորդ ուղղությունները տարբեր երկրներում ենթադրում են ոչ ստանդարտ լուծումների կիրառում, որոնք հաշվի կառնեն տվյալ երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման մակարդակը և ազգային առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ, զարգացած շուկայական տնտեսություն ունեցող պետությունների փորձը ցույց է տալիս, որ ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունն առավել արդյունավետ է իրականացվում մասնագիտացված հատուկ կառավարական կառույցի միջոցով, որը տիրապետում է բավարար ռեսուրսների և իրավասությունների իր գործառույթների պատշաճ և լիարժեք իրականացման համար: Ընդ որում, տնտեսական վերափոխումները բարձր հաջողություն են ունենում այն պետություններում, որտեղ պարբերաբար իրականացվում է ՓՄՁ ոլորտի գործունեության վիճակի մոնիտորինգ և պետության կողմից ցուցաբերվող աջակցության արդյունքների և հետևանքների գնահատում:

Այսպիսով, ընդհանրացնելով ՓՄՁ ոլորտի պետական աջակցության միջազգային փորձի ուսումնասիրությունը, կարող ենք արձանագրել, որ զարգացած և զարգացող շատ պետություններում ՓՄՁ ոլորտը դիտարկվում է որպես տնտեսության զարգացման հիմնական սեկտորներից մեկը, ինչով պայմանավորված իրականացվում են դրա աջակցության լայնամասշտաբ պետական ծրագրեր և հատկացվում հսկայածավալ ֆինանսական միջոցներ: Որպես կանոն, պետական աջակցության հիմնական նպատակը նոր ձեռնարկությունների ստեղծման, ինովացիաների և նոր տեխնոլոգիաների ներդրման խթանումն է, արտադրանքի մրցունակության բարձրացումն է: Միաժամանակ, ՓՄՁ պետական աջակցության արդյունավետության բարձրացման տեսանկյունից հատկապես կարևորվում են ընտրված գործիքները և մեխանիզմները, որոնք կապահովեն տնտեսական զարգացման տվյալ փուլում ոլորտի սուբյեկտների գործունեության հետ կապված հիմնախնդիրների ամբողջական լուծում:

**ԳԼՈՒԽ 3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության բարելավման
հիմնական մոտեցումները**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում դեռևս շարունակվում են քաղաքական և տնտեսական համակարգերի բարեփոխումները, որոնց հիմնական նպատակը երկրի զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումն է: Իրականացվող բարեփոխումներն իրենց շրջանակների մեջ են ընդգրկում նաև ՓՄՁ ոլորտը, որի գործունեության կազմակերպումը և արդյունավետության բարձրացումը տնտեսական զարգացման ներկա փուլում խիստ հրատապ են ու արդիական: ՓՄՁ ոլորտի զարգացումը, հատկապես մեծ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար, հաշվի առնելով երկրում կուտակված բազմաբնույթ սոցիալական և տնտեսական հիմնախնդիրները: Վերջիններիս լուծման գործում իր առարկայական մասնակցությունը կարող է ունենալ ՓՄՁ ոլորտը, որը յուրահատուկ և արդյունավետ գործիք է հանդիսանում տնտեսական և սոցիալական առաջընթացի ապահովման գործում: Ակնհայտ է, որ տվյալ ոլորտի զարգացումը հնարավորություն կտա էականորեն թեթևացնել բյուջետային և սոցիալական ճնշումը, բարձրացնել հասարակության ստեղծագործական ներուժը և, վերջին հաշվով, ապահովել բնակչության որոշակի խմբերի բարեկեցության բարձրացումը: Սակայն նման գլոբալ խնդիրների լուծման համար ՓՄՁ ոլորտը կարիք ունի պետության կողմից համակողմանի և հետևողական աջակցության, որի գլխավոր նպատակը, ըստ էության, պետք է հանդիսանա տվյալ ոլորտի սուբյեկտների համար գործունեության պայմանների բարելավումը: Հայաստանի Հանրապետության ՓՄՁ ոլորտում ներկայումս ձևավորված իրավիճակը, գործող սուբյեկտների թվաքանակը, նրանցում ընդգրկված աշխատողների թիվը, ՀՆԱ-ում տվյալ ոլորտի ունեցած մասնաբաժինը չեն համապատասխանում երկրի տնտեսության իրական պահանջներին: Նման իրավիճակում ՓՄՁ պետական

աջակցության համակարգի գործունեության ցածր արդյունավետությունն, ըստ էության, զրկում է ոլորտի սուբյեկտներին զարգացման իրական հնարավորություններից:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտում ձևավորված նման իրավիճակը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ պատճառներով, որոնց շարքին կարելի է դասել հետևյալները:

1. Երկարաժամկետ

- ձեռնարկատիրության և, մասնավորապես, ՓՄՁ ոլորտի գործունեությունը կանոնակարգող օրենսդրության անկատարությունը, գործող նորմատիվ իրավական ակտերի միջև առկա հակասությունները և սահմանված մեխանիզմների թերությունները,
- ՓՄՁ ոլորտի պետական կարգավորվածության և պետական միջամտության չարդարացված բարձր աստիճանը,
- հարկային օրենսդրության անորոշությունը, հարկային չհիմնավորված ճնշումը,
- նոր տեխնոլոգիաների ներդրման և ներդրումների իրականացման ներքին մոտիվացիայի բացակայությունը:

2. Կարճաժամկետ

- շուկայական ենթակառուցվածքների զարգացման ցածր աստիճանը,
- ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավարկային և գույքային չհամակարգված և ոչ բավարար աջակցությունը,
- ՓՄՁ պետական աջակցության գործուն համակարգի բացակայությունը,
- ՓՄՁ սուբյեկտների վերաբերյալ լիարժեք վիճակագրության և հաշվառման բացակայությունը,
- տեղեկատվական և խորհրդատվական սահմանափակ ապահովվածությունը,
- ձեռնարկատիրությամբ զբաղվող կադրերի մասնագիտական ցածր պատրաստվածությունը:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի զարգացման դինամիկան, ստեղծված իրավիճակը և երկրի մակրոտնտեսական ցուցանիշների ձևավորման

գործում դրա ունեցած ավանդը հնարավորություն են տալիս առանձնացնել բացասական զարգացումների հետևյալ մարտավարական և ռազմավարական պատճառները:

1. Մարտավարական պատճառներ

- ՓՄՁ ոլորտի վրա հարկային ճնշումը շարունակում է մնալ բարձր, չնայած վերջին տարիներին դրա թեթևացման ուղղությամբ իրականացվող քայլերին: Ֆինանսական ռեսուրսների բացակայության պայմաններում դա լուրջ խոչընդոտ է հանդիսանում ոլորտի սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնման համար,
- միկրոֆինանսավորման և ֆինանսական լիզինգի մասշտաբները չափազանց ցածր են դրանց նկատմամբ պահանջարկից, ինչը միկրոբիզնեսի խիստ ցածր կապիտալատարության պայմաններում լուրջ դժվարություններ է ստեղծում մեկնարկի փուլից զարգացման փուլին անցնելու համար,
- ՓՄՁ սուբյեկտների մուտքի դժվարությունները ֆոնդային շուկա և հանրային ընկերությունների վերածվելու մեխանիզմների բացակայությունը, բաժնետերերի թույլ իրավական պաշտպանվածության պայմաններում սահմանափակում են վենչուրային կապիտալի մուտք ՓՄՁ ոլորտ,
- գործնականում բացակայում են կամ շատ թույլ են զարգացած ՓՄՁ սուբյեկտների ստեղծումը խթանող հատուկ մեխանիզմները, իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների մեկնարկային աջակցությանը կողմնորոշված բիզնես ինկուբատորների գրեթե բացակայությունը հանգեցնում է ինովացիոն բիզնեսի համակարգային զարգացման հնարավորությունների վերացմանը,
- պետական պատվերների տեղաբաշխման գործընթացին ՓՄՁ սուբյեկտների պարտադիր մասնակցությունն ապահովող մեխանիզմների բացակայությունը, ինչը վերջիններիս զրկում է պետական ֆինանսական միջոցների ձեռք բերման հնարավորությունից,

- ՓՄՁ ոլորտի սուբյեկտների և հայրենական ու օտարերկրյա խոշոր արտադրողների միջև կոոպերացման թույլ կապերը, ինչը հետևանք է տարբեր շուկաներ մուտքի արգելքներով,
- երկրում բացակայում են համապատասխան մեխանիզմները և նախադրյալները, որոնք կնպաստեն փոքր ձեռնարկությունների վերածմանը միջինի, ինչը ոլորտի և տնտեսության զարգացման տեսանկյունից դրական համարվել չի կարող:

2. Ռազմավարական պատճառներ.

- ՓՄՁ սուբյեկտների սեփականության իրավունքի պաշտպանության ոչ բավարար վիճակը և դրա հետ կապված բարձր տրանսակցիոն ծախսերը,
- ադմինիստրատիվ խոչընդոտների, հատկապես տեսչական ստուգումների լայն տարածումը,
- բիզնես գործընթացներում կոռուպցիոն դրսևորումների առկայությունը, ինչը շատ դեպքում ոլորտի սուբյեկտներին մղում է ստվերային գործունեության,
- ֆինանսական բազայի սահմանափակությունը: ՓՄՁ ոլորտի գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուր են հանդիսանում սեփական ռեսուրսները: Արտաքին բանկային ֆինանսավորումը ներկայումս չի ապահովում ոլորտի զարգացում, ինչը պայմանավորված է ինչպես ՓՄՁ ոլորտի առանձնահատկություններով (երաշխիքների բացակայություն, ֆինանսական հոսքերի ցածր թափանցիկություն), այնպես էլ բանկային համակարգի հիմնախնդիրներով և ՓՄՁ ոլորտի սուբյեկտների վարկավորման նպատակով կիրառվող ոչ արդյունավետ տեխնոլոգիաներով,
- ֆինանսական միջոցների սահմանափակությունը նվազեցնում է ՓՄՁ մրցունակությունն աշխատանքի և անշարժ գույքի շուկաներում: Որակավորված մասնագետների, ժամանակակից տեխնոլոգիաների և աշխատանքային պայմանների բացակայությունը բնութագրական են հանրապետությունում գործող ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասի համար,
- արտաքին ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը, ինչպես նաև ֆինանսական ապահովվածության ցածր մակարդակը հանգեցնում են ՓՄՁ

ոլորտի ֆինանսատնտեսական ցուցանիշների վատթարացմանը և, որպես դրա հետևանք, մրցակցային հնարավորությունների անկմանը: Միջազգային տնտեսական ինտեգրացման խորացման ներկա փուլում դա կարելի է համարել հանրապետության ազգային տնտեսության լուրջ հիմնախնդիրներից,

- ՓՄՁ աջակցության ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման անհամաչափությունը և ցածր տեմպերը, ինչը ենթադրում է գործող կառույցների արդյունավետության բարձրացում և ընդլայնում ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում,
- պետության և բիզնեսի փոխգործակցության արդյունավետ համակարգի բացակայությունը,
- «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում սահմանված խնդիրների գործնական լուծումն ապահովող մեխանիզմների անկատարությունը կամ բացակայությունը:

Նշված խնդիրների լուծումն, ակնհայտորեն, նախ և առաջ, պահանջում է ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համակարգի կատարելագործում, որը պետք է իրականացվի երկու հիմնական ուղղություններով. ընթացիկ կարգավորման գործիքների և մեխանիզմների զարգացում և դրանց փոխկապակցում հեռանկարային կառավարման համակարգի հետ՝ շեշտադրումը կատարելով տնտեսության արդիականացման պայմաններում ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման վրա:

Պետք է նշել, որ հանրապետությունում ՓՄՁ ոլորտի գործունեության հիմնական խոչընդոտներից մեկը ռեսուրսային ապահովվածության ցածր մակարդակն է: Հատկապես արտաքին միջավայրի ոչ բարենպաստ ներգործության արդյունքում առավել սրությամբ է արտահայտվում ՓՄՁ սուբյեկտների գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների դեֆիցիտը: Ընդ որում, դա վերաբերում է ոչ միայն ֆինանսական միջոցներին, այլ նաև տնտեսական գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ մյուս ռեսուրսներին: Չնայած այն հանգամանքին, որ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով որպես պետական աջակցության հիմնական ուղղություններ են հռչակված նաև ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը, ինչպես նաև կադրերի

պատրաստումը և վերապատրաստումը, այդուհանդերձ, հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների ռեսուրսային ապահովվածության մակարդակը դեռևս չափազանց ցածր է: Այս տեսանկյունից, կարծում ենք, առաջիկա տարիներին հանրապետությունում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության ուղղությամբ մշակվող և իրականացվող քաղաքականությունը, նախ և առաջ, պետք է ուղղված լինի տվյալ ոլորտի սուբյեկտների ռեսուրսային ապահովվածության մակարդակի բարձրացմանը:

ՓՄՁ ոլորտի զարգացման համար, ակնհայտորեն, կարևոր նշանակություն ունի գործարար միջավայրը, որի բարելավման ուղղությամբ վերջին տարիներին հանրապետությունում իրականացվել են որոշակի քայլեր: Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի Doing Business 2017 (Գործարարությամբ զբաղվելը-2017) զեկույցում, որն արձանագրում է անցած մեկ տարվա ընթացքում երկրների գրանցած առաջընթացը բարեփոխումների և գործարար միջավայրի բարելավման մասով, Հայաստանը գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ 190 երկրների շարքում զբաղեցրել է 38-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատությամբ բարձրանալով 5 հորիզոնականով⁷³ Ընդհանուր առմամբ, զեկույցում գործարար միջավայրի գնահատումն իրականացվում է ընդհանուր ցուցիչի հաշվարկման միջոցով՝ հաշվի են առնելով 10 ենթացուցիչներ: Հայաստանը դյուրինացրել է «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում ընդգրկված երկու բնագավառ՝ վարկի ստացում (բարելավում 22 միավորով՝ բարձրանալով 20-րդ հորիզոնական) և պայմանագրերի կիրարկում (7 միավորով, 28-րդ հորիզոնական): Էներգամատակարարման համակարգին միացման ցուցիչով արձանագրվել է 9 միավորով բարելավում՝ 85-ից բարձրանալով 76-րդ հորիզոնական: Շինարարության թույլտվության ցուցիչով գրանցվել է 3 միավորի չափով անկում՝ (81-րդ հորիզոնական): Փոքր բաժնետերերի պաշտպանության գծով արձանագրվել է 2 միավորով նվազում (53-րդ հորիզոնական): Սնանկության ճանաչում ցուցիչի մասով անկումը կազմել է 3 միավոր (78-րդ հորիզոնական): Սեփականության գրանցման, հարկերի հավաքագրման ու արտաքին առևտրի գծով փոփոխություններ տեղի չեն ունեցել:

⁷³DoingBusiness 2017. <http://www.doingbusiness.org>

Doing Business 2017-ի տվյալներով Ռուսաստանը զբաղեցրել է 40-րդ Բելառուսը՝ 37-րդ, Ղազախստանը՝ 35-րդ, Ղրղզստանը՝ 75-րդ տեղերը:

Ինչպես նկատում ենք, չնայած արձանագրված որոշակի դրական տեղաշարժին, այդուհանդերձ, գործարար միջավայրի վիճակը դեռևս հեռու է ցանկալի մակարդակից: Այս տեսանկյունից, անհրաժեշտ է բարելավել տնտեսական միջավայրը՝ կարգավորելով և ազատականացնելով ՓՄՁ սուբյեկտների գործունեությունը, բարեփոխելով հարկային համակարգը և մրցակցության մասին օրենսդրությունը: Միաժամանակ, նպատակային ծրագրերի և ֆինանսավորման առավել կատարելագործված համակարգերի մշակումը պետք է զուգակցվի պետական աջակցության առաջադեմ միջոցների հետ՝ սուբսիդիաների, դոտացիաների և հարկային արտոնությունների տրամադրմամբ: Այդ միջոցառումների իրականացումը պետք է ապահովվի իրավական, ֆինանսական և ինստիտուցիոնալ համապատասխան համակարգի ձևավորմամբ, որի արդյունավետ կենսագործունեությունը պայմանավորված կլինի դրա բոլոր տարրերի գործունեության կոորդինացմամբ և համակարգմամբ՝ գործառույթների կրկնությունների առավելագույնս բացառման, պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների և փոքր և միջին ձեռնարկատիրության շահերի իրացման նպատակով: Բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմանն ուղղված պետական քաղաքականությունը պետք է հիմնված լինի բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար մրցակցային հավասար պայմանների ձևավորման, պետական անհարգի միջամտության բացառման, հստակ և հասկանալի խաղի կանոնների սահմանման հետ կապված հիմնախնդիրների լուծման նկատմամբ համակարգային մոտեցում ցուցաբերելու վրա: Ընդհանուր առմամբ, այդ նպատակով իրականացվող պետական քաղաքականությունը պետք է իր մեջ ընդգրկի հետևյալ ասպեկտները.

- ֆունկցիոնալ՝ ուղղված ՓՄՁ ոլորտի զարգացման տնտեսական, իրավական և կազմակերպական պայմանների ստեղծմանը,
- ոլորտային՝ ուղղված ՓՄՁ ոլորտի զարգացման գործում բոլոր շահագրգիռ կողմերի գործունեության կազմակերպմանը և կոորդինացմանը,

- տարածքային՝ ուղղված առանձին տարածաշրջաններում ՓՄՁ գործունեության հետ կապված առանձնահատկությունների գնահատման միջոցով տարբերակված քաղաքականության իրականացմանը,
- սոցիալական՝ ուղղված բնակչության առանձին սոցիալական խմբերի համար աջակցության միջոցների կիրառմանը:

ՓՄՁ ոլորտի զարգացումն, անշուշտ, պահանջում է տվյալ բնագավառում առկա իրավիճակի վերլուծության և համաշխարհային փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա գնահատել ՓՄՁ ոլորտի դերը հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման գործում» մշակել մոտեցումներ տվյալ բնագավառի հետագա զարգացման համար և որոշել դրանում պետական աջակցության հիմնական ուղղությունները՝ Սակայն պետք է նշել, որ այս ուղղությամբ ևս հանրապետությունում վիճակը հեռու է ցանկալի մակարդակից: Մասնավորապես, հանրապետությունում գոյություն չունի հստակ վիճակագրություն ՓՄՁ ոլորտի սուբյեկտների, նրանց ֆինանսատնտեսական հիմնական ցուցանիշների, երկրի տնտեսական կյանքում ունեցած դերի և մասնակցության, ինչպես նաև ոլորտի հետ ուղղակիորեն առնչվող մի շարք այլ կարևոր տնտեսական գործընթացների վերաբերյալ: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և «Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի պաշտոնական կայքերում, ինչպես նաև նրանց կողմից հրապարակվող պաշտոնական փաստաթղթերում ևս համակարգված վիճակագրությունը կամ բացակայում է, կամ էլ ժամանակային առումով հին է և հնարավորություն չի տալիս ռեալ պատկերացում կազմել ՓՄՁ ոլորտի վիճակի վերաբերյալ: Իսկ առանց վերջինիս, կարծում ենք, ավելորդ է ունենալ որոշակի ակնկալիքներ ՓՄՁ պետական աջակցության հասցեականության և արդյունավետության վերաբերյալ: Այս առումով, հանրապետությունում պետք է իրավական հստակ պահանջներ սահմանվեն ՓՄՁ ոլորտի վերաբերյալ վիճակագրության և մոնիտորինգի անցկացման և դրանց արդյունքների հրապարակման պարբերականության վերաբերյալ:

Որպեսզի ՓՄՁ աջակցությանն ու ռեսուրսային ապահովվածությանն ուղղված ծրագիրը դառնա գործուն միջոց տվյալ ոլորտի սուբյեկտների համար բարենպաստ

պայմաններ ապահովելու համար, այն պետք է հիմնվի արդյունավետության, նպատակաուղղվածության, հասցեականության, կոորդինացվածության և վերահսկելիության սկզբունքների վրա: Բնականաբար, դա ենթադրում է պետական աջակցության ծրագրերի մշակման գործընթացում այնպիսի մոտեցումների կիրառում, ինչպիսիք են ՓՄՁ ոլորտի վիճակի համակողմանի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը, ծրագրի ռեսուրսային ապահովվածության պլանավորումը, ակնկալվող արդյունքների կանխատեսումը և գնահատումը, ծրագրի կատարման արդյունավետության գնահատման չափորոշիչների և ցուցանիշների մշակումը, ինչպես նաև կատարման ամբողջ գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Մեր կարծիքով, ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման համար կարևոր նշանակություն ունեն որոշակի պայմաններ, որոնց ապահովումը պետք է հանդիսանա այդ ուղղությամբ պետական քաղաքականության հիմնական թիրախ: Մասնավորապես, որպես այդպիսիք կարելի է նշել հետևյալները.

- ՓՄՁ սուբյեկտների ռեսուրսային ապահովվածությունը, որն իր մեջ ընդգրկում է ֆինանսավորման, կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման, տեխնոլոգիաների յուրացման և նորարարությունների կիրառման հետ կապված գործընթացները,
- բիզնեսի զարգացմանն օժանդակումը, որն, առաջին հերթին, ենթադրում է համապատասխան ենթակառուցվածքների ձևավորում և պետական աջակցության գործուն մեխանիզմների ներդրում,
- բարենպաստ գործարար միջավայրը և տնտեսական գործունեության իրականացման պայմանները, որոնց բարելավման ուղղությամբ պետական քաղաքականությունը պետք է հիմնվի օրենսդրաիրավական և ինստիտուցիոնալ գործիքների արդյունավետ կիրառման վրա,
- ձեռնարկատիրական կուլտուրան, հասարակության մենթալիտետը և վերաբերմունքը ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ:

ՀՀ-ում ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի ցածր արդյունավետությունը, մեր կարծիքով, պայմանավորված է մի շարք պատճառներով: Նախ և առաջ, ՓՄՁ

աջակցության պետական ծրագրերում վերջնական նպատակների ոչ հստակ ձևակերպումը հնարավորություն չի տալիս դրանց ձեռքբերման նկատմամբ իրականացնել անհրաժեշտ վերահսկողություն: Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի, ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունն իրականացվում է տարեկան ծրագրով, որը մշակվում, հաստատվում և իրականացվում է կառավարության կողմից, իսկ կատարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ միասին Ազգային ժողով: Պետք է նշել, որ օրենքում բացակայում են ծրագրին ներկայացվող պահանջները, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել դրա արդյունավետությունը, բացահայտել թերացումները և կատարել անհրաժեշտ ուղղորդումներ: Մեր կարծիքով, ծրագրային միջոցառումները պետք է իրականացվեն հիմնախնդիրներ-լուծումներ-անհրաժեշտ ռեսուրսներ-ակնկալվող արդյունքներ մեկ ընդհանուր շղթայի շրջանակներում: Հակառակ պարագայում, ինչպես նաև ցույց է տալիս նախորդ տարիների փորձը, ՓՄՁ պետական աջակցության ծրագիրն իրենից կներկայացնի միջոցառումների ցանկ՝ առանց նպատակային և չափելի արդյունքների ներկայացման: Բնականաբար, նման պայմաններում դրա արդյունավետության գնահատումը հնարավոր չէ, ինչը պետական աջակցության քաղաքականության լուրջ բացթողումներից կարելի է համարել: Միաժամանակ, մեկ մարմնի կողմից ծրագրի մշակումը, հաստատումը և կատարումը կառավարման տեսանկյունից այնքան էլ նպատակահարմար չէ՝ առաջին հերթին արտաքին վերահսկողության հնարավորության բացակայության պատճառով: Բացի այդ, ստեղծվում է ոչ տրամաբանական իրավիճակ, երբ ծրագիրը հաստատում է ՀՀ կառավարությունը, իսկ դրա կատարման հաշվետվությունը՝ ՀՀ ԱԺ-ն: Ըստ էության, ակնկալվող արդյունքների բացակայության պայմաններում հնարավոր չէ գնահատել ծրագրի ռեսուրսային ապահովվածության մակարդակը, իսկ տարբեր մակարդակներում տարբեր ուղղություններով աջակցության ուղղությամբ իրականացվող միջոցառումների կոորդինացման մակարդակն էականորեն նվազում է:

Մեր համոզմամբ, ՓՄՁ ոլորտի տնտեսական և կազմակերպական զարգացման մեխանիզմում կարևոր տեղ պետք է զբաղեցնի ծրագրային մոտեցումը: Ընդ որում,

պետական աջակցության նպատակով բյուջետային և հարկային գործիքների, պետական պատվերների հետ միաժամանակ անհրաժեշտ է օգտագործել նաև գույքային գործիքները: Գաղտնիք չէ, որ ՓՄՁ շատ սուբյեկտներ սեփական տնտեսական գործունեության իրականացման նպատակով անհրաժեշտ գույք ստիպված են ձեռք բերել երկրորդային շուկայում, այդ նպատակով չունենալով պետական աջակցություն: Խնդիրն առավել, քան հրատապ է Հայաստանի Հանրապետության պարագայում, պայմանավորված, մի կողմից, անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակով, և, մյուս կողմից, ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական ցածր հնարավորություններով: Այս առումով, կարծում ենք, որ ՓՄՁ սուբյեկտներին պետք է հնարավորություն տրվի օգտագործման իրավունքով ձեռք բերել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող և այդ նպատակով հատկացված գույքային ռեսուրսները, ինչը կարող է լինել պետական աջակցության արդյունավետ դրսևորում:

ՓՄՁ զարգացման տեսանկյունից առավել կարևոր նշանակություն ունի տվյալ ոլորտի պետական աջակցության համակարգի կատարելագործումը, այդ ուղղությամբ համալիր և նպատակային ծրագրերի իրականացումը: Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետությունում առաջիկա տարիներին ՓՄՁ պետական աջակցության համակարգի հիմնական խնդիրներ պետք է հանդիսանան հետևյալները:

Առաջին, ՓՄՁ սուբյեկտների զարգացման և աջակցության միջոցառումների մշակման և իրականացման համալիր մոտեցման կիրառում, ինչը ենթադրում է պետական աջակցության բոլոր ենթահամակարգերի միջև փոխհամագործակցության և փոխկապվածության ցուցաբերում:

Երկրորդ, ՓՄՁ զարգացման ռազմավարական և մարտավարական ծրագրի մշակում, ինչը հնարավորություն կտա ապահովել ոլորտի երկարաժամկետ զարգացում: Ընդ որում, անհրաժեշտ է իրականացնել մարտավարական ծրագրի պարբերական վերանայում, դրված խնդիրների լուծման աստիճանի գնահատում, նոր տնտեսական իրավիճակով պայմանավորված անհրաժեշտ ուղղորդումների կատարում և ռազմավարական ծրագրի հետ ներդաշնակեցում:

Երրորդ, պլանաչափ և համակարգված աջակցության իրականացում: Այլ կերպ ասած, ՓՄՁ պետական աջակցությունը պետք է հետապնդի ոչ թե իրավիճակային խնդիրների լուծման, այլ տվյալ ոլորտի կայուն և երկարաժամկետ զարգացման նպատակ: Ակնհայտ է, որ պետական աջակցության շրջանակներում իրականացվող հատվածական քայլերը, որոնք հետապնդում են օպերատիվ խնդիրների լուծման նպատակ, չեն կարող ապահովել ոլորտի հեռանկարային զարգացում:

Չորրորդ, ֆինանսավարկային, տեղեկատվական, կադրային, ինովացիոն և պետական աջակցության այլ ձևերի համակարգված կիրառում:

Հինգերորդ, ՓՄՁ պետական աջակցության համակարգի կատարելագործում, հատկապես տեղական մակարդակներում:

Վեցերորդ, ՓՄՁ պետական աջակցության հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական բազայի կատարելագործում:

Յոթերորդ, ՓՄՁ ոլորտի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող կառույցների գործունեության հնարավորինս սահմանափակում և արհեստական խոչընդոտների վերացում:

Մեր կարծիքով, ՓՄՁ պետական աջակցության համակարգը պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա.

1. համատիրություն՝ ոլորտի սուբյեկտների համար ծառայությունների ամբողջական սպեկտրի ապահովում,
2. համակարգվածություն՝ ՓՄՁ ենթակառուցվածքի բոլոր տարրերի ֆունկցիոնալ փոխկապվածության ապահովում,
3. մրցունակություն՝ պետական պատվերների տեղաբաշխման գործընթացում ՓՄՁ բոլոր սուբյեկտների համար հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովում,
4. հրապարակայնություն՝ պետական աջակցության միջոցառումների վերաբերյալ ամբողջական և լիարժեք տեղեկատվության առկայություն և դրա հասանելիություն,

5. ճկունություն՝ արտաքին և ներքին տնտեսական իրավիճակների փոփոխություններին պետական աջակցության համակարգի արագ հարմարվելու ընդունակություն,

ՓՄՁ պետական կարգավորման հիմնական նպատակը ձեռնարկատիրական ռեսուրսների կենտրոնացումն է՝ բարենպաստ գործարար միջավայրի ձևավորման և կազմակերպատիրավական նախադրյալների ստեղծման հիման վրա՝ տնտեսության կայուն և դինամիկ զարգացման նպատակով ձեռնարկատիրության զարգացման և աջակցության ինստիտուտների կիրառմամբ:

ՓՄՁ պետական աջակցության համակարգի զարգացման ինստիտուցիոնալ հիմքերը պետք է ուղղված լինեն.

- ՓՄՁ պետական աջակցության միջոցառումների իրականացմանը,
- ՓՄՁ ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ընդունման և կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման միջոցով ադմինիստրատիվ և կազմակերպական արգելքների վերացմանը,
- ՓՄՁ ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծման խթանների ձևավորմանը,
- գործարար և ներդրումային ակտիվության աջակցությանը և ապրանքների և ծառայությունների շուկայում մրցակցության խթանմանը,
- ՓՄՁ աջակցություն իրականացնող այլ շահագրգիռ կառույցների հետ համագործակցության խորացմանը,
- ֆինանսավարկային և ներդրումային մեխանիզմների գործունեության ակտիվացմանը, ձեռնարկատիրական գործունեության ֆինանսավորման նոր աղբյուրների և ձևերի ներդրմանը,
- սոցիալական գործընկերության խորացման միջոցով շուկայի բոլոր սուբյեկտների հետաքրքրությունների և շահերի ներդաշնակեցման ապահովմանը,
- լիզինգի, ֆրանչայզինգի, բիզնես ինկուբատորների, տեխնոպարկերի, գործարար կենտրոնների, արտադրական կլաստերների, տեղեկատվական-արդյունաբերական համալիրների զարգացման միջոցով բարենպաստ ձեռնարկատիրական միջավայրի ձևավորմանն ու ֆինանսական և գույքային ռեսուրսների մատչելիության մակարդակի բարձրացմանը,

Անհրաժեշտ է նաև ՓՄՁ պետական աջակցության ոլորտում իրականացվող քաղաքականության վերափոխում հետևյալ գերակա ուղղություններով.

- մշակել և ընդունել օրենքների և նորմատիվ իրավական ակտերի համալիր ՓՄՁ աջակցության ուղղությամբ ինչպես պետական, այնպես և տեղական մակարդակում, ստեղծելով պետական աջակցության ինստիտուտների ճյուղավորված ուղղահայաց ցանց՝ կենտրոնից մինչև տեղական կառավարման մակարդակ,
- ՓՄՁ ոլորտում տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ինովացիոն զարգացմանը, տնտեսության արդիականացմանը և բարձր տեխնոլոգիական արտադրությունների զարգացմանը, ինովացիաների կիրառման միջոցով գործունեության դիվերսիֆիկացմանը, հաշվեկշռված տարածքային զարգացմանը, գործարար միջավայրի բարելավմանը և ՓՄՁ աջակցությանը՝ օրենսդրական դաշտի կատարելագործման միջոցով,
- ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման ապաքյուրոկրատացում, ինչը ենթադրում է գործարարությամբ զբաղվելու համար անհրաժեշտ գրանցման ընթացակարգերի, ժամկետների և թույլտվությունների պարզեցում, վերահսկողություն իրականացնող կառույցների կրճատում,
- գերփոքր ձեռնարկությունների համար հարկման մեղմ ռեժիմի սահմանում և գործուն արտոնությունների տրամադրում՝ հատկապես արտադրական գործունեություն իրականացնող սուբյեկտներին,
- ՓՄՁ սուբյեկտների համար ռեսուրսային շուկաներ մուտքի հնարավորությունների ավելացում, պետական պատվերների տեղաբաշխման գործընթացին վերջիններիս ներգրավում, ներդրումային ռիսկերի ապահովագրություն:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավարկային աջակցության առավել արդյունավետ միջոցներ են հանդիսանում երաշխիքային ֆոնդերի ստեղծումը, միկրոֆինանսավորման ծրագրերի իրականացումը, ֆրանչայզինգի և ֆակտորինգի ներդրումը, լիզինգային գործառնությունների իրականացումը: Նշվածներից որոշները հանրապետությունում գրեթե չեն կիրառվում, իսկ որոշների կիրառման շրջանակներն էլ խիստ սահմանափակ են, ինչը

հնարավորություն չի տալիս ՓՄՁ ֆինանսական ապահովվածության տեսանկյունից արձանագրել շոշափելի արդյունքներ: Կարծում ենք, հատկապես առաջնահերթ նշանակություն պետք է տրվի արտոնյալ պայմաններով ֆինանսական լիզինգի հիման վրա ֆինանսավորմանը, ինչի արդյունքում ՓՄՁ սուբյեկտները կստանան լրացուցիչ հնարավորություններ շրջանառու կապիտալի ձևավորման համար:

Հարկ է նշել, որ ներկայումս գոյություն չունի ՓՄՁ պետական աջակցության համակարգի գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանություն, ինչը զգալիորեն դժվարացնում է այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականության հիմնավորվածության և արդարացվածության որոշումը: Մեր կարծիքով, հետևյալ ցուցանիշների և չափորոշիչների միջոցով կարելի է իրականացնել ՓՄՁ աջակցության համակարգի արդյունավետության գնահատումը, որոնք բացարձակ և հարաբերական արտահայտությամբ արտացոլում են այս կամ այն ֆունկցիան:

Աղյուսակ⁷⁴

ՓՄՁ պետական աջակցության համակարգի արդյունավետության ցուցանիշները
և չափորոշիչները

N	Գործառույթը և իր չափորոշիչները	N	Բնութագիրը
1. Տնտեսական արդյունավետություն			
1.1.	ՓՄՁ սուբյեկտների ընդհանուր տնտեսական արդյունավետություն (ՀՆԱ-ում ունեցած մասնաբաժին)	1.1.1.	ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ) ընդհանուր ծավալի դինամիկան
		1.1.2.	Պետական և տեղական կարիքների համար թողարկվող արտադրանքի (ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ) ծավալ
		1.1.3.	Արտահանվող արտադրանքի ծավալ
		1.1.4.	ՓՄՁ աջակցության նպատակով օգտագործված բյուջետային միջոցներից հատույց
Աղյուսակ 19-ի շարունակություն			

⁷⁴ Կազմված է հեղինակի կողմից

		1.1.5.	Բյուջետային արդյունավետություն. ՓՄՁ ոլորտից բյուջե վճարված հարկերի աճի և ոլորտում բյուջեից կատարված հատկացումների հարաբերություն
		1.1.6.	Ինտեգրալ արդյունք. արտադրանքի իրացումից հասույթի դիսկոնտավորված մեծություն
		1.1.7.	Ինտեգրալ ծախսեր. արտադրանքի արտադրության և իրացման հետ կապված դիսկոնտավորված ծախսեր
		1.1.8.	Ինտեգրալ տնտեսական էֆեկտ. ինտեգրալ արդյունքի և ծախսերի տարբերություն
1..2.	ՓՄՁ սուբյեկտների կողմից վճարված հարկեր	1.2.1.	Տարբեր մակարդակների բյուջեներ ՓՄՁ սուբյեկտների կողմից վճարված հարկերի ծավալ
1.3.	ՓՄՁ ոլորտում կատարված ներդրումների ծավալ	1.3.1.	Ներդրումներ իրականացրած ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը
		1.3.2.	Արտադրական ինովացիոն ոլորտում իրականացված ներդրումների ծավալը
2	Սոցիալական արդյունավետություն		
2.1.	Բնակչության զբաղվածության աճ	2.1.1.	ՓՄՁ ոլորտում զբաղվածների թվաքանակի աճ
		2.1.2.	Մշտապես զբաղված աշխատողների տեսակարար կշիռը աշխատողների միջին տարեկան թվաքանակում
2.2.	Գործազուրկների թվաքանակի կրճատում	2.2.1.	Գրանցված գործազուրկների թվաքանակը
		2.2.2.	ՓՄՁ ոլորտում նոր ստեղծված աշխատատեղերի քանակը
		2.2.3.	ՓՄՁ ոլորտում նոր ստեղծված աշխատատեղերի թվաքանակի հարաբերությունը պաշտոնապես գրանցված գործազուրկների թվին

		2.2.4.	ՓՄՁ աջակցության ինստիտուտներից օգտվող սուբյեկտների թվաքանակը
2.3.	ՓՄՁ ոլորտի աշխատողների եկամուտների աճը	2.3.1	ՓՄՁ ոլորտի աշխատողների միջին տարեկան եկամտի դինամիկան
2.4.	Մանր սեփականատերերի թվաքանակի աճը	2.4.1.	Մանր սեփականատերերի թվաքանակի դինամիկան
		2.4.2.	Մանր ձեռնարկատերերի տեսակարար կշիռը տնտեսապես ակտիվ բնակչության մեջ

Ներկայացված ցուցանիշների և չափորոշիչների համախումբը կարող է որոշակի հնարավորություն ընձեռել գնահատելու ՓՄՁ ոլորտի վիճակն ըստ դինամիկայի՝ ընդհանուր տնտեսական զարգացման համատեքստում: Իհարկե, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ներկայացված ցուցանիշներից որոշներն ուղղակիորեն, իսկ մյուսներն անուղղակիորեն են վկայում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության արդյունավետության մասին: Դրանով հանդերձ, այդ ցուցանիշներն իրենցից ներկայացնում են փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վիճակի յուրահատուկ բնութագրիչներ, որոնք վկայում են նաև այդ ուղղությամբ իրականացվող պետական աջակցության հասցեականության և նպատակայնության մասին: Միևնույն ժամանակ, կարելի է դրանցից առանձնացնել միայն այնպիսիները, որոնք իրականացվող պետական աջակցության պայմաններում հնարավորություն կտան օբյեկտիվորեն գնահատելու ՓՄՁ վիճակը: Մասնավորապես, որպես այդպիսիք կարելի է նշել.

1. գրանցված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի փոփոխությունը,
2. ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների թվաքանակի փոփոխությունը,
3. ՓՄՁ սուբյեկտների կողմից իրականացված ներդրումների ծավալը,
4. ստեղծված նոր աշխատատեղերի թվաքանակը,
5. ՓՄՁ սուբյեկտների կապիտալիզացիայի աճը,
6. ՓՄՁ սուբյեկտների կողմից ներգրավված ֆինանսական ռեսուրսների ծավալը,
7. ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ) ընդհանուր ծավալը,

8. Տարբեր մակարդակների բյուջեներ ՓՄՁ սուբյեկտների կողմից վճարված հարկերի ծավալ:

Կարծում ենք, վերը նշված ցուցանիշների միջոցով է անհրաժեշտ գնահատել ՓՄՁ ոլորտի պետական աջակցության արդյունավետությունը: Ընդ որում, նշվածներից յուրաքանչյուրի գծով ՓՄՁ աջակցության տարեկան ծրագրում պետք է ամրագրվեն արդյունքային ցուցանիշներ, որոնց ձեռք բերմանը պետք է ուղղված լինի պետական աջակցության քաղաքականությունը: Դա հնարավորություն կտա գնահատել դրված նպատակների և նախատեսված միջոցառումների համապատասխանության աստիճանը, ինչպես նաև ծրագրի կատարման հաշվետվության հաստատման ժամանակ պլանավորված և փաստացի ստացված արդյունքների համադրման միջոցով որոշել իրականացված պետական քաղաքականության էֆեկտիվությունը:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ մեր կողմից առաջարկվող մոտեցումը կապահովի միաժամանակ մի քանի խնդիրների լուծում: Առաջին, ՓՄՁ ոլորտի վերաբերյալ վիճակագրական համալիր և ամբողջական հաշվառման իրականացում, ինչը հնարավորություն կտա պարզել դրա իրական պատկերը և արձանագրված տնտեսական և սոցիալական զարգացումները: Երկրորդ, ՓՄՁ պետական աջակցության քաղաքականությունը կդառնա առավել նպատակային և թափանցիկ, քանի որ կապահովվի իրականացվող միջոցառումներից ակնկալվող տնտեսական և սոցիալական էֆեկտի տեսանելիությունը: Երրորդ, պետական աջակցության ծրագրերը դեկլարատիվ բնույթի փաստաթղթերից կվերածվեն գործողությունների հստակ պլանի՝ ապահովելով միջոցառումներ-արդյունքները կապը: Եվ վերջապես, չորրորդ, հնարավորություններ կստեղծվեն իրական վերահսկողություն իրականացնելու ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի նկատմամբ պլանավորված և փաստացի ցուցանիշների համադրման միջոցով՝ պարզելով դրանց արդյունավետության և նպատակայնության աստիճանը:

3.2. Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության հարկային լծակների արդյունավետության բարձրացման ուղիները

ՓՄՁ ոլորտի արդյունավետ կենսագործունեության ապահովման և զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման առումով, ինչպես արդեն նշեցինք աշխատանքի նախորդ բաժիններում, էական նշանակություն ունի ռեսուրսային ապահովվածությունը: Նշված խնդրի լուծման գործում իրենց կարևորությամբ հատկապես առանձնանում են ֆինանսավարկային գործիքները, որոնց հիմնավորված և նպատակային կիրառման պարագայում ՓՄՁ սուբյեկտները հնարավորություն կստանան մասնակիորեն լուծել ֆինանսական ռեսուրսների ձևավորման հետ կապված խնդիրները: Ըստ էության, դրան է ուղղված նաև ՓՄՁ ոլորտի նկատմամբ բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը, որը, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, տվյալ ոլորտի պետական աջակցության հիմնական ուղղություններից մեկն է հանդիսանում: Նման մոտեցումն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետությունում, ինչի մասին է վկայում «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով «բարենպաստ հարկային քաղաքականությունը» որպես ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղության հռչակումը: Անշուշտ, դա ենթադրում է տվյալ ոլորտի հանդեպ հարկման այնպիսի մեխանիզմների և ընթացակարգերի սահմանում, որոնք կնպաստեն տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների համար հարկային արտոնյալ պայմանների ձևավորմանը:

Պետության կողմից ՓՄՁ ոլորտի աջակցության առանձնահատուկ ձև է հանդիսանում հարկման հատուկ ռեժիմների սահմանումը: Վերջիններս ունեն խթանիչ ներգործություն տնտեսության վրա, քանի որ ենթադրում են հարկային ճնշման թուլացում հարկատուի համար: Հարկման հատուկ ռեժիմների շնորհիվ իրականացվում է ոչ միայն հարկերի ֆիսկալ, այլ նաև կարգավորիչ գործառույթը: Կարելի է ասել, որ ՓՄՁ ոլորտի հանդեպ տարբերակված հարկային քաղաքականության իրականացումն օբյեկտիվ անհրաժեշտություն է: Հայտնի է, որ շուկայական միջավայրի փոփոխություններին արագ կերպով հարմարվելու շնորհիվ ՓՄՁ սուբյեկտներն ընդունակ են հնարավորինս կարճ ժամկետներում թողարկել նոր, բարձր տեխնոլոգիական արտադրանք: Սակայն խոշոր բիզնեսի համեմատությամբ նրանց

մրցակցային դիրքերը բավականաչափ թույլ են և խոցելի: Նշված հանգամանքով պայմանավորված, արդարացված և հիմնավորված է ներկայանում հարկման կայուն և բարենպաստ պայմաններում ՓՄՁ սուբյեկտների գործելու անհրաժեշտությունը, որոնք կարող են ստեղծվել հարկման հատուկ ռեժիմների սահմանման միջոցով: Դրանց կիրառումը հնարավորություն է տալիս նվազեցնել ՓՄՁ սուբյեկտների մրցակցային դիրքերի խոցելիությունը և որոշակիորեն նպաստել նրանց մրցունակության բարձրացմանը: Հետևաբար, կարող ենք նշել, որ ՓՄՁ ոլորտի նկատմամբ բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը չի խախտում հարկային համակարգի չեզոքությունը:

Ընդհանուր առմամբ, հարկման հատուկ ռեժիմների սահմանման և կիրառման խնդիրները խիստ առանցքային նշանակություն ունեն ինչպես ՓՄՁ ոլորտի զարգացման, այնպես էլ ընդհանուր հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար: Ակնհայտ է, որ այդ նպատակով սահմանվող հատուկ ռեժիմների կիրառումը կարող է ցանկալի արդյունքների հանգեցնել միայն այն դեպքում, երբ այն խիստ հիմնավորված է և առավելագույնս սահմանափակում է հարկերի վճարումից խուսափելու հնարավորությունները: Բնականաբար, այդ ուղղությամբ լուծումների մշակմանը պետք է նախորդի բազմաբնույթ և համալիր ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացումը՝ նման արտոնությունների տրամադրման հնարավոր հետևանքների գնահատման և խնդրի լուծման արդյունավետ տարբերակների մշակման տեսանկյունից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ինչպես ցանկացած հարկային արտոնության, այնպես էլ ՓՄՁ ոլորտի համար տրամադրվողները, հանգեցնում են պետական եկամուտների որոշակի կրճատման: Այս տեսանկյունից, այն պետք է լինի անհրաժեշտ և հիմնավորված, ինչը նշանակում է, որ նման ռեժիմների կիրառումը պետք է ընդհանուր տնտեսական և սոցիալական զարգացման տեսանկյունից ունենա բավարար էֆեկտ կամ, այլ կերպ ասած, կարճաժամկետ հատվածում բյուջետային եկամուտների կորուստը պետք է փոխհատուցվի երկարաժամկետ հատվածում տնտեսական զարգացմամբ:

ՓՄՁ ոլորտի նկատմամբ համապատասխան հարկային քաղաքականության մշակման և իրականացման հարցերը մեծ հրատապություն ունեն նաև Հայաստանի Հանրապետությունում: Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին պարբերաբար իրականացվել են փոփոխություններ տվյալ ոլորտը կանոնակարգող հարկային օրենքներում, այդուհանդերձ, դեռևս չի հաջողվել գտնել ոլորտի զարգացման համար ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ ապահովող լուծումներ: Բնականաբար, այս ամենը ենթադրում է ՓՄՁ ոլորտի նկատմամբ մշակվող և իրականացվող հարկային քաղաքականության կատարելագործման ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտում և լուծման արդյունավետ ուղիների մշակում: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ նաև այն, որ ՓՄՁ ոլորտի համար սահմանվող հարկման հատուկ ռեժիմները, լինելով պետական աջակցության կարևոր գործիքներից մեկը, դրա զարգացման անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման են հանդիսանում: Հետևաբար, նման ռեժիմների սահմանումը և կիրառումը պետք է դիտարկվի ՓՄՁ պետական աջակցության մյուս մեխանիզմների հետ միասին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնախնդիրները, դրա վրա ազդող գործոնները խիստ բազմաբնույթ և բազմաբովանդակ են, պետական աջակցության գործիքների ընտրությունը և կիրառումը պետք է իրականացվի առկա խնդիրների առանձնահատկություններից և ռեսուրսային հնարավորություններից ելնելով: Ընդ որում, յուրաքանչյուր երկիր դրանց ընտրությունն իրականացնում է իր սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից, ձեռնարկատիրության զարգացման մակարդակից, ֆինանսական հնարավորություններից և այլ գործոններից ելնելով: Մեկ երկրում հաջողությամբ կիրառվող ՓՄՁ աջակցության գործիքները նույն հաջողությունը չեն կարող արձանագրել այլ երկրներում, ինչը, մեր կարծիքով, օբյեկտիվ է: Դա հատկապես վերաբերում է հարկման ռեժիմի ընտրությանը, ինչի վկայություն պետք է համարել նաև դրա վերաբերյալ միասնական մոտեցման բացակայությունը: Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի նկատմամբ հարկման ռեժիմի սահմանումը և կիրառումը, նախ և առաջ, պետք է բխի ձևավորված սոցիալ-տնտեսական իրադրություններից, տվյալ ոլորտի առանձնահատկություններից և գոյություն ունեցող հիմնախնդիրներից: Միաժամանակ,

տնտեսության այդ հատվածի զարգացումը, ի թիվս հարկային գործիքների, ենթադրում է նաև պետական աջակցության այլ մեխանիզմների արդյունավետ կիրառում, ինչը ենթադրում է ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համալիր ռազմավարության իրականացում:

ՓՄՁ ոլորտի պետական աջակցության բարելավման, այդ թվում՝ նաև հարկային բարենպաստ քաղաքականության իրականացման առումով, անշուշտ, չափազանց կարևոր նշանակություն ունի տվյալ գործընթացի հասցեականության ապահովումը: Այս առումով, անհրաժեշտ է մշակել և կիրառել չափորոշիչների միասնական համակարգ, որոնք հնարավորություն կտան հստակ կերպով առանձնացնել ՓՄՁ սուբյեկտներին: Պետք է նշել, որ հանրապետությունում ներկայումս գոյություն չունի ընդհանուր մոտեցում փոքր և միջին բիզնեսի և հարկման հատուկ ռեժիմներից օգտվող սուբյեկտների չափորոշիչների նկատմամբ, ինչը որոշակիորեն նվազեցնում է պետական աջակցության արդյունավետությունը: Չնայած հանրապետությունում գործում են հարկման հատուկ ռեժիմների մի քանի տեսակներ, սակայն դրանցից ոչ մեկը բացառապես ՓՄՁ ոլորտի համար նախատեսված չէ: Մասնավորապես, հարկման ընդհանուր ռեժիմին զուգահեռ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է նաև հարկման հատուկ ռեժիմներ, որոնք հանդես են գալիս շրջանառության հարկի, արտոնագրային և հաստատագրված վճարների տեսքով:

Շրջանառության հարկը օրենքով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից իրականացվող գործունեության համար պետական բյուջե վճարվող հարկ է, որը փոխարինում է ավելացված արժեքի հարկին և շահութահարկին: Վճարողներ են համարվում այն անձինք, որոնց իրացման շրջանառությունը նախորդ տարվա ընթացքում չի գերազանցել 115.0 մլն դրամը:⁷⁵

Արտոնագրային վճարն օրենքով սահմանված չափերով և ժամկետներում ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ) կողմից վճարվող ավելացված արժեքի հարկին և շահութահարկին փոխարինող հարկ է, որը գանձվում է

⁷⁵ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք

գործունեության որոշակի տեսակներով զբաղվող անձանցից: Արտոնագրային վճար վճարող կարող են համարվել այն ֆիզիկական անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 9,0 մլն դրամը և որոնք չունեն վարձու աշխատողներ:⁷⁶

Հաստատագրված վճարը ևս հարկերին փոխարինող հարկ է, որը գանձվում է օրենքով սահմանված գործունեության տեսակներով զբաղվող անձանցից՝ որպես հարկման բազա ընդունելով սահմանված ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալը:⁷⁷

Հաշվի առնելով վերջին տարիներին հաստատագրված վճարներով հարկման ենթակա գործունեության տեսակների շրջանակների էական կրճատումը (նախկին 24-ի փոխարեն ներկայումս ընդամենը գործունեության 3 տեսակ է ենթակա հարկման հաստատագրված վճարներով), կարող ենք նշել, որ շրջանառության հարկը և արտոնագրային վճարները համարվում են այն հիմնական հատուկ ռեժիմները, որոնցից ինչ-որ չափով կարող են օգտվել ՀՀ-ում գործող ՓՄՁ սուբյեկտները: Սակայն հատկանշական է այն հանգամանքը, որ դրանք զուտ ՓՄՁ ոլորտի համար սահմանված հարկման հատուկ ռեժիմներ չեն, քանի որ գոյություն չունի չափորոշիչների միասնականություն: Մասնավորապես, հանրապետությունում ՓՄՁ ոլորտի դասակարգման չափորոշիչները սահմանված են «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում, որոնք իրացման շրջանառության մասով գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար համապատասխանաբար կազմում են 100 մլն, 500 մլն և 1500 մլն դրամ:⁷⁸ Շրջանառության հարկ և արտոնագրային վճար վճարող համարվելու համար իրացման շրջանառությունը պետք է չգերազանցի համապատասխանաբար 115 մլն և 9 մլն դրամը:⁷⁹ Փաստորեն, գոյություն ունի էական տարբերություն վերջիններիս և ՓՄՁ սուբյեկտ հանդիսանալու համար սահմանված չափորոշիչների միջև: Այլ կերպ ասած, հանրապետությունում գործող հարկման հատուկ ռեժիմների դաշտում առավելագույնը


⁷⁶ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենք

⁷⁷ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենք

⁷⁸ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք

⁷⁹ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենք, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենք

կարող են ընդգրկվել միայն գերփոքր ձեռնարկությունները՝ այն էլ որոշակի պայմանների բավարարման դեպքում: Ընդ որում, պետք է նկատի ունենալ նաև այն, որ շրջանառության հարկ վճարող համարվելու համար ներկայումս գործող շեմը սահմանվել է 2015 թվականին, իսկ արտոնագրային վճարների դեպքում այն էականորեն զիջում է ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենքով սահմանված չափորոշիչներին: Դրանով հանդերձ, 2015 թվականի տվյալներով շրջանառության հարկի և արտոնագրային վճարների գծով բյուջետային մուտքերը կազմել են համապատասխանաբար 11.9 մլրդ դրամ (հարկային եկամուտների և պետական տուրքերի 1.1 տոկոսը) և 6.6 մլրդ դրամ (հարկային եկամուտների և պետական տուրքերի 0.6 տոկոսը): Այսինքն, նշված հարկատեսակների գծով մուտքերը միասին կազմել են ընդհանուր հարկային եկամուտների 1.7 տոկոսը:⁸⁰ Ի դեպ, հատկանշական է այն հանգամանքը, որ 2014-2015 թվականի տվյալներով ՓՄՁ սուբյեկտների կողմից վճարված հարկերի ծավալն ունեցել է հետևյալ պատկերը:



Գծապատկեր 8. ՓՄՁ սուբյեկտների կողմից վճարված հարկերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտների ծավալում 2014-2015 թվականներին⁸¹

Ինչպես նկատում ենք, 2015 թվականի տվյալներով գերփոքր կազմակերպությունների կողմից վճարված հարկերի մասնաբաժինը ընդհանուր

⁸⁰ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջի կատարման մասին տարեկան հաշվետվություն

⁸¹ <http://www.mineconomy.am>

հարկային եկամուտների մեջ կազմել է ընդամենը 5.7 տոկոս, ինչը բավականաչափ համեստ ցուցանիշ է:

Փաստորեն,կարող ենք պնդել, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի համար սահմանված հարկման հատուկ ռեժիմ չկա և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը, որպես ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղություն, չունի գործնական կիրառում: Հանրապետությունում գործող հարկման հատուկ ռեժիմներից լավագույն դեպքում օգտվում են միայն գերփոքր ձեռնարկությունների որոշակի մասը, ինչը չի կարող համարվել որպես ՓՄՁ պետական աջակցության լիարժեք դրսևորում: Իհարկե, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ հանրապետությունում գործող ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը գերփոքր ձեռնարկություններն են: Սակայն, դրանով հանդերձ, գտնում ենք, որ անհրաժեշտ է հարկային օրենսդրությամբ ևս որդեգրել ՓՄՁ դասակարգման չափորոշիչների մասով միասնական մոտեցում: Դրա կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՓՄՁ ոլորտի պետական աջակցության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դրա հասցեականությամբ, ինչն, իր հերթին, ենթադրում է տվյալ ոլորտին դասվելու համար չափորոշիչների միասնականության ապահովում: Պետք է նաև նշել, որ ՓՄՁ ոլորտի պետական աջակցության ներքո, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում, նախ և առաջ, ենթադրվում է գերփոքր ձեռնարկություններին աջակցության ցուցաբերումը, քանի որ դրանք են կազմում ՓՄՁ սուբյեկտների հիմնական մասը: Հետևաբար, ՓՄՁ ոլորտի նկատմամբ հարկային բարենպաստ քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ որպես թիրախային նպատակ անհրաժեշտ է դիտարկել գերփոքր ձեռնարկությունների համար հարկային բարենպաստ դաշտի ձևավորումը:

2016 թվականին ընդունված Հարկային օրենսգրքով որպես հարկման հատուկ համակարգեր են սահմանվում շրջանառության և արտոնագրային հարկը: Բացի այդ, ընտանեկան ձեռնարկատիրության համակարգի շրջանակներում գործող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերն ազատվում են ԱԱՀ-ից,

շահութահարկից և շրջանառության հարկից:⁸² Միաժամանակ, Հարկային օրենսգրքով նախատեսվում է 2019 թվականից նեղացնել հարկման այլընտրանքային համակարգերի, և հատկապես՝ շրջանառության հարկի համակարգի կիրառության շրջանակը՝ շրջանառության հարկի տարեկան 115 մլն. դրամի չափով շեմը սահմանելով տարեկան 58.35 մլն. դրամ: Կարծում ենք, գործնական կիրառության կամ փոքր և միջին բիզնեսի վրա այս փոփոխության բացասական ազդեցության չեզոքացման առումով անհրաժեշտ է ապահովել մի շարք այլ պայմաններ ևս, մասնավորապես՝ արտադրության և շրջանառության համատարած և պարտադիր փաստաթղթավորման ապահովումը, հարկային վարչարարության բնագավառում խտրական մոտեցումների և կոռուպցիայի վերացումը, ստվերային տնտեսության ծավալների կտրուկ նվազումը և միջազգային լավագույն փորձի առումով ընդունելի մակարդակի ձեռքբերումը, մրցակցային առողջ միջավայրի ապահովումը և այլն: Տնտեսական իրավիճակի անգամ ոչ խորքային վերլուծությունը չի վկայում այն մասին, որ Հայաստանն արդեն անցել է այն անցումային փուլը, որում շրջանառության հարկի կիրառման բարձր շեմն արդարացված էր: Մեր կարծիքով, նշված անցումային փուլը կարելի է անցած համարել միայն այն դեպքում, երբ համապատասխան վերլուծությունների արդյունքում կպարզվի, որ գործնականում լուծված են այն հիմնական խնդիրները, որոնք հանդիսանում են անցումային փուլի չափորոշիչներ, իսկ հակառակ պարագայում առաջարկվող մոտեցումը կարող է բավականին բացասական ազդեցություն ունենալ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության վրա՝ մեծացնելով նրանց հարկային բեռը: Ավելին, համաձայն տվյալ մոտեցման, շրջանառության հարկի շեմը կտարածվի ընդամենը գերփոքր ձեռնարկությունների մի մասի վրա, հնարավորություն չտալով փոքր և միջին բիզնեսի սուբյեկտներին գործել տվյալ դաշտում:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի համար բարենպաստ հարկային քաղաքականության ռազմավարությունը, մեր կարծիքով, պետք է կազմված լինի երկու՝ կարճաժամկետ և երկարաժամկետ մասերից: Կարճաժամկետ հատվածում հարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի ՓՄՁ ոլորտի համար հարկման հատուկ ռեժիմի սահմանմանը՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական

⁸² Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք

աջակցության մասին» ՀՀ օրենքում սահմանված չափորոշիչների կիրառմամբ: Այս փուլում ՓՄՁ ոլորտի հարկման առումով կանոնում ենք նաև հետևյալ արմատական քայլի իրականացումը: Ինչպես աշխատանքի երկրորդ գլխում իրականացված վերլուծությունը ցույց տվեց, հանրապետությունում ՓՄՁ ոլորտը, ավելի շատ իրականացնում է սոցիալական, քան տնտեսական գործառույթ: Հետևաբար, կարծում ենք, որ պետության կողմից տվյալ ոլորտի հանդեպ վերաբերմունքը պետք է լինի ոչ այնքան որպես տնտեսական, այլ սոցիալական հիմնախնդիրներ լուծողի: Այս կապակցությամբ, առաջարկում ենք օրենսդրորեն սահմանել սոցիալական բիզնես հասկացությունը՝ դրա որոշման հստակ չափորոշիչների ամրագրմամբ: Գաղտնիք չէ, որ հանրապետության ՓՄՁ ոլորտում գործող սուբյեկտների գերակշիռ մասը սեփական գործունեությամբ լուծում է նվազագույն սոցիալական խնդիրներ, ինչով պայմանավորված պետք է դուրս գտնվի հարկման դաշտից: Այս առումով, կարծում ենք, անհրաժեշտ է հստակ տարբերակում իրականացնել տնտեսական և սոցիալական գործառույթ իրականացնող ՓՄՁ սուբյեկտների (այս համատեքստում ՓՄՁ սուբյեկտների տակ նկատի են առնված գերփոքր ձեռնարկությունները) միջև: Սոցիալական գործառույթ իրականացնող սուբյեկտները չպետք է դիտարկվեն որպես պոտենցիալ հարկատուներ, քանի որ նրանց գործունեությունն ուղղված է և ընդամենը բավարար է միայն սոցիալական նշանակության խնդիրների լուծման համար: Որպես սոցիալական գործառույթ իրականացնող սուբյեկտներ կամ սոցիալական բիզնեսով զբաղվողներ առաջարկվում է համարել այն սուբյեկտներին, որոնց ամսեկան համախառն եկամուտը չի գերազանցի նվազագույն կենսապահովման զամբյուղի արժեքը: Այլ կերպ ասած, այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք իրենց գործունեությամբ լուծում են բացառապես նվազագույն սոցիալական խնդիրներ և բավարարում սեփական ծախսային կարիքները, չպետք է հանդիսանան հարկ վճարողներ: Առաջարկվող մոտեցումը հիմնավորվում է նաև այն փաստարկով, որ ՓՄՁ ոլորտը հանդիսանում է ոչ միայն ու ոչ այնքան տնտեսական, ինչքան սոցիալական գործառույթ իրականացնող: Հետևաբար, նշված հանգամանքով, ինչպես նաև ներկայումս հանրապետությունում կուտակված սոցիալական խնդիրների բնույթով պայմանավորված, կարծում ենք, անհրաժեշտ է վերը նշված պայմանին բավարարող

փոքր և միջին ձեռնարկություններին (հատկապես գերփոքր ձեռնարկություններին) ազատել հարկերից: Այսինքն, պետությունը նման սուբյեկտներին պետք է երաշխավորի կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն եկամուտներ՝ դրանով իսկ լուծելով որոշակի սոցիալական խնդիրներ: Մեր կարծիքով, այս մոտեցումը, հատկապես պետք է կիրառել ընտանեկան ձեռնարկատիրության մասով՝ ելնելով ընտանիքի կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ եկամուտը (որը պետք է հաշվարկվի նվազագույն կենսաապահովման զամբյուղի արժեքի հիման վրա) չհարկելու հրամայականից: Բացի այդ, ՓՄՁ հարկման ռեժիմի սահմանման ժամանակ անհրաժեշտ է որպես հարկման բազա դիտարկել համախառն եկամուտը, այլ ոչ թե իրացման շրջանառությունը: Այս խնդիրը գոյություն ունի շրջանառության հարկի դեպքում, երբ իրացման շրջանառությունը որպես հարկման բազա ընդունելիս հաշվի չի առնվում գնաճի մակարդակը և փաստացի ստացվում է, որ շրջանառության հարկ վճարողների համար սահմանված շեմը յուրաքանչյուր տարի փաստացի նվազում է, ինչի հետևանքով տվյալ ռեժիմում գործող սուբյեկտների թվաքանակը կրճատվում է: Բացի այդ, համախառն եկամուտն առավել իրական պատկերացում է տալիս հարկման առումով տնտեսավարող սուբյեկտների հարկային ներուժի վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, պետք է նաև կարևորել ոլորտի հանդեպ իրականացվող հարկային քաղաքականության կայունությունը և կանխատեսելիությունը, ինչը հանրապետությունում լուրջ հիմնախնդիր է հանդիսանում: Մասնավորապես, այդ մասին են վկայում ոլորտի գործունեությունը կարգավորող հարկային օրենքներում կատարվող հաճախակի փոփոխությունները, ինչը տնտեսավարող սուբյեկտների մոտ առաջացնում է անորոշության մեծ աստիճան՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Այս կապակցությամբ, առաջարկում ենք օրենսդրորեն սահմանել համապատասխան մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտա հարկ վճարողներին, կամավորության սկզբունքով, որոշակի ժամանակահատվածում (2-3 տարի), անկախ հարկային դրույքաչափերի, հարկման բազայի և վճարման ժամկետների փոփոխություններից, գործել գրանցման պահին սահմանված օրենսդրական դաշտի պահանջների շրջանակներում: Դա, մեր կարծիքով, պետության կողմից ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող ռեալ երաշխիք կլինի խաղի կանոնների կայունության

կտրվածքով, ինչն, իր հերթին, հարկ վճարողներին հնարավորություն կտա արդյունավետ կերպով պլանավորել սեփական տնտեսական գործունեությունը: Պատահական չէ, որ ներկայումս հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների հիմնական դժգոհություններից է ոչ միայն հարկային բեռի ծանրությունը, այլ նաև գործող հարկման ռեժիմի անկայունությունը և անկանխատեսելիությունը:

Կարճաժամկետ հատվածում ՓՄՁ ոլորտի համար հարկման ռեժիմների սահմանման ժամանակ անհրաժեշտ է նաև հիմնավորված կերպով կիրառել հարկային արձակուրդների տրամադրման մեխանիզմը, որը պետական աջակցության կարևոր գործիք կարող է հանդիսանալ: Մասնավորապես, նոր ստեղծված գերփոքր ձեռնարկություններին անհրաժեշտ է տրամադրել հարկային արձակուրդ մինչև 2 տարի ժամանակահատվածով, ինչը հնարավորություն կտա վերջիններիս կայանալու և հետագայում որպես հարկ վճարող հանդես գալու համար:

Երկարաժամկետ հատվածում ՓՄՁ ոլորտի նկատմամբ իրականացվող հարկային քաղաքականությունը, մեր կարծիքով, պետք է հիմնված լինի պրոգրեսիվ հարկման մեխանիզմի վրա: Գործելով հարկման ընդհանուր ռեժիմում, ՓՄՁ սուբյեկտները պետք է հնարավորություն ստանան սահմանված պրոգրեսիայի միջոցով հարկվել առավել ցածր հարկային դրույքաչափերով: Ըստ էության, այս մեխանիզմը, մեր կարծիքով, հարկման տեսանկյունից առավել արդարացի է, հաշվի է առնում հարկ վճարողների և վճարունակությունը և սահմանափակում է եկամուտների ու շահույթի բևեռացման հնարավորությունները:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ հարկային լծակները կարևոր գործիք են պետության ձեռքին ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համար: Միևնույն ժամանակ, դրանք կարող են ապահովել ցանկալի արդյունքներ միայն հիմնավորված և հասցեական կիրառման դեպքում: Առաջիկա տարիներին հանրապետությունում վերը նշված ուղղություններով հարկային քաղաքականության իրականացումը, մեր կարծիքով, իրական երաշխիքներ կստեղծի ՓՄՁ ոլորտի զարգացման համար և կնպաստի տվյալ ոլորտի սուբյեկտների ռեսուրսային ապահովվածության մակարդակի բարձրացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա կարելի է մի շարք հետևություններ անել ՓՄՁ պետական աջակցության համակարգի արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Իրականացված վերլուծությունների և ուսումնասիրությունների ամփոփ արդյունքները արտացոլված են հետևյալ առավել հատկանշական եզրակացություններում:

1. ՓՄՁ ոլորտն էական դերակատարում ունի շուկայական տնտեսության կայացման և զարգացման գործում: Այն հանդիսանում է բիզնեսի կազմակերպման և իրականացման առավել զանգվածային, դինամիկ և ճկուն ձև, որը կանխորոշում է պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման աստիճանը: Նպաստելով հասարակական բարեկեցության աճին, ստեղծելով տնտեսական հետաքրքրությունների և շահերի իրացման նախադրյալներ, անհատի բիզնես հակումների դրսևորման հնարավորություններ, փոքր և միջին ձեռնարկատիրությունը խթանում է միջին խավի ձևավորմանը և երկրում սոցիալական կայունության ապահովմանը: Այդ իսկ պատճառով, տվյալ ոլորտի զարգացումը յուրաքանչյուր պետության համար ունի ոչ միայն տնտեսական և սոցիալական, այլ նաև քաղաքական նշանակություն: Դրա զարգացումը կարևոր պայման է հանդիսանում սոցիալ-տնտեսական տարաբնույթ հիմնախնդիրների լուծման, ձեռնարկատիրության ոլորտ բնակչության զգալի հատվածի ներգրավման և, դրանով իսկ, զբաղվածության մակարդակի բարձրացման, նորարարությունների ներդրման, ինչպես նաև նոր տիպի տնտեսական հարաբերությունների ձևավորման և խորացման համար: ՓՄՁ ոլորտն իր յուրահատուկ մասնակցությունն ունի մրցակցային միջավայրի զարգացման գործում: Նշված ոլորտին պատկանող յուրաքանչյուր սուբյեկտ առանձին վերցրած չի կարող դիմանալ խոշոր բիզնեսի հետ մրցակցությանը: Սակայն որպես տնտեսության առանձին սեկտոր ՓՄՁ ոլորտն ապահովում է շուկայում որոշակի մրցակցություն և հնարավորություն չի տալիս խոշոր բիզնեսին էական ներգործություն ունենալ ոչ շուկայական մեխանիզմների վրա հիմնված գնագոյացման և ապրանքների ու ծառայությունների բաշխման գործընթացի վրա:

2. ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը պետք է դիտարկել տնտեսության պետական կարգավորման համատեքստում, քանի որ բացառապես շուկայական օրենքների գործողության պայմաններում տվյալ ոլորտի զարգացման հնարավորությունները միանշանակ բացառվում են: ՓՄՁ ոլորտի սուբյեկտները, հատկապես իրենց կայացման փուլում, բախվում են մի շարք դժվարությունների հետ, կապված նախնական կապիտալի ձևավորման, շրջանառության ծավալների ավելացման և ֆինանսավորման աղբյուրների ընդլայնման հետ: Բացի այդ, ՓՄՁ շատ սուբյեկտներ գործունեություն են իրականացնում ռիսկային ոլորտներում, առավել ցավագին են տանում շուկայական կոնյուկտուրայի փոփոխությունները, խիստ խոցելի են խոշոր բիզնեսի հետ մրցակցության պայմաններում: Այս ամենն, անշուշտ, պետության կողմից ՓՄՁ ոլորտի աջակցության անհրաժեշտություն են ստեղծում, որն, իր հերթին, հանդես է գալիս որպես պարտադիր պայման դրա բնականոն կենսագործունեության ապահովման համար: ՓՄՁ պետական աջակցությունն, ըստ էության, պետք է ուղղված լինի տվյալ ոլորտի սուբյեկտների կայացման, բնականոն գործունեության ապահովման և զարգացման համար բարենպաստ պայմանների ձևավորմանը: Հետևաբար, կարելի է պնդել, որ ՓՄՁ պետական աջակցությունը հանդիսանում է տնտեսության պետական կարգավորման կարևոր ուղղություններից:

3. Ինչպես և շատ երկրներում, Հայաստանի Հանրապետությունում ևս ՓՄՁ ոլորտին դասվելու հիմնական չափորոշիչներից է հանդիսանում աշխատողների թվաքանակը: Միաժամանակ, բացի նշված չափորոշիչից, ՓՄՁ սուբյեկտ հանդիսանալու համար նրանք պետք բավարարեն նաև օրենքով սահմանված հասույթի կամ ակտիվների հաշվեկշռային արժեքի չափորոշիչներին: Իրացման շրջանառության գծով չափորոշիչը մոտ 10 անգամ գիջում է ԵՄ անդամ պետություններում գործող չափորոշիչին: Այլ կերպ ասած, եթե Հայաստանի Հանրապետությունում միջին օրեկան 580 ԱՄՆ դոլար իրացման շրջանառություն ունեցող սուբյեկտն է համարվում գերփոքր ձեռնարկություն, ապա ԵՄ անդամ պետություններում դա կազմում է մոտ 6000 ԱՄՆ դոլար: Նշված հանգամանքը, փաստորեն, սահմանափակում է գերփոքր կազմակերպություն համարվելու

հնարավորությունները և տարբեր երկրների հետ համեմատական վերլուծություններ իրականացնելու համար անհրաժեշտ համադրելիություն չի ապահովում:

4. Վերջին տարիներին հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների թվաքանակն ունեցել է հիմնականում տատանողական բնույթ: Ինչ վերաբերում է ՓՄՁ պետական աջակցության ֆինանսավորման ծավալով պայմանավորված սուբյեկտների թվաքանակի փոփոխությանը, ապա կարելի է նկատել, որ այստեղ ընդհանուր օրինաչափություն գոյություն չունի: Այլ կերպ ասած, որոշակի կախվածություն չկա պետական ֆինանսավորման ծավալների և ձեռնարկությունների թվաքանակի փոփոխության միջև: Ընդ որում, հատկանշական է այն հանգամանքը, որ վերջին տարիներին պետական բյուջեից ՓՄՁ ոլորտին ցուցաբերվող ֆինանսական աջակցության չափը գրեթե չի փոխվել, ինչից ենթադրվում է, որ այն պլանավորվել է, ելնելով ոչ թե առկա խնդիրներից և դրանց լուծման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներից, այլ բյուջետային հնարավորություններից: Հանրապետությունում ՓՄՁ ոլորտը մասնակիորեն է իրականացնում իր հիմնական գործառույթներից մեկը՝ զբաղվածության ապահովումը, որը մի կողմից, վկայում է դրա զարգացման ցածր աստիճանի և առկա բազմաբնույթ հիմնախնդիրների, իսկ մյուս կողմից՝ վարվող պետական քաղաքականության և ցուցաբերվող աջակցության ցածր արդյունավետության մասին:

5. Հայաստանում ՓՄՁ ոլորտը դեռևս չի իրականացնում իր հիմնական գործառույթը և բավականաչափ համեստ դերակատարում ունի երկրի տնտեսական ու սոցիալական կյանքում: Հաշվի առնելով երկրի զարգացման գործում տվյալ ոլորտի ներուժային մեծ հնարավորությունները, կարելի է փաստել, որ մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, այն առարկայական կերպով չի նպաստում երկրի տնտեսության զարգացմանը և հասարակական բարեկեցության բարձրացմանը: Այս տեսանկյունից, նման վիճակը նաև հետևանք է ՓՄՁ ոլորտի պետական աջակցության համակարգի գործունեության ցածր արդյունավետության, ինչի պատճառով տնտեսավարող սուբյեկտները մեծ դժվարություններ ունեն տնտեսական գործունեության կազմակերպման և իրականացման առումով: :

6. Չնայած ՓՄՁ ոլորտի զարգացման գործում ֆինանսական ապահովվածության կարևորությանը, այդուհանդերձ, ՀՀ-ում ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը ոլորտի սուբյեկտների համար դեռևս շարունակում է մնալ որպես զարգացման լուրջ հիմնախնդիր: Նման իրավիճակում կարևոր նշանակություն է ստանում միկրոֆինանսավորումը, որն, ըստ էության, հիմնականում նախատեսված է ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական կարիքների բավարարման համար: Չունենալով բանկերի և վարկային այլ կազմակերպությունների ծառայություններից օգտվելու հնարավորություններ, միկրոֆինանսավորման միջոցով ՓՄՁ սուբյեկտները կարողանում են ապահովել սեփական տնտեսական գործունեության համար որոշակի ֆինանսական միջոցներ: Միկրոֆինանսավորման հիմնական առաձևահատկությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս սկսել տնտեսական գործունեություն առանց նախնական կապիտալի և վարկային պատմության առկայության: Թերևս դրա կարևորությունն անգնահատելի է հատկապես հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում, քանի որ ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը վարկային միջոցներ ձեռք բերելու գործուն հնարավորություններից զրկված է նախ և առաջ, գրավի առարկայի բացակայության պատճառով: Մինչդեռ, այն ՀՀ բանկային համակարգում վարկային միջոցների տրամադրման հիմնական պահանջներից մեկն է հանդիսանում:

7. Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի պետական աջակության քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ, չնայած արձանագրված որոշակի դրական տեղաշարժին, այդուհանդերձ, ոլորտի դերը դեռևս շարունակում մնալ փոքր տնտեսական զարգացման գործում: Պետության կողմից հատկացվող ոչ բավարար ուշադրությունը ՓՄՁ ոլորտի աջակցության և զարգացման խնդիրներին հնարավորություն չի տալիս ապահովել բարձր տնտեսական արդյունավետություն այն դեպքում, երբ տվյալ ոլորտն ի վիճակի է առանց մեկնարկային խոշորածավալ ֆինանսական ռեսուրսների նպաստել տնտեսության զարգացմանը և սոցիալ-տնտեսական բազմաբնույթ հիմնախնդիրների լուծմանը: Հանրապետությունում դեռևս շարունակում են գոյություն ունենալ մի շարք հիմնախնդիրներ, որոնք էականորեն սահմանափակում են ՓՄՁ ոլորտի զարգացումը:

8. Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի զարգացման առումով հատկապես լուրջ խոչընդոտ է հանդիսանում ֆինանսական ռեսուրսների դժվարամատչելիությունը և վարկային միջոցների անբավարարությունը: Ընդհանրապես, վարկավորման ոլորտում գոյություն ունեցող խնդիրները վերաբերում են ոչ միայն ֆինանսական միջոցների ձեռքբերմանը, այլ նաև դրանց սպասարկման և վերադարձման հետ կապված հարցերին: Նշված ինչպես նաև մի շարք այլ գործոններ մեծացնում են ՓՄՁ ոլորտի վարկավորման ռիսկայնությունը՝ հանգեցնելով համապատասխան սուբյեկտների գործունեության հնարավորությունների սահմանափակմանը: Գրավի առարկայի բացակայությունը, վարկային ոչ հուսալի պատմությունը շատ սուբյեկտների գրկում են փոխառու միջոցներ ձեռք բերելու հնարավորությունից: Իրավիճակն ավելի է բարդանում նաև հարկման պայմանների հետ կապված, որը շատ դեպքերում չհիմնավորված և չարդարացված ծանր հարկային բեռ է սահմանում ՓՄՁ ոլորտի համար այն դեպքում, երբ հարկման բարենպաստ պայմանների ապահովումը հոչակված է որպես տվյալ ոլորտի պետական աջակցության կարևոր ուղղություն: Գործունեության տարբեր տեսակների գծով տարբերակված ռեժիմների բացակայությունը և մի շարք այլ հիմնախնդիրներ նպաստում են ՓՄՁ սուբյեկտների կողմից ստվերային գործունեության ծավալների ընդլայնմանը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ՓՄՁ ոլորտը, բացի նշված հիմնախնդիրներից, իր վրա կրում է նաև այն գործոնների բացասական ազդեցությունը, որոնք բնութագրական են ընդհանուր ձեռնարկատիրության ոլորտին: Մասնավորապես, ներդրումային միջավայրի բարձր ռիսկայնությունը, բյուրոկրատական քաշքուկները, վերահսկողական կառույցների բազմազանությունը և նրանց վերապահված գործառույթների կրկնությունները, մրցակցային միջավայրի զարգացման ցածր մակարդակը և տնտեսության մենաշնորհացման խորացող միտումները իրենց հերթին լուրջ բարդություններ են ստեղծում ՓՄՁ ոլորտի զարգացման համար:

9. Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի զարգացման դինամիկան, ստեղծված իրավիճակը և երկրի մակրոտնտեսական ցուցանիշների ձևավորման գործում դրա ունեցած ավանդը հնարավորություն են տալիս առանձնացնել

բացասական զարգացումների հետևյալ մարտավարական և ռազմավարական պատճառները:

Մարտավարական պատճառներ

- ՓՄՁ ոլորտի վրա հարկային ճնշումը շարունակում է մնալ բարձր, չնայած վերջին տարիներին դրա թեթևացման ուղղությամբ իրականացվող քայլերին: Ֆինանսական ռեսուրսների բացակայության պայմաններում դա լուրջ խոչընդոտ է հանդիսանում ոլորտի սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնման համար,
- միկրոֆինանսավորման և ֆինանսական լիզինգի մասշտաբները չափազանց ցածր են դրանց նկատմամբ պահանջարկից, ինչը միկրոբիզնեսի խիստ ցածր կապիտալատարության պայմաններում լուրջ դժվարություններ է ստեղծում մեկնարկի փուլից զարգացման փուլի անցնելու համար,
- ՓՄՁ սուբյեկտների մուտքի դժվարությունները ֆոնդային շուկա և հանրային ընկերությունների վերածվելու մեխանիզմների բացակայությունը, բաժնետերերի թույլ իրավական պաշտպանվածության պայմաններում սահմանափակում են վենչուրային կապիտալի մուտք ՓՄՁ ոլորտ,
- գործնականում բացակայում են կամ շատ թույլ են զարգացած ՓՄՁ սուբյեկտների ստեղծումը խթանող հատուկ մեխանիզմները, իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների մեկնարկային աջակցությանը կողմնորոշված բիզնես ինկուբատորների գրեթե բացակայությունը հանգեցնում է ինովացիոն բիզնեսի համակարգային զարգացման հնարավորությունների վերացմանը,
- պետական և տեղական պատվերների տեղաբաշխման գործընթացին ՓՄՁ սուբյեկտների պարտադիր մասնակցությունն ապահովող մեխանիզմների բացակայությունը, ինչը վերջիններիս զրկում է պետական ֆինանսական միջոցների ձեռք բերման հնարավորությունից:

Ռազմավարական պատճառներ.

- ՓՄՁ սուբյեկտների համար ադմինիստրատիվ խոչընդոտների, հատկապես տեսչական ստուգումների լայն տարածումը,

- բիզնես գործընթացներում կոռուպցիոն դրսևորումների առկայությունը, ինչը շատ դեպքում ոլորտի սուբյեկտներին մղում է ստվերային գործունեության,
- ֆինանսական բազայի սահմանափակությունը: ՓՄՁ ոլորտի գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուր են հանդիսանում սեփական ռեսուրսները:
- ֆինանսական միջոցների սահմանափակությունը նվազեցնում է ՓՄՁ մրցունակությունն աշխատանքի և անշարժ գույքի շուկաներում: Որակավորված մասնագետների, ժամանակաից տեխնոլոգիաների և աշխատանքային պայմանների բացակայությունը բնութագրական են հանրապետությունում գործող ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասի համար,
- արտաքին ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը, ինչպես նաև ֆինանսական ապահովվածության ցածր մակարդակը հանգեցնում են ՓՄՁ ոլորտի ֆինանսատնտեսական ցուցանիշների վատթարացմանը և, որպես դրա հետևանք, մրցակցային հնարավորությունների անկմանը:
- ՓՄՁ աջակցության ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման անհամաչափությունը և ցածր տեմպերը, ինչը ենթադրում է գործող կառույցների արդյունավետության բարձրացում և ընդլայնում ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում,
- պետության և բիզնեսի փոխգործակցության արդյունավետ համակարգի բացակայությունը,
- «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում սահմանված խնդիրների գործնական լուծումն ապահովող մեխանիզմների անկատարությունը կամ բացակայությունը:

10. Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի գործունեության հիմնական խոչընդոտներից մեկը ռեսուրսային ապահովվածության ցածր մակարդակն է: Չնայած այն հանգամանքին, որ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով որպես պետական աջակցության հիմնական ուղղություններ են հռչակված նաև ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը, ինչպես նաև կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, այդուհանդերձ, հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների

ռեսուրսային ապահովվածության մակարդակը դեռևս չափազանց ցածր է: Այս տեսանկյունից, կարծում ենք, առաջիկա տարիներին հանրապետությունում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության ուղղությամբ մշակվող և իրականացվող քաղաքականությունը, նախ և առաջ, պետք է ուղղված լինի տվյալ ոլորտի սուբյեկտների ռեսուրսային ապահովվածության մակարդակի բարձրացմանը:

11. Հանրապետությունում գոյություն չունի հստակ, ամբողջական և լիարժեք վիճակագրություն ՓՄՁ ոլորտի սուբյեկտների, նրանց ֆինանսատնտեսական հիմնական ցուցանիշների, երկրի տնտեսական կյանքում ոլորտի ունեցած դերի և մասնակցության, ինչպես նաև ոլորտի հետ ուղղակիորեն առնչվող մի շարք այլ կարևոր տնտեսական գործընթացների վերաբերյալ: ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի պաշտոնական կայքերում, ինչպես նաև նրանց կողմից հրապարակվող փաստաթղթերում ևս համակարգված վիճակագրությունը կամ բացակայում է, կամ էլ ժամանակային առումով հին է և հնարավորություն չի տալիս ռեալ պատկերացում կազմել ՓՄՁ ոլորտի վիճակի վերաբերյալ: Իսկ առանց վերջինիս, կարծում ենք, ավելորդ է ունենալ որոշակի ակնկալիքներ ՓՄՁ պետական աջակցության հասցեականության և արդյունավետության վերաբերյալ: Այս առումով, հանրապետությունում պետք է իրավական հստակ պահանջներ սահմանվեն ՓՄՁ ոլորտի վերաբերյալ վիճակագրության և մոնիտորինգի անցկացման և դրանց արդյունքների հրապարակման պարբերականության վերաբերյալ:

12. ՀՀ-ում ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի ցածր արդյունավետությունը, մեր կարծիքով, պայմանավորված է մի շարք պատճառներով: Նախ և առաջ, ՓՄՁ աջակցության պետական ծրագրերում վերջնական նպատակների ոչ հստակ ձևակերպումը հնարավորություն չի տալիս դրանց ձեռքբերման նկատմամբ իրականացնել անհրաժեշտ վերահսկողություն: Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի, ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունն իրականացվում է տարեկան ծրագրով, որը մշակվում, հաստատվում և իրականացվում է կառավարության կողմից, իսկ կատարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ: Պետք է նշել, որ օրենքում բացակայում են ծրագրին

ներկայացվող պահանջները, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել դրա արդյունավետությունը, բացահայտել թերացումները և կատարել անհրաժեշտ ուղղորդումներ: Ակնկալվող արդյունքների բացակայության պայմաններում հնարավոր չէ գնահատել ծրագրի ռեսուրսային ապահովվածության մակարդակը, իսկ տարբեր մակարդակներում տարբեր ուղղություններով աջակցության ուղղությամբ իրականացվող միջոցառումների կոորդինացման մակարդակն էականորեն նվազում է: Մեր կարծիքով, ծրագրային միջոցառումները պետք է իրականացվեն հիմնախնդիրներ-լուծումներ-անհրաժեշտ ռեսուրսներ-ակնկալվող արդյունքներ մեկ ընդհանուր շղթայի շրջանակներում: Հակառակ պարագայում, ինչպես նաև ցույց է տալիս նախորդ տարիների փորձը, ՓՄՍ պետական աջակցության ծրագիրն իրենից կներկայացնի միջոցառումների ցանկ՝ առանց նպատակային և չափելի արդյունքների ներկայացման:

13. ՓՄՁ ոլորտի տնտեսական և կազմակերպական զարգացման մեխանիզմում կարևոր տեղ պետք է զբաղեցնի ծրագրային մոտեցումը: Ընդ որում, պետական աջակցության նպատակով բյուջետային և հարկային գործիքների, պետական պատվերների հետ միաժամանակ անհրաժեշտ է օգտագործել նաև գույքային գործիքները: Գաղտնիք չէ, որ ՓՄՁ շատ սուբյեկտներ սեփական տնտեսական գործունեության իրականացման նպատակով անհրաժեշտ գույք ստիպված են ձեռք բերել երկրորդային շուկայում, այդ նպատակով չունենալով պետական աջակցություն: Խնդիրն առավել քան հրատապ է Հայաստանի Հանրապետության պարագայում, պայմանավորված, մի կողմից, անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակով, և, մյուս կողմից, ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական ցածր հնարավորություններով: Այս առումով, կարծում ենք, որ ՓՄՁ սուբյեկտներին պետք է հնարավորություն տրվի օգտագործման իրավունքով ձեռք բերել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող և այդ նպատակով հատկացված գույքային ռեսուրսները, ինչը կարող է լինել պետական աջակցության արդյունավետ դրսևորում:

14. ՓՄՁ ոլորտի պետական աջակցության բարելավման, այդ թվում՝ նաև հարկային բարենպաստ քաղաքականության իրականացման առումով չափազանց կարևոր նշանակություն ունի տվյալ գործընթացի հասցեականության ապահովումը: Այս

առումով, անհրաժեշտ է մշակել և կիրառել չափորոշիչների միասնական համակարգ, որոնք հնարավորություն կտան հստակ կերպով առանձնացնել ՓՄՁ սուբյեկտներին: Պետք է նշել, որ հանրապետությունում ներկայումս գոյություն չունի ընդհանուր մոտեցում փոքր և միջին բիզնեսի և հարկման հատուկ ռեժիմներից օգտվող սուբյեկտների չափորոշիչների նկատմամբ, ինչը որոշակիորեն նվազեցնում է պետական աջակցության արդյունավետությունը: Չնայած հանրապետությունում գործում են հարկման հատուկ ռեժիմների մի քանի տեսակներ, սակայն դրանցից ոչ մեկը բացառապես ՓՄՁ ոլորտի համար նախատեսված չէ: Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի համար սահմանված հարկման հատուկ ռեժիմ չկա և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը, որպես ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղություն, չունի գործնական կիրառում: Հանրապետությունում գործող հարկման հատուկ ռեժիմներից լավագույն դեպքում օգտվում են միայն գերփոքր ձեռնարկությունների որոշակի մասը, ինչը չի կարող համարվել որպես ՓՄՁ պետական աջակցության լիարժեք դրսևորում::

15. Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի համար բարենպաստ հարկային քաղաքականության ռազմավարությունը, մեր կարծիքով, պետք է կազմված լինի երկու՝ կարճաժամկետ և երկարաժամկետ մասերից: Կարճաժամկետ հատվածում հարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի ՓՄՁ ոլորտի համար հարկման հատուկ ռեժիմի սահմանմանը՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում սահմանված չափորոշիչների կիրառմամբ: Այս կապակցությամբ, առաջարկում ենք օրենսդրորեն սահմանել սոցիալական բիզնես հասկացությունը՝ դրա որոշման հստակ չափորոշիչների ամրագրմամբ: Անհրաժեշտ է հստակ տարբերակում իրականացնել տնտեսական և սոցիալական գործառույթ իրականացնող ՓՄՁ սուբյեկտների (այս համատեքստում ՓՄՁ սուբյեկտների տակ նկատի են առնված գերփոքր ձեռնարկությունները) միջև: Սոցիալական գործառույթ իրականացնող սուբյեկտները չպետք է դիտարկվեն որպես պոտենցիալ հարկատուներ, քանի որ նրանց գործունեությունն ուղղված է և ընդամենը բավարար է միայն սոցիալական նշանակության խնդիրների լուծման համար: Երկարաժամկետ

հատվածում ՓՄՁ ոլորտի նկատմամբ իրականացվող հարկային քաղաքականությունը, մեր կարծիքով, պետք է հիմնված լինի պրոգրեսիվ հարկման մեխանիզմի վրա: Գործելով հարկման ընդհանուր ռեժիմում, ՓՄՁ սուբյեկտները պետք է հնարավորություն ստանան սահմանված պրոգրեսիայի միջոցով հարկվել առավել ցածր հարկային դրույքաչափերով: Ըստ էության, այս մեխանիզմը, մեր կարծիքով, հարկման տեսանկյունից առավել արդարացի է, հաշվի է առնում հարկ վճարողների և վճարունակությունը և սահմանափակում է եկամուտների ու շահույթի բևեռացման հնարավորությունները:

16. ՓՄՁ ոլորտի հարկման առումով պետք է կարևորել իրականացվող հարկային քաղաքականության կայունությունը և կանխատեսելիությունը, ինչը հանրապետությունում լուրջ հիմնախնդիր է հանդիսանում: Այս կապակցությամբ, առաջարկում ենք օրենսդրորեն սահմանել համապատասխան մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտա հարկ վճարողներին, կամավորության սկզբունքով, որոշակի ժամանակահատվածում (2-3 տարի), անկախ հարկային դրույքաչափերի, հարկման բազայի և վճարման ժամկետների փոփոխություններից, գործել գրանցման պահին սահմանված օրենսդրական դաշտի պահանջների շրջանակներում: Դա, մեր կարծիքով, պետության կողմից ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող ռեալ երաշխիք կլինի խաղի կանոնների կայունության կտրվածքով, ինչն, իր հերթին, հարկ վճարողներին հնարավորություն կտա արդյունավետ կերպով պլանավորել սեփական տնտեսական գործունեությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀ օրենքներ» նորմատիվային այլ ակտեր

1. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք: ՀՀՊՏ 2000.12.30/33(131):
2. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք: ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) :
3. «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք: ՀՀՊՏ 2012.12.28/66(940)
4. «Հարկերի մասին» ՀՀ օրենք: ՀՀՊՏ 1997.05.20/11:
5. «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենք: ՀՀՊՏ 2011.12.28/71(874)
6. Հայաստանի Հանրապետության օրենքը 2004 թվականի պետական բյուջի մասին:
7. Հայաստանի Հանրապետության օրենքը 2005 թվականի պետական բյուջի մասին:
8. Հայաստանի Հանրապետության օրենքը 2006 թվականի պետական բյուջի մասին:
9. Հայաստանի Հանրապետության օրենքը 2007 թվականի պետական բյուջի մասին:
10. Հայաստանի Հանրապետության օրենքը 2008 թվականի պետական բյուջի մասին:
11. Հայաստանի Հանրապետության օրենքը 2009 թվականի պետական բյուջի մասին:
12. Հայաստանի Հանրապետության օրենքը 2010 թվականի պետական բյուջի մասին:
13. Հայաստանի Հանրապետության օրենքը 2011 թվականի պետական բյուջի մասին:
14. Հայաստանի Հանրապետության օրենքը 2012 թվականի պետական բյուջի մասին:
15. Հայաստանի Հանրապետության օրենքը 2013 թվականի պետական բյուջի մասին:

16. Հայաստանի Հանրապետության օրենքը 2014 թվականի պետական բյուջի մասին:
17. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջի կատարման մասին տարեկան հաշվետվություն:
18. «Հաշվետվություն փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.», Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն:
19. «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2009թթ.», Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
20. «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2006-2008թթ.», Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
21. «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004-2005թթ.» Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն:
22. «Տեղեկագիր փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.» Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն:
23. Հաշվետվություն «Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2013-2015 թվականների ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ:
24. «Ռազմավարություն փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների» Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն:
25. Բարխուդարյան Ա.. «Փոքր և միջին ձեռներեցությունը որպես Հայաստանի տնտեսական զարգացման գործոն»: Տնտեսագիտության և տնտեսական քաղաքականության արդի հիմնախնդիրներ (գիտական հոդվածների ժողովածու). Երևան 1998թ.:
26. Բոստանջյան Վ., Թամազյան Ա. «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Հանրային կառավարում», Երևան 2005թ.:
27. Դանիելյան Ա. Ճոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կատարելագործման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում (ՀՀ

օրինակով): Ատենախոսություն տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Երևան, 2013 թ. 146 էջ:

28. Մկրտչյան Լ. «Փոքր բիզնեսի զարգացման խնդիրները և պայմանները Հայաստանի Հանրապետությունում»: Տնտեսագիտության և տնտեսական քաղաքականության արդի հիմնախնդիրներ (գիտական հոդվածների ժողովածու). Երևան 1998թ.:

Մասնագիտական գրքեր և հոդվածներ

29. Авилова а.,Голикова в. Государственная поддержка малого бизнеса на региональном уровне. Предпринимательство в России. N 3, 1997 г.

30. Акимов О. Малый и средний бизнес: Эволюция понятий, рыночная среда, проблемы развития. Финансы и статистика. М. 2003г. 192 стр.

31. Базулин А. Малый и средний бизнес как объект управления в условиях финансового кризиса. Вопросы предпринимательства. 2009г. №2

32. Блинов А.,Шапкин И. Малое предпринимательство: теория и практика. Дашков и К. М. 2003г. 335 стр.

33. Бондаренко В., Иоффе А., Нагих В.Основные характеристики систем государственно-общественной поддержки и развития малого и среднего предпринимательства зарубежных стран. Круглый стол «Инфраструктура поддержки и развития малого и среднего предпринимательства М.: 10 - 11 марта 2004г.http://www.allmedia.ru/content/document_r_E34E9BA8-7E35-49A1-A8F2-9D12A91E6D33.html

34. Бусыгин А. Предпринимательство. Основной курс: Учебник для вузов. Инфра-М. М. 1997г.609 стр.

35. Варакса Н. Трансформация систем налогообложения малого бизнеса в развитых странах. Управленческий учет. 2005 г. № 1.

36. ВдовенкоА. Малый бизнес–символ, но не конкурент. 2009г.
<http://tztver.ru/articles/detail/84>

37. Волочкова Н. Административные барьеры на пути развития малого бизнеса. Дело. М. 2010г. 80 стр.

38. Грибов В. Менеджмент в малом бизнесе. Финансы и статистика. М. 2002г. 144 стр.
39. Дорожная карта развития малого и среднего предпринимательства Республики Татарстан на период 2014-2016 годы. Казань. 2013г. 187 стр.
40. Долгорукова И. Малое предпринимательство в России. Формирование нового социального института. Научная Книга.М. 2007г. 156 стр.
41. Друкер П. Рынок: как выйти в лидеры. Практика и принципы. М. 1992г. 349 стр.
42. Дятченко Л. Малое предпринимательство в странах СНГ. М. 2007г. 508 стр.
43. Егоров А., Кузьмина Л., Юхименко И. Малое предпринимательство: институциональная эволюция в контексте мирового и российского опыта. Смоленск. 2005г. 299 стр.
44. Жорж Оливарес. Инструменты инвестиционной и технологической поддержки предпринимателей, работающих в Чили. <http://intech-tr.ru/>
45. Ибадова Л. Государственная финансово-кредитная поддержка малого бизнеса. Финансы и кредит. 2005г. № 16.
46. Ибадова Л. Финансирование и кредитование малого бизнеса в России: правовые аспекты. М. 2011г. 324 стр.
47. Исследование форм поддержки малого и среднего бизнеса в РФ и Томской области. Исследование рынка. 2014г. 203 стр.
48. Кочеврин Ю. Малый бизнес в США. Мысль.М. 1965г. 158 стр.
49. Колесникова Л. Предпринимательство и малый бизнес в современном государстве: управление развитием. Новый Логос. М. 2000г. 290 стр.
50. Колесников А., Колесникова Л. Малый и средний бизнес: эволюция понятий и проблема определения. Вопросы экономики, 1996. N 7.
51. Кузнецова З. Малое предпринимательство в странах с переходной экономикой: пути стимулирования. Проблемы теории и практики управления. 2007г. № 10
52. Лапуста М., Старостин Ю. Малое предпринимательство. Учебное пособие. Инфра-М.М.2002г. 150 стр.
53. Лапуста М. Предпринимательство. Инфра-М. М. 2008г. 608 стр.

54. Лебедева С. Регулирование и поддержка малого и среднего предпринимательства в ЕС и России. Менеджмент в России и за рубежом 2001г. N 1.
55. Либерникель В. Укрепление конкурентоспособности малых и средних предприятий на международных рынках. Проблемы теории и практики управления. 1997г. N 5
56. Лялин Е. и др. Развитие малого предпринимательства: отечественный и зарубежный опыт. Экономист. М. 2006г. 254 стр.
57. Малые предприятия: организация, экономика, учет, налоги. Под ред. В. Горфинкеля, В. Швандара. Юнити. М. 2001г. 357стр.
58. Малый бизнес в России. Под ред. Долгопятовой Т. М. 1998г. 352стр.
59. Малый бизнес в СНГ и Восточной Европе: трудности роста предпринимательства. Общ. ред. Авилова. А.М. 1997г. 392 стр.
60. Малый и средний бизнес в 2012 году: международный опыт регулирования и финансирования. МСП банк. Аналитический центр. М. 2013г. 69 стр. www.mspb.ru
61. Малое предпринимательство: организация, экономика, управление. Под ред. А. Шеремета. Инфра-М. М. 2009г. 479 стр.
62. Малое предпринимательство в России: прошлое, настоящее и будущее. Под общ. ред. Б. Ясина, А. Чепуренко, В. Буева. Фонд «Либеральная миссия». М. 2003 г. 220 стр.
63. Малый бизнес: организация, экономика, управление: учебник. Под ред. В. Горфинкеля. ЮНИТИ-ДАНА. М. 2007г. 495 стр.
64. Малый инновационный бизнес. Под ред. Горфинкель В., Попадюк Т. М. 2012г. 264 стр.
65. Меркушев А. Факторы и закономерности развития малого предпринимательства. Монография. ВГСХА Киров. 2005г. 232 стр.
66. МСП: Обзор специальных налоговых режимов. Опыт разных стран. Поддержка развития малого предпринимательства. СМЕРУС 9803. Тасис. 2000г. 17 стр.
67. Мордвинкин А.Н. Кредитование малого бизнеса: Практическое пособие. Инфра-М. М. 2015г. 316 стр.
68. Нестеренко Ю. Малый бизнес: тенденции и ориентиры развития в современной России. М. 2007г. 224 стр.

69. О состоянии малого и среднего предпринимательства в государствах-участниках СНГ(информационно-аналитический обзор) М. 2015 г. 170 стр.
70. Осипов Е. Институт социального партнерства как фактор развития малого бизнеса в России. Изд. МГУ М. 2012г. 208 стр.
71. Практические аспекты поддержки инноваций в зарубежных странах. МСП банк. Аналитический центр 2014г. 43 стр.
72. Предпринимательство. Под ред. В. Горфинкеля, Г. Поляка. Юнити-Дана.М. 2010г. 687 стр.
73. Поддержка развития предпринимательства в европе: приоритеты на будущее. Заключительный отчет.Послание европейской комиссии. Европейская комиссия,Брюссель, 1998г. 13 стр.
74. Развитие малого и среднего предпринимательства. Европейский опыт. МСП банк. Группа Внешэкономбанка. Аналитический центр. М. 2012г. 18 стр. www.mspbank.ru
75. Развитие малого и среднего предпринимательства. Сравнительный анализ российского и международного опыта. МСП банк. Группа Внешэкономбанка. Аналитический центр. М. 2013г. 15 стр. www.mspbank.ru
76. Российское обозрение малых и средних предприятий 2001. Тасис СМЕРУС 9803 Поддержка развития малого предпринимательства. Ресурсный центр малого предпринимательства. М. 2002г. 368 стр.
77. Рубе В. Малый бизнес: история, теория, практика. Теис.М. 2000 г. 232 стр.
78. Рубе В. Институциональные аспекты организации малого бизнеса в развитых странах и в России: Учеб. пособие. ИНФРА-М. М. 2004г. 78 стр.
79. Сабо А. Особенности развития предпринимательства и малых и средних предприятий в странах с переходной экономикой. М.1999г. <http://rcsme.ru/ru/library>
80. Свирческий В. Управление малым бизнесом. Инфра-М. М. 2012г. 256 стр.
81. Смирнов С. Малое предпринимательство: общественная поддержка и содействие развитию. М. 1999г. 352 стр.
82. Соколинская Н., Куприянова Л. Кредитование как важнейший фактор развития малого бизнеса в России. Изд. Кнорус. М. 2011г. 232 стр.

83. СуньЯнгХё. Инновационные меры в области малого и среднего бизнеса в Корее. <http://intech-tr.ru/>
84. Тэпман Л. Малый бизнес: опыт зарубежных стран. Юнити-Дана. М. 2004г. 287 стр.
85. Усачев Ю. Проблемы развития малого бизнеса в мировой экономике. Изд. Научная книга. М. 2009г. 148 стр.
86. Хучек М., Ходыйски А. Инновационность малых предприятий. Вестник МГУ. Экономика, 1997г. N 2
87. Широков Б. Финансовая среда предпринимательства: Учеб.-метод. пособие. Финансы и статистика. М. 2006г. 496 стр.
88. Шулус А. Становление системы поддержки малого предпринимательства в России. Российский экономический журнал. 1997г. N 5-6, 7
89. Шуклов Л. Финансовый менеджмент в условиях кризиса: Опыт компаний малого и среднего бизнеса . Изд.Либроком. М. 2010г. 240 стр.
90. Ястриб А. Кредитные риски малого и среднего бизнеса. Журнал «Банковское дело в Москве» 1999г. N 12.
91. Small Business Sourcebook. The 8-ht Edition. Kathleen E. Maki (Ed.) Gale Research Inc. 1995. Vol. MI
92. Aannual report on european smes 2013/2014. Final Report. European Commission124 p.
93. Annual report on european smes 2012/2013. Final Report. European Commission. 99 p.
94. Aannual report on european smes 2014/2015. European Commission 159 p.
95. DoingBusiness 2017. <http://www.doingbusiness.org>
96. European Small Business Finance Outlook. Helmut Kraemer-Eis, Frank Lang, Salome Gvetadze. EIF Research & Market Analysis. Working Paper 2014/24. 92 p.
97. Financing SMEsand Entrepreneurs2015. An OECD Scoreboa rd. www.oecd.org. 407 p.
98. <http://smednc.am> Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի պաշտոնական ինտերնետային էջ
99. www.cba.am Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային էջ

100. <http://www.mineconomy.am> Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական ինտերնետային էջ
101. <http://smeinvest.am> «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության պաշտոնական ինտերնետային էջ